



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1696

171  
—  
U-92

1878



010

0.200

191  
4.895

ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄ

ԸՆԴԴԷՄ ԵՍՈՒԹԵԱՆ

ԵՒ

ԽՉԶՆԴՈՏԳ

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԴԻՄՈՒԹԵԱՆ

ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Յ. ԱՐՇԱԻԻՔ



ԿՈՍՏԱՆՆՆՈՒԹՎԻՍ

1878

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՍՏԱՆՆՆՈՒԹՅԱՆ  
ՊՐԻՆ. ԿԱԶՄԱՏՈՒՄ  
ՀԻՄ. & ՕՒՐԱ  
Ս. Ա. ՄԱՇԻՆՔԻԱՆ  
ԿՈՍՏԱՆՆՈՒԹՅԱՆ

1007  
30998

3196



« Հա՛յ, աջերդ բաց, տե՛ս, ի՞նչ մնաց » :

## Սիրելի Ազգս

Բարեւ

Երկար ատեն կը փափաքէի մի այնպիսի գիրք ձօնել քեզ որ խօսէր եւ բացատրէր ի՞նչ բանի որ պէտք ունիս, ի՞նչ որ ընել պարտաւոր ես եւ ի՞նչ բանէ որ խորշիլ հարկ է քեզ :

Կուզէի որ սիրելի Ազգս, դու այս գիրքի մէջ հայելոյ պէս աչքիդ առջեւ տեսնէիր վաղուց ի վեր մեր ազգութեան մարմնոյն վրա երեւան ելած արգելաւթիւնները եւ մանաւանդ այն վերքերը որ զայն ժամտախտի պէս մահացունել կըսպառնան :

Իրաւի առջի ժամանակներ երբ Հայաստանի հողոյն վրա ամենս ալ դեռ ամիտի կապրէինք, երբ իշխանութեան ճրագը մերթ լուսաւոր եւ մերթ խաւար, բայց մեր գլխուն վերեւ անշէջ կը վառէր, այն ատեններ ալ, իրաւ արդի տգեղ ունակութիւններն ունէինք, այլ անոնցմէ աւելի գեղեցիկ սովորութիւններ եւ զգացում :

Բայց հիմա մի քանի աննշմարելի գեղեցկութեանց հետ շատ տգեղութիւններ երեւցան մեր ազգութեան մարմնոյն վրա . թող այն տգեղութիւններն որ առջի ժամանակներէ եւ առջի մարդերէ իբր ժառանգ մեզ ալ կարծես աւանդւեր են :

Կուզէի որ սիրելի Հայ ազգ, քեզ ընծայւած այս գիրքի մէջ մի առ մի բացատրէի այս կէտերը, մի առ մի ցոյց տայի այն արգելքները որ խափանե-



ին ց'այժմ քո առաջդիմական քայլեր , կուղէի որ պատմութեան լատեր ի ձեռին ունէինք այն սէրը , այն զգացումը , այն քաջութիւնը զոր ատենով ունեցեր են մեր նախնի զիւցազններէ շատերն որպէս եւ նախնի հայրապետներ :

Վիտէի ալ որ բաւ չէր միայն անցեալ փառաց յիշատակութիւնն , անցեալը ներկային քով բերել , նախնի մարդերը նորերու հետ ի կշիռ առնել , բազմատեղ հարկ է , որով կը հասկացուի թէ ինչ բաներով կը կործանի մի ժողովուրդ եւ ինչ բաներով կը փառաւորուի :

Ահա այս խնդիրներն էին սիրելի Ազգս , զոր ես երկար ատեն կուղէի գրել , բայց մի բան միայն կը խրատեցունէր աչքս թէ արդեօք իմ խօսքերս Ազգին մէջ պիտի տարածուէին եւ արդիւնաւոր պիտի լինէին թէ ոչ որպէս ԱՍՅՆ ԲԱՐԲԱՌՈՅ ԱՆԱՊԱՍԻ մոռացման կամ անհոգութեան ձեռքը պիտի մատնուէին : Արդեօք իմ գիրք լոկ զբօսանաց եւ ժամանակ անցունելու համար պիտի կարգացէր եւ յետոյ մի անկիւն նետուած՝ փռչիւնելու մէջ ցեցակեր պիտի լինէր , թէ ոչ՝ ժողովուրդն իմ Հայութիւն , պիտի զարթեր իւր դարաւոր քնածութենէն , պիտի թոթուէր իւր թմբութիւնը եւ ժամանակի պէտքն ինչ որ է , ինչ որ գիրքն իւր օգտին համար կը խօսի , պիտի շահաւորէր զանոնք :

Այս կէտի վրա տարակոյսն առ ժամս զարթեցաւ մտքիս մէջ , եւ քանի որ անկարող էի ջրել զայն , գրիչս ալ յառաջ չէր երթար եւ իմ նպատակ օր քան զօր ետ կը մնար . միւս կողմէ ալ կը մտնէի տուներու մէջ , ժողովներու մէջ , հանդէսներու մէջ , ամեն դի կը շրջէի , կը տեսնէի իմ ազգակիցներու

մեծ մասին վիճակը , նոր տղեղութիւններ , նոր վերքեր եւ արտասուելի դէպքեր աչքիս առջեւ կը գային եւ մտքս առջինէն աւելի կը սոսկացունէին :

Եւ գլուխս կախ , տրտում , տխուր շրջելով կըսէի ինքնին . այս ընթաց մի օր անշուշտ պիտի դաճալի՞մէ զմեզ մի անել փոսի մէջ , աշխարհ պիտի տեսնէ եղածը եւ պիտի մեղադրէ զանոնք որ այս անկաման փոսը պարտաւոր էին ցոյց տալ , բայց անխոյժ կեցան :

Այս մեղադրանաց մէջ ես ալ որպէս մի նկուն եւ յետոյ գրագէտ , բաժին կրնայի ունենալ :

Ուստի տարակոյսներս ինչ հեռացուցի , սիրտս զօրացուցի յուսով եւ քաջալերութեամբ եւ իմ նպատակ 'ի գործ դնելու համար բոլոր սրտով գրիչս ձեռք առի :

Ուրեմն դ'ու իսկ , Հայ ժողովուրդ , կաղաչեմ , թէ որ պէտք է աղաչել , դ'ու իսկ զարթիր քո անտարբերութեան քունէն , ձգէ պաղարիւն անհողութիւնդ եւ ամեն ձեր , երիտասարդ , պատանի , թէ զրագէտ եւ թէ քաղաքագէտ , թէ արհեստաւոր եւ թէ կզեր , ձեռք ձեռքի տըւած մի պատերազմ մը զենք խուրթեան դէմ , եւ այն ամենի արդեւքներու դէմ , որ յառաջդիմութենէ ետ կը թողուն զմեզ եւ մեր առջեւ կը բանան կորստեան անաւոր անդունդը :

Այս , եկէք դուք , որոց երակներուն մէջ դես Հայկական արիւնն կը յեղաշրջի , եկէք միանամք նոր ոգիով , մեր բոլոր զօրութեամբ մաքստիմք ազգային յառաջդիմութեան արդեւքներուն դէմ , եւ մեր հինօրեայ փլած եւ տարտղնած տունը , մեր սիրուն Հայաստանը թէ կարող ալ չը լինիմք նորի իւր նախնի զեղեցկութեամբ , բայց գոնէ ազատեմք զայն մի ամօթով լի կործանումէ :



Եւ յայնժամ ապագայ սերունդներ թնդ օրհ-  
 նեն մեր հզօր ճիգեր եւ վայելելով նոցա պտուղը՝ ուս-  
 նին թէ որպէս պէտք է պատերազմիլ մյն մուս-  
 թեանց դէմ զոր կը նշանակեմ այս գիրքի մէջ:



ՊԱՏԵՐԱԶՄ

ԸՆԴԴԷՄ ԵՍՈՒԹԵԱՆ

Ա.

Եսութիւն. անն մի սոսկալի բառ, որ կը նը-  
 շանակէ ազգիւրն եւ ծագումն այն ամեն մուսթեանց  
 որ ազգաց կործանում կը պատճառեն:

Արհամարհել հայրենիքը եւ լքել նորա հողա-  
 ծութիւնը, փախիլ մյն պարտաւորութիւններէ զոր  
 Ազգի շահերն կը գնեն մի էակի վրա, անփոյթ նըն-  
 ջել եւ յօրանջել երբ ժամանակի պէտքն սթափիլ  
 եւ գործել կը պահանջէ, մոռնալ ծնողական երախ-  
 տիքներն եւ բարերարութեան յիշատակներն եւ  
 անճնական հանդիստէ դատ ուրիշ բան չը հողալ,  
 անկեալին կից զարնել փոխան ձեռք կարկառելու,  
 ատել փոխան սիրելու, սնիծել փոխան օրհնելու,  
 զրկել երբ պէտք է օգնել, հարուածել ընկերը երբ  
 պէտք է գղւել դայն, շողոքորդել անարգ կեղծա-  
 ւորութեամբ երբ պէտք է խրատել եւ յանդիմանել  
 անկեղծաբար, աշխատութիւն եւ քիբո խնայել ազ-  
 գակիցներէ, իսկ անճնական զբօսանքի համար ամ-  
 բողջ օրեր գոհել, մի պատառ հաց զլանալ աղքա-  
 տէն, բայց կերուխումի համար դանձեր վաանել,  
 աղքատի դանձանակէն 10 փարան խնայել, բայց  
 զրամախազի (հոսճօր) սեղանին վրա ափերով ոսկի



լցունել, անհատական փուճ կռիւներով, սխալա-  
 լութիւնով եւ վրէժխնդրութիւնով պարապիլ երբ  
 թշնամին կըսպանայ հայրենեաց, փառաց եւ պա-  
 սուոց ստուերով կուրացած վաճառել օտարին ինչ  
 որ Աղբի կը վերաբերի, անարգ մետաղի համար  
 խեղդել առաքինական վսե՛զ գլացումներն, ի հա-  
 խանձ վառիլ ընկերին յաջողութեանց վրա, կծու  
 խօսքերով եւ անիրաւ յարձակումներով վիրաւորել  
 այն անխիւ սիրտեր որ անձնուիրաբար կ'աշխատին  
 ազգային օգտի համար, անխղճաբար վհատեցնել  
 այն ազգասէրներն որ խիզճով կը տքնին եւ կ'աշ-  
 խատին ի շահ հայրենեաց . . . Պ՛հ, ինչ են սոցա  
 ամենն եթէ ոչ Յսութեան դառն պտուղներ . ս՛հ  
 ինչ անհատում տղեղութիւններ, աղէտներ եւ վեր-  
 քեր կան դեռ որ Յսութեան երեսէն քաշած է եւ  
 կը քաշէ այս խեղճ եւ զրուեալ Ազգը :

Բ.

Թղթատելով ազգային Պատիւթիւնը եւ մը-  
 տովի թախանցելով անցեալ դարուց կենցաղին մէջ,  
 կը տեսնենք զի վաղեմի ժամանակներէ ի վեր այս  
 չարաշուք Յսութիւն երկաթեաց ձեռքի պէս ծան-  
 րացած է մեր վրա :

Աւանդ, Յսութիւն եւ սորա անթիւ տրամա-  
 կաններ, որպէս են Հայրենաստեղութիւն, Անմիտ-  
 թիւն, Փառամոլութիւն, Անտարբերութիւն, Անձ-  
 նասիրութիւն, Վհատութիւն, բոլոր այս եւ այս-  
 պիտի ազիտալի մտլութիւններ քանզ ու աւեր դար-  
 ձուցին մեր ազգային տունը, տարտգնեցին Հայաս-

տանը, պժգալի բնութիւններ, ամենը ձեռք ձեռ-  
 քի տըւած՝ կրծեցին մեր ողին, սպառեցին մեր ու-  
 ժը, վատ եւ տկար թողուցին զմեզ :

Երբ ազգօգուտ եւ գեղեցիկ ձեռնարկներ աշ-  
 խատիլ հրաւիրած են զմեզ, երբ թշնամոյն սուրը  
 հայրենեաց փոսնգիլ սպառնալով հարկ եղած է մեզ  
 նետել ի դաշտ պատերազմի, երբ ազգային շահեր  
 պարտաւորած են զո՛նել մեր անձի փառքերն եւ այլ  
 շատ դժնդակ պարագայից մէջ՝ անարգ Յսութիւն  
 մոռացուցած է մեր պարտաւորութիւններն եւ յա-  
 ճախ ըսել տըւած է մեզ . Ինչ՞-ս պէտ է :

Յսութիւն մի անյազ սրտի պէս եռալով մեր  
 սրտից մէջ հալ ու մաշ ըրած է մեր կորովի կազը-  
 եւ սա ազգասէր գլացումը թելադրած եւ զրգոած  
 է Հայկեան սրտից խորերէն . Ինչ՞-ս պէտ է :

Ինչո՞ւս պէտք է, այս եսական գլացումն է որ  
 բարենպատակ դործերէ արգիլած եւ ետ մղած է  
 զմեզ շարունակ : Այս գլացումն է որ անգոսնել եւ  
 ընդոսնել տուած է մեզ ամեն սրբազան պարտիք :

Եւ դարձեալ այս գլացումն է որ տրամադրած  
 է զմեզ խորհիլ այսպէս : Ես լինիմ մեծ . իմ խօսքս  
 տիրապետէ . ես կառավարեմ ժողովուրդը :

Եւ այսպիսի անարգ ու փառամոլ գլացումնե-  
 րով մեր ժամանակաւոր հանգիստը ապահովել տըը-  
 նած եւ մոռցած եմք Ազգն ու Հայրենիքը :

Մեր եսական փափաքները գոհացունելու հա-  
 մար ուղած եմք իշխանական ազդեցութիւն տարա-  
 ձել իրարու վրա, եւ այս իշխանասիրութեամբ մո-  
 լորւած, ամեն վատ միջոցներ ի գործ դըւած են թէ  
 հայրենեաց եւ թէ՛ նոյն իսկ արժանապատուութեան  
 դէմ :



Եթէ նախանձ եւ ատելութիւն ստէպ մրտաւած են Հայկական ճակատներն, եթէ մեր արաքըն թըշնամիներ զօրացած են մեր ներքին երկպառակութիւններով, եթէ երկու երեք Հայ իրարի համամիտ եւ կարծեկից ընել անհար եղած է, եթէ գեղեցիկ գործերու համար իսկոյն բորբոքել եւ իսկոյն շիջանիլ բնական եղած է մեզ, ինչ է գլխաւոր պատճառ եթէ ոչ Եսութիւն եւ եսութեան հետեւանք եղող սն ցուրտ խօսքը . ինչո՞ւս պէտք է :

Ինչո՞ւս պէտք է . այսպէս պիտի խօսին միշտ բո շուրթեր ո՞ Հայ . դու չես խորհիր որ այս եսական ցուրտ խօսքով սրտիդ մէջ կը ցամբեցունես հայրենեաց սէրն՝ որ բովանդակութիւնն է ընտիր ընտիր զգացմանց, անմահ վառաց եւ առաքինութեան :

Երբ մի մարդ չը յարգեր հայրենիքը եւ նորա սէրը, երբ նա չը խորշիր նմա դէմ ատելութիւն եւ եսական անտարբերութիւն անուցնելէ, երբ իւր վառաց եւ իշխանութեան համար առաջուր կընէ Ազգ եւ Կրօն, Իրաւունք եւ Պատիւ, եւ կընէ ցըրտութեամբ, ինչո՞ւս պէտք է . ո՞ն, ալ ինչ մարդկութիւն կը մնայ նորա վրա :

Ի՞նչ է մի այսպիսի մարդու բաժինը . — Ենի՞ծից գառն յիշատակ կամ մի անարդ եւ անշուք մահ :

Տես, անա պատմութիւն անցեալ գիպուածոց եւ արկածից հաւատարիմ աւանդւածս այն բազմադարեան ծերունին, տես, քանի՞ իշխաններ, թագաւորներ կամ վեհապետներ կը ներկայէ մեզ որ եսական փառամոլութեամբ, հեշտութեամբ եւ մեծամտութեամբ կորչեցան նուաստաբար :

Յիշե՛ք հոս շատ դէպքերու մէջէ մէկը միայն, որ մեր նիւթի հետ ալ կարի յոյժ վերաբերութիւն ունի . Վարդանանց պատերազմն, ոյր յիշատակ ցանկալի քաջութեան պատկերին հետ Եսութեան պժգալի երեւոյթն եւ հետեւութիւնն ալ կը գծէ մեր միաքին մէջ :

Ո՞ն, տեսէք ինչ մեծ յաղթանակ կատարեցաւ անմահ քաջերու ձեռքով :

Գ.

Մի առաւօտ էր :

Արեւը հօրիգօծէն վեր բարձրանալով յերկիր կը սփռէր իւր ոսկի ճառագայթները :

Գիշերային արհաւիրքներն կը փախչէին, խաւար բնութիւնն արեւի լոյսով կը փարատուէր :

Պայծառ էր երկինքի կամարն . դարունի ծաղիկներով շքեղցած էր երկիր . Տղմուա, Եփրատ, Տիգրիս ու Երատիս խոտովալով կը թաւալէին իւրեանց վճիռ ջուրեր . համայն բնութիւն մի քաղցր ներդաշնակութիւնով կը դգւէր Հայաստանը :

Սակայն այն առաւօտ ոչ բլուրներու վրա հովիւներն կ'երգէին, ոչ մշակն արտերու մէջ իւր արօր կը վարէր, եւ ոչ մարդարօտին մէջ ոչխարներու մայիւնն կը լաւէր :

Թռչուններն չէին ճուռողեր, չէին երգեր բնութեան ալելուս, եւ չէին կամեր կարծես օդի մէջ իւրեանց բեւբաւոր ելեւէջներով գարունն չէնցունել :

Բոլոր Հայաստան սուգի մէջ կ'երևուէր, բոլոր



դաշտեր՝ սարեր եւ հովիտներ սոսկում պատած էին .  
Աւարայրի դաշտէն խառնիխուռն աղաղակներ կ'ել-  
նէին . մահադէնի շառաչիւններ , շիտթ ձայներ ,  
փողերու որոտումներ , ամենն իրարու խառնըւած՝  
լեռներն կը թնդացունէին եւ ահարկու արձագանդ-  
ներ կը հանէին :

Ի՞նչ պիտի նշանակէր այս սեւսարան . ո՞վ էին  
նոքա՝ որ երկրի խաղաղութիւնն կը դրդէին , առ  
լինչ էին այդ հրեղէն պատրաստութիւններ :

— Ո՛հ , Հայրենիք փրկելու , ամբարիշտ բա-  
զուկներ ջախջախելու համար էր որ Հայկեան քա-  
ջեր հողուով մարմնով զօրացած հալածօղիներու դէմ  
կը պատրաստուէին . ամենն ալ մահուան դէմ կը  
վազէին , ամենն մի խորհուրդ , մի սիրտ , մի կամօք :

Նոքա դիւցազնի որդիներ էին . աչեր ունէին  
հրայայտ , սիրտեր՝ վառվառն եւ ճակատներ՝ բաց  
եւ արի :

Նոցա դիմաց վրա չէր երեւէր արտմութիւն ,  
քանզի գիտէին թէ պիտի յաղթեն :

Գիտէին թէ ս՛չ ի դուր պիտի ցայտէր Հայ ե-  
րակներու արիւնն :

Գիտէին թէ անվախ քաջութիւնն ճշմարիտ  
անմահութիւն է :

Աղաւտութեան զինուորներ՝ մեռնիլ կ'երթա-  
յին , անմահութիւնը գրկելու համար :

Հայաստանի շահատակներ՝ մեռնիլ կ'երթային ,  
զի պօշման մնայ Հայութիւն :

Խաչի դրօշակիրներ՝ մեռնիլ կ'երթային , որպէս  
զի անշարժ պահուի Նկեղեցին :

Հաւատարիմ մշակներ եւ անձուէր կտրիճներ  
մեռնիլ կերթային , զի հայրենեաց զբւցազնական

յաղթութիւններ եւ քաջերով պանծալի փառքեր  
չ'աղօտանան եւ չը մարլին . . .

Եւ Հայաստանի փախկասուն սիկիւններ կար-  
ծես իւրեանց փախուկ շուրթերով յեղյեղէին սա  
ցանկալի բառերն :

ՕՐՀՆԵԱՒԼ ԼԻՆԻՆ ՆՈՒՄ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱ-  
ՄԱՐ ՄԵՌՆԻԼ ԿԵՐԹԱՅԻՆ :

Դ.

Այո՛ , ամէնն ալ քաջ եւ կտրիճ էին , Վար-  
դան եւ իւր զինակիցներ :

Ամենու սրտին մէջ ալ մի հուր կը բորբոքէր :  
Հայրենեաց սէրն էր այն հուր , որ տկար բա-  
զուկներն կը զօրացունէ եւ վախկոտ սիրտերու քա-  
ջութիւն կը տայ :

Հայրենեաց սէրն է , որ խնդում եւ հանդիստ  
մերժել կը տայ եւ մի աննման անձնուրացութեամբ  
կեանքն իսկ արհամարհելի կ'ընծայէ :

Բայց աւանդ , հաղիւ սկսայ հայրենեաց համար  
մարտնչող քաջերու յիշատակը երգել , եւ անա Ն-  
սութիւն իւր մրտտ ճակատով կը կանգնի այստեղ :

Քանզի այդ հարազատ կտրիճներու հետ Հայ-  
րենիք մայրասպան որդիներ ալ ունէր , որոց պա-  
րազլուխ էր մի Վասակ փառամոլ , յաւիտենական  
կեղա Հայ անուան :

Վասակ , որ մի Հայ էր արիւնով , մի ուրացող  
եղաւ արեւ տեսներու անարժան :

Ահա՛ ետութեան զործած ահուելի նախճիրն ,  
որ Վասակի անձին վրա կ'երեւէր յայնժամ :



Երբ Հայկական խումբերն հայրենի դատին համար նահատակիլ կը տենչային, Վասակ ալ կը հրահանդէր թշնամեոյ բանակն, եւ Հայաստանը կը մտանէր նոցա :

Եսութիւն Եսութիւն, որ կը թելադրէր Վասակին գործել այս ոճերն :

Ոսկի, հանդիստ, փանք, համբաւ. Է՛հ պաշտելի բաներ, ո՞նչը փնտուեր, այնպէս չէ՛, Վասակ. բայց դու փառաց մուրացկան, անձիզ օգտին համար կը քակէիր Աղղիդ տունն եւ օտարի ձեռքով ւորիլ կ'երազէիր :

Ո՛վ թշուառ, չէ՛ր յիշեր թէ մի Հայ ես եւ մի նախարար, չէ՛ր յիշեր թէ քո Աղղ տանհարելով զինքդ կ'ոտնհարես, չէ՛ր յիշեր թէ ի պահանջել հարկին կեանքդ ալ Աղղին գոհել պարտաւոր էիր : Մի բան՝ չէ՛ր յիշեր թէ մի իշխանի փառքն հայրենի ասպարէզի մէջ միայն կը փայլի եւ եթէ մի մաս միայն իրաւունք ունէիր հանդիստդ փնտուելու, տասպատիկ աւելի պարտաւոր էիր փոխարինել զայն ազգային օգտի — :

Մեղապանութիւն անյուշութիւն, աղլաւեր մոռացում կամ լաւ եւս է ասել՝ Եսութեան ազիտալի՛ պըտուղներ՝ զոր ազգի հետ միասին ճաշակեց նաեւ ինք Վասակ :

Քանզի ապագայ սերունդներ անէծքով կը փոխարինեն հայրենատեացներու ոճերն, ստեղծմով կը յիշեն նոցա անունն եւ կը քրթմնջեն :

ԱՆԻԾԵԱՒ, ԼԻՆԻՆ ՆՈՒՄ՝ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ԳԷՄ ԿՐ ՄԱՐՏՆԵՒԵՆ :



Թողով Վասակն իւր ետական ձգտումներու յիշատակին մէջ, շարունակեմք մեր պատմութեան թեկն :

Հայկեան եւ սլաւոնական բանակներ երկու կողմէ կը տեսնեն իւրեանց պատրաստութիւններ եւ վերջապատերազմի ազդարար նշանն կը տրւի. փողերն որոտաղին կը հնչեն Աւարայրի դաշտին մէջ Տղմուտ գետի եզերաց վրա :

Կռիւի առնեն էր. այս կռիւով պիտի շահէր մի ամենատուրք ԻՐԱՆԻՍՏՅՐ, հայրենեաց աշատութիւնն :

Արիւններ պիտի թափուէին. զոհեր պիտի անկնէին, մարդկային գլուխներ ջարդուբուրդ պիտի գային, որպէս զի հայրենի եկեղեցին կանգնի՛ յաղթական եւ մի անաղօտ փառքով պանծայ Հայաստան :

Կռիւի առնեն էր եւ անս ի հեռուստ աւազի պէս մի բաղմութիւն կը դար. թշնամին էր այդ. կատղած փիղերու եւ դազաններու հետ խառն. երկինք եւ երկիր չփոթեր էին նոցա յարուցած փոշիով. կը գոռային, կը փրփրէին իբրեւ լափելու համար իւրեանց առջեւ անկողն. իւրեանց սուրեր եւ նիզակներ մերկացուցած՝ շողացունելով կը վազէին դէպ Աւարայր : Սուրերու փայլումն կը խափանէր արեւի լոյսն. դրահի շոռաջումներով եւ վահանի կոթիւններով լեռերն կը թնդային եւ անարկու ձայներ կ'էնէին :

1007  
1007



Ի՞նչ բան էր որ այսպիսի յուզում կը պատճառէր մարդկային ազդի մէջ .

— Եսութիւն , դարձեալ Եսութիւն, Յազկերտ արքայի ետական կամքն ու փափաքն . . . :

Բայց ո՞ւր էր թէ թշնամին միայն Պարսիկն լինէր . ո՞նչ , օտարէ թելադրուած ներքին թշնամիներ . եսութեան փնտ ծնունդներ ալ կային :

Վասակի հետ հաղաբաւոր ամպարիչտ Հայեր միացեր էին . սեւ ճակատներ , որ խաչի դրօշին գէտի իւրեանց եղբարց դէմ կը շարէէին լրբօրէն . կը մերկացունէին սուրերն եւ Հայերն ու դէմ կը շարէէին իւրեանց Հայ բազուկներ :

Հայերն սակայն չը ստակացին այս մասնիչներէ :

Վարդան՝ անձնուիրութեան ցանկալի օրինակ , այս քաջ դօրապետ՝ որ վաթսուն վեց հազար քաջերու գլուխ անցած էր , կրակ ու բոց կտրած կը ցատկէ կէտէ իւր ճերմակի վրա եւ մի փետ գոռու գութեամբ գլուխն կ'օրէ որպէս թէ ըսել ուզէր . Այսօր մեր արիւննով պիտի բարձրանայ Հայութիւն եւ պիտի ընկճի Եսութիւն :

Յետոյ գառնալով իւր քաջերուն՝ կը գոռայ . « Յառաջ եկէք իմ քաջ զինակիցներ . յառաջ մօտեցէք արիապէս եւ տեսնեն այս կատաղի գունդեր որ իւրեանց բազմութեամբ կրնան փոխցունել մեր աչերն , տեսնեն թէ Հայերն թէեւ քիչուօր , բայց սրպէս կը կուէին ամպարիչաներու դէմ , առաջ վազեցէք , ջնջեալք մեր թշնամի գունդերն , որ կ'անարդեն Արարիչն եւ իբր Աստուած կը պաշտեն հուրը եւ , իւրեանց այս մոլորութեան ետեւէ քչել տանիլ կուզեն Հայաստանն ալ . անխնայ հարուածեմք անց վատորդիներն , որ մեր ազատ կրօն եւ

Հայութիւն բնաջինջ ընել կըսպանան . Ձեր սիրտերն , իմ քաջ զինակիցներ , ձեր սիրտերն պիտի հանդուրժեն երբ տեսնէք մեր կրօնի փետ փառքն կոստուններու պիղծ զոհերով մթնցած , ճն , հապա , յառաջ վաղեմք , յառաջ դէպ ի թշնամին , մեր սուրբ Խաչ մեղ ապաւէն եւ պաշտպան եւ Ղեւոնդեանց աղօթքն մեղ օգնական՝ կուսիք եւ մեռնիմք քաջապէս » :

Այս խօսքերն մենջեց . մտրակեց երկվարն . թռաւ թշնամոյ բանակին մէջ :

Վարդանի հրաւերին բոլոր բանակն արձագանդ արւաւ :

Վարդանի հետեւեցան իւր զինակիցներ . Նորա հետ արշաւեցին Վահան , Հմայեակ , Տաճատ , Արտէն , Արտակ , Խորէն , Ներսէն եւ Գարեգլին նախարարներն . ամենն ալ իւրեանց գունդերով յարձակեցան թշնամոյն դէմ :

Մի բան՝ Հայրենիք հոն միացեր էր Պարսիկ ազդի յանդգնութիւնն հարուածելու եւ երկնից վըրէժն լուծելու համար :

Նիղակներն օդին մէջ կը ճօճէին , սուրերն կը շողային , աղեղներու ճայթիւնէն , գրաններու շառաչումէն եւ կուօղներու ահաւոր աղաղակներէն լեռերն կը թնդային , գէնքերու բազմութիւնն կը ցոլար որպէս արեւի ճաճանչներն :

Բաւական երկար տեսեց այս կռիւ . քանզի քաջերու հետ միայն քաջեր չէին , այլ գազաններ ալ զոր յարուցեր էին Պարսիկներ եւ քիչուօր Հայերու դէմ կը կուէին անհարկն շատութիւնով . բայց երկու կողմն ալ անքան վիրաւորներ եւ մեռեալներ ունեւաւ :



Քանիններ կ'անկնին զիտապատ, կը փուխն արեան ջերմ ճապարկներու մէջ, դաշտերն կը ծածկին անշունչ մեռելներով եւ օրհաս վերաւորներով:

Բայց Հայոց բանակն դեռ կ'ընդդիմանար, դեռ կը յարձակէին, կը խիզախէին, կռնելով կը հնձէին թշնամի դուռղերն եւ հալածել կը ճղնէին:

ՕՐՀՆԵԱՂ ԼԻՆԻՆ ՆՈՔԱ ՈՐ ԱՅՍՊԻՍԻ ԱՆՁՆՈՒՐՈՒԹԵԱՄԲ ԵՍՈՒԹԵԱՆ ԳԼՈՒԽՆ ԿԸ ՀԱՐՈՒԱՄԵՒԻՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՄԱՐ ԿԸ ՏԻՆԵՒԻՆ:

Զ.

Արեւի մար մտնելով վերջացաւ կռիւն:

Երեկոյ էր:

Բայց գիշերային խաւարով սքողեալ էին Հայ սիրտերն:

Վաթսուն վեց հազար քաջերէ նոքա՝ որ բազդ ունեցեր էին որ դեռ ապրին արտասուալից կը զիտէին մեռելները:

Իւրեանց կեանքն զոր բազդն խնայած էր մահէ՝ անբազդութիւն կը սեպէին:

Ո՞քսամնելի տեսարան. նոքա որ մի քանի ժամ յառաջ հրավառ սիրտով կը տոչորէին, նոքա որ բանակին մէջ կայծակի պէս կը սուրային, այժմ անշարժ փուեր էին հողին վրա:

Աւարայրի շուշաններն շաղախուած էին նոցա արկնով. թշնամեց սուրն հնձեր էր գնտա. բայց երկնից մէջ այն օր մի ուրախութիւն պիտի լինէր, նահատակներու դասին մէջ նոքա եւս պիտի աւելնային. նոքա՝ որ իւրեանց կիսաբաց շուրթերու

վրա դեռ կը մրմնջէին կարծես ՀԱՅՐԵՆԻՔ ԵՒ ԱՉԱՏՈՒԹԻՒՆ:

Բայց աւնդ, Հայաստան ալ սուգեր հագաւ տեսելով իւր կողիճներ դաշտին վրա յօշոտած եւ փուած:

Սուգ առին Հայեր, քանզի իւրեանց պաշտպան եւ գորավար ջնաշխարհիկն Վարդան ալ չը դարձաւ, իւր նահատակեալ գինակիցներու հետ թռաւ եւ նորա ոգին:

Կենդանի քաջեր բոլորեալ այն վնճ անկեղծ շուրջ՝ կ'ողբային. « քաջդ Վարդան, Պաշտպանդ Հայրենեաց, անձկալի Հայր մեր. էր այսպէս լուռ կը ննջես, էր չես խօսիր մեզ քո քաջութիւնով, մեր սիրտն քե՛ւ կը բարախէին, մեր բազուկներ քե՛ւ կը շարժէին. էր այժմ կը լքես զմեզ, ո՞հ, դարթիր, ո՞ քաջ, դարթիր, խրախոյս տուր մեր սիրտերուն, քանզի թշնամեց քայլերն յաւեր դարձուցին Հայաստանը, նոր աղէտներով ծածկեցին Հայութիւնը. իսկ դո՛ւ ո՞ քաջ, մեռա՞ր դու . . . »

Այս ողբերու կարծես պատասխան՝ ուրիշներ ալ կերգէին բարձրաձայն.

ՕՐՀՆԵԱՂ ԼԻՆԻՆ ՆՈՔԱ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՄԱՐ ԿՈՒՆԵՑԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ:

Է.

Քաջերն կ'աղաղակէին, ո՞ մեծդ Վարդան, չքնաղ սիրտ. աննաման նահատակ. դու արիսպէս վազեցիր մահարշառ դաշտին մէջ. պայծառ էր քո գէմք որպէս արուսեակ, դուարթնոյ պէս կայտառ



էլիր . երբ հրաւեր կարողացիր մեզ՝ դաշտերն լցան քո որոտումով . պատերազմի դաշտին վրա ոչ մի աշխարհակալ այդպէս չը գտուաց . քան զի դու յուզւած էիր ճշմարիտ կրօնի նախանձով , բայց ինչ է այժմ այս յաւիտենական լուսթիւնդ . ինչ են այս մահաբոյր վերքեր . խոր թմրութիւն եւ անշնչութիւն , աւանդ , աւանդ :

Բայց այս ողբերն ալ ի ցնծում կը փոխւէին . ճշմարիտ քաջեր նախանձով կը հաւաքէին նոցա մահն . եւ կըսէին .

ՕՐՀՆԵԱՂ ԼԻՆԻՆ ՆՈՒԱ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՄԱՐ ԿՈՒԵՅԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ :

Ը .

Թագծեալ ողբներ կարօտով լի կ'ազազակէին դարձիր ո՞ քաջ Մամիկոնի , դարձիր եւ տէս , Հայ սիրտեր քեզ համար կը տրօփեն , Հայաստան վարդէ պսակներ կը պատրաստէ քեզ . դու արժանի կտրիճ անթառամ պսակաց . դարձիր , թօթափէ քունդ , միացիր քո զինակիցներու հետ . ցնծումով մտնելք ի Հայաստան . ցնծումով գոչելք միաբան . Յաւէ՛ժ սպրի հայութիւն . . . :

Բայց քաջն Վարդան ձայն չը տրւաւ . նորա քուն խորին էր քան Արիմէլէքինն . բայց ողբն թերեւս յաւիտենական աշխարհէն սխտի հսկէր Հայոց վրա :

Այսպէս յուսալով Հայաստանի քաջերն դարձան կռիւի դաշտէն . պատերազմի վերքերն դարձանսկըւ եւ կրօնն աւելի ստուր հաստատելու զըստ զեցան :

Գարեր՝ տարիներ անցան , եկան յետագայ սերունդներ , սքանչացան այն զիւցազմներն եւ նոցա յիշատակ օրհնեցաւ այսպէս .

ՕՐՀՆԵԱՂ ԼԻՆԻՆ ՆՈՒԱ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՄԱՐ ԿՈՒԵՅԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ :

Թ .

Վասակ եւ Վատակի նման վատեր չ'արժանացան այսպիսի օրհնեալ յիշատակաց :

Վասակ իւր հազարուոր արբանեակներու հետ գուցէ աւելի գո՞ լինէր թէ յետագայ դարերու ձայնն ինքեան զէ՛մ մենչէր միայն :

ԱՆԻՇԵԱՂ ԼԻՆԻՆ ՆՈՒԱ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ԳԷՄ ԿԸ ՄԱՐՏՆՁԻՆ :

Ապաղայի այս անէծքն շատ թեթեւ պատիժ էր իւր յանցանքին :

Քանզի այն վատն՝ ու՛մ զօրքեր կը յանձնըւէին Հայաստանը պահելու համար եւ ինք՝ Հայաստանի զէ՛մ կ'էնէ կը պատերազմի . այն վատն՝ որ երգումին վրա հաստատ չը կենար , որ կը դրժէ իւր խտտում , որ կ'ուրանայ իսպառ իւր հաւատ , որ մոգերն ի Հայաստան կը խօթէ , որ կռատուններ կը բանայ , որ քահանայ եւ քրիստոնեայ կը չարչարէ անխընայ եւ շատ մարդեր կը գայթակղեցունէ իւրեանց հաւատէն :

Գարձեալ այն դաւածան՝ որ սուտ քահանայներ կը հանէ , նոցա միջոցով շատ պարզափառ Հայեր կը խարէ , իւր կողմ կը գրաւէ , Ս . կրօնի անհաշտելի Յարկերան կը հռչակէ որպէս աննախանձ



բարեկամ քրիստոնէութեան եւ այսպէսով կը պա-  
ռակատէ Հայոց միութիւնն , թշնամի կը դարձունէ  
դաշնակից ազգերն , որպէս են Վրացիք եւ Ադ-  
ուանք , եւ այս ամէն չարիքէ յետոյ Ս. Ղեւոնդեան  
քահանայներն շղթայի կը կապէ :

Երբ մի մարդ այս ամեն վատութիւն կը դոր-  
ծէ իւր հայրենեաց դէմ , եւ այն ալ միայն անճա-  
կան փառաց կոչը յոյսով . . . Հայրենիք միթէ կը  
լռէր , Արդարութիւն միթէ անպատիժ պիտի արձա-  
կէր զնա :

Թող որ Հայերն արդէն անէծքով կը լուծէին  
իւրեանց վրէժ , անէծքով կը հարւածէին նորա վատ  
եսութիւն :

ԱՆԻՅԵԱ՛Լ ԼԻՆԻՆ ՆՈՔԱ՛ ՈՐ ՕՏԱՐԻ ՀԱ-  
ՄԱՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ԴԷՄ ԿՐ ՄԱՐՏՆՉԻՆ :

Ժ.

Պատերազմի դաշտէն գլխիկոր կը դառնային  
Պարսկական զունդեր :

Թէեւ չէին յաղթուած , բայց եւ չէին յաղ-  
թած :

Նորա չէին վերադառնար մի այնպիսի բազ-  
մութեամբ , որ նախ կը ծածկէր դաշտերն : Գաշ-  
տերն դարձեալ կը ծածկըւէին , բայց նոցա դիակ-  
ներով :

Որպէս թէ տիրամած գիշեր պատեր էր Վա-  
սակի դէմքն . ինչ պարծանքով պիտի ներկայանար  
Յազկերտի առջեւ , այն բռնաւորին որ մեր սիրուն  
Հայաստանի վրա ծանրացած եւ դեռ անյաղ՝ կու-

դէրնաւ քրիստոնէութիւնն ջնջել Հայկեան սիրտերէ :

Բարոյապէս դիտելով Հայաստան յաղթած էր ,  
զի վատերու մասնութեան հակառակ ոտնահարած էր  
այն բռնաւոր կամքն որ նահատակներու արիւնով  
օծեալ եւ նուիրագործեալ եկեղեցին յատուչան  
փոխել կ'երազէր :

Տղմուտ , քս դետեզր մի սրբավայր է , ուր  
Հայ քաջեր կնքեցին իւրեանց փառազօծ յաղթանակ  
եսութեան իրսիտ ամբարտակին դէմ : Քո ջուրերն ,  
Տղմուտ , Յորդանի պէս նուիրական են , զի Վար-  
դանի , Վահանի , Մրսէնի , Խորէնի , Արտակի , Ներ-  
սիսի , Տաճատի , Հմայեակի , Գարեգինի եւ սոցա  
հազար եռսուն վեց զինակիցներու արիւնով ներկե-  
ցան . ճն սւրբնն , Տղմուտ , երբ այժմ քո ափերի  
վրա այցելուն որոնէ նախնի դարերու հետքեր ,  
երբ սգաւոր Հայորդին լռին ու մնջին քեզ պշուցնէ  
իւր հայեաց , քս հանգարտ հոսանքի մէջէ ձայնէ  
նմա սն ցանկալի օրհներքի արձագանգն .

ՕՐՀՆԵԱ՛Լ ԼԻՆԻՆ ՆՈՔԱ՛ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱ-  
ՄԱՐ ԿՈՒԵՅԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ :

ԺԱ.

Գանի յառաջանայ ժամանակն , քանի հեռա-  
նայ Հայն իւր քնիկ եւ յիշատակներով լի հովիտանե-  
րէ , քանի թմրի ու թառամի օտար աստեղաց փայ-  
լին ներքեւ , քանի ճնչըւի բռնութեան մահակին եւ  
թշուառութեան լուծին տակ , քանի թափառի եւ  
ցրուի դաղթականութիւններով , իւր նախնի փառք  
եւ յաղթանակներ չը պիտի մոռացւին վերջապէս :



Քաջերու եւ առաքիններու անուն՝ պիտի պըսակի օրհնենքով, որպէս եւ մատնառու, հայրենեաց, տնայարան, փառամոյ, անտարրեր եւ անձնասէր վատերու անուն եւ յիշատակ սա վրիժառու ջանով .

ԱՆԻԾԵԱ՛Լ, ԼԻՆԻՆ ՆՈՔԱ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ԳԷՄ ԿԸ ՄԱՐՏՆԶԷԻՆ :

ԺԲ.

Անձ մեզ օրինակ այն թշուառն Վատակ ում Յարկերտ խօստացած էր փառքերու չքեղազոյնն եւ ոսկիներու ճոխութիոնն, որպէս զի իւր ազգազաւ մատնութեամբ յաներ դարձունէ Հայաստանը . անն հստութեան այն թշուառ զոհն, թէ եւ ազատած պատերազմի ժանիքէն, բայց Արդարութիւնն թերեւս զայն աւելի սաստիկ կերպով պատուհասելու համար չէր տապալած :

Վերջապէս կը հնչէ Արդարութեան վրէժի զանգակն . կրակ ու բոց կը գառնայ բոնաւորն Յաղկերտ եւ մատնիչին զէմ կը շանթէ բարկութեամբ, զի իւր կամքն սինակովս եղած կը ահանէ եւ մատնիչն կը հեռանայ ընկճեալ խստազոյն պատիժներու վճիռով . թող թէ չըստանար ինչ որ չունէր, այլ ունկցածն ալ վրայ կը տայ :

Ար մերկացունեն զնա իւր իշխանական աստիճաններէ, որպէս զող եւ մարդաստղան կը կապեն, կը նեւան մի որդնալից բանտի մէջ եւ այն շահամոյ եւ անձնասէր վատն որ փառաց ասպարէզի մէջ խոյանալ կուղէր, մութ բանտի մէջ կը գանէ իւր

ասպարէզ . նախատինքներով կը կորանայ իւր ճակատ . օտարի ծաղրով կը սեւնայ իւր դէմք եւ վերջապէս որդնոտելով կը փչէ իւր ոգին :

Եւ Հայաստանի արիւնտ լեռեր կարծես վրէժով կ'աղաղակեն .

ԱՆԻԾԵԱ՛Լ, ԼԻՆԻՆ ՆՈՔԱ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ԳԷՄ ԿԸ ՄԱՐՏՆԶԷԻՆ :

ԺԳ.

Ա՛յսպէս պիտի անիծւին ամեն վատ փառասէրներ որ կ'տոնհարեն իւրեանց հայրենիքն, եւ անարդ հստութեամբ կ'արհամարհեն նորա հողածութիւնը :

Ա՛յսպէս պիտի չքանան նոքա՝ որ բարձրանալու համար իւրեանց ոտքին պատուանդան կընեն Ազգը եւ կրօնը, իրաւունքը եւ արդարութիւնը, պատիւը եւ առաքինութիւնը :

Եւ երբ հստութեան ցաւալի զոհերն կոխտուելով այս նուիրական ոգիները՝ հողիւ կը կանգնին իբր մի լեռի վրա իւրեանց ոտքի ներքեւէ կը սրայթի մի հրաբուխ արդար պատուհասի՝ որ կը շանթէ իբր կայծակ եւ ի հուր եւ ի սուր կըսպառէ զնոսա :

Ա՛յսպէս պիտի անկնին անիրաւ փառքերով վըքացած վատերն եւ անձնասէրներ :

Ա՛յսպէս պիտի փչին արհամարհ մեծութիւններ, հայրենեաց զէմ յանդգնութիւններ եւ ազգակործան դաւեր եւ դաւաճաններ :

Ա՛յսպէս պիտի աւլըւին մատնիչներու կմախք, պիտի նախատին նոցա աճիւններ, եւ ապազայ սեբունդներ սնպէս պիտի փոխարինեն նոցա յիշատակ .



ԱՆԻՇԵԱՎԼԼԻՆԻՆ ՆՈՔԱ՝ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ԳԵՄ  
ՄԱՔԱՌԵՅԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ :

ԺԴ.

Անարգ Եսութիւն , այս է ուրեմն քո դասն  
պատու դար կրնձայես թշուառ զոհերուդ :

Փղձկելով կը յիշեմ դքեզ Ասասկ , իշխանդ  
Սիւնեաց , որ Պարսկական խոր եւ մութ բանտէն  
դուրս ելար որդնտեալ դիակի փոխեալ եւ գիակդ  
անգամ յամօթ մասնեցաւ օր ըստ օրէ հրապարակ  
նետեելով :

Զարհուրելով կ'երեւակայեմ նաեւ այն երկա-  
թեայ հրաշէկ շամիրուն , որով Քաղբատունին Սըմ-  
բատ կը պսակէր դքեզ Մերուժան , իշխանդ Արծ-  
րունեաց , որ քո փառամոլ Եսութեան զոհած էիր  
Հայրենիքն եւ անթիւ չարիք հասուցած էիր նմա  
Հայոց Քաջաւոր լինելու համար :

Գն եւս զոհ եղար Եսութեան , դն եւս սա-  
տակեցար Սմբատի ոլորած տաք երկաթին եւ հար-  
ւածներուն ներքեւ . բայց աւաղ , դուցէ քո նախա-  
գիծ վատ օրինակն էր որ զրդած էր Աստաղը եւ  
Ահատ-Սարգիսը որ իւրեանց կեանքն հայրենեաց  
վեասելով անցուցին եւ ամեն պարտաւորութիւն  
Հայոց Քաջաւոր լինելու տենչին զոհեցին :

ԱՆԻՇԵԱՎԼԼԻՆԻՆ ՆՈՔԱ՝ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ԳԵՄ  
ԿՈՒՆԵՅԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ :

ԺԵ.

Ո՞ Հայեր , ս Հայաստանի տարադիր որդիներ ,  
իմ քաղցր եւ ցանկալի եղբայրներ , կուզէք որ դուք  
չունենաք Աստակի չարաշուք վախճան եւ յիշա-  
տակ , կուզէք որ ապագայ դարեր դձեղ չ'անիծեն ,  
սն , Աստակի նմանելէ խորշեցէք , մի մարանչիք  
հայրենեաց դէմ , ձեր անձի փառք մի մուրաք օ-  
տարներէ , եւ եթէ պէտք լինի , ձերը զոհեցէք Ազ-  
գի համար :

Եւ վերջապէս մերժեցէք Եսութիւնն ձեր սիր-  
տերէ :

Եւ որովհետեւ հայրենեաց սէրն Եսութեան  
դէմ մի ամուր պարիսպ կրնայ համարել , ուստի  
արժան է որ մի փոքր այս նիւթի վրա կեղրոնացու-  
նեմք մեր խորհրդածութիւններ :

Սրդարեւ հայրենեաց սէրն ամեն երկրաւոր  
սէրէ սուրբ եւ նուիրական է :

Հայրենիք մի մայր է , միթէ ներելի է անգոս-  
նել մայրն :

Կան որ հայրենեաց սէրն մի խօլ ցնոր կը հա-  
մարին . երբ նոցա հանդիպիք , առ ժամն ուշադրէք  
նոցա խօսքերուն , թողէք զի թափեն իւրեանց բո-  
լոր ճարտարխօսութիւն եւ երբ աւարտեն իւրեանց  
խօսքն , պատասխանեցէք ձեր խիղճերու ձայնովն .  
— ոչ , ոչ բարեկամներ , հայրենեաց սէրն մի խօլ  
ցնոր չէ , քանզի այս զղացում անասուններու մէջ  
խիղ զրւած է , պէտք է սիրել հայրենիքն , քանզի



նա մի դորովագութ մայր է , ոյր ծոցէ կ'եղնեմք ,  
իժն է որ կը խայթէ իւր մայր :

Վայ նոցա՝ որ կ'ատեն իւրեանց հայրենիքն :

Վայ նոցա՝ որ կուրանան իւրեանց նախնի հայ-  
րեր :

Ի՛նչ դձձութիւն , ի՛նչ նուաստութիւն կը պա-  
տէ այդպիսիներն :

Հայրենեաց սէրն ազբիւրն է ազնիւ զգացմանց  
եւ առաքինութեան . նա վճիտ հայելին է մի մար-  
դու բնութեան , նա մայրն եւ դայեակն է զիւցազ-  
նական ոգիներու :

Ուր կը պակասի այս սէր , անդ կը ծագի Ն-  
ստութիւն :

Եւ ետութիւնն մի ազգի մէջէ բառնալու հա-  
մար՝ անհրաժեշտ պէտք է նախ մշակել հայրենասի-  
բութիւնն :

Տեսէք հայրենասէր անձն , այն արիասիրտ եւ  
կորովի զինուորն . սա՛ երբ պէտք լինի պաշտպա-  
նել հայրենեաց շահն , յօժարակամ ի մահ կը վազէ .  
նորա աչքին ամեն բան անարժէք կը թըւին , կեանք  
փառք , մեծութիւն , համբաւ եւ ճոխութիւն նորա  
առջեւ կը ներկային իբր սուտ երազներ եւ յայնժամ  
կը գոչէ զայրալիր . կորէք մեկդի , ցնորի՛ ուրուա-  
կաններ :

Եւ նա՛ որ հանդարտ կ'երևէր իբր մի հեղ եւ  
հլու գառնուկ , ահա զիւցազն դարձեր է կամ մի ա-  
րի եւ աննկուն հոանդով վառ հսկայ եզած է , որ  
ատիւծի պէս կը մանչէ նոցա գէժ որ կը թշնամանեն  
իւր մայր՝ որ է Հայրենիք :

Հայրենասէր անձի սգին կը սիրէ անսպակա-  
նութիւնը , անդ կը ցանկայ սրանալ , մինչ հայրենա-

տեացն՝ թզուկ վատողի , զուրկ ազնիւ զգացումնե-  
րէ եւ արիութենէ , սողունի նման կը սիրէ սուղիլ  
ճախնային ապականութեանց մէջ :

Ե՛հ ուրեմն , թէ չէք ուղեր հաւասարիլ սո-  
ղուններու , յարդեցէք հայրենիքն եւ հայրենասէրն .  
եւ դարձեալ թէ չուզէք զերծ մնալ ետական ճրդ-  
տումներէ , սիրեցէք ձեր հայրենիքն սրբան եւ ան-  
չուք , աւերակ եւ անփառունակ լինի :

Հետամուտ եղի՛ք այն նախնի վեհ եւ արի ան-  
ձերու , որոց անունն փառաւոր զիծկրով դրւած է  
պատմութեան լայն էջերու մէջ , իսկ երբ ի շարս  
այն անմահ եւ ցանկալի հայրենասիրաց պատահիք  
նաեւ այն ազգուրաց եւ անձնասէր ժանտերու՝ որ  
ետութեան որոմ սերմեցին ազգին մէջ . նոցա ճակա-  
տին զարկէք անցէք սա արժանաւոր դրոշմ .

ԱՆԻՇԵԱՆՂ ԼԻՆԻՆ ՆՈՒՔԱ՝ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ԴԷՄ  
ԿՈՒՅՑԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ :

ԺԶ

Մասնաւորելով մեր զխոտորութիւններ հայրենե-  
կաց վրա՝ ջանա՛ք բացատրել թէ ուստի կը բզիւի  
դորա սէր եւ ի՛նչ պարտքեր ունիմք առ այն :

Անդ՝ ուր առջի անդամ ի լոյս կը բանաւք մեր  
աչեր , անդ կըսկօի մեր անհատական հայրենիք ,  
յու՛մէ չեմք ուղեր հեռանալ :

Ո՛հ , էր այսքան քաղցր եւ սիրելի կը թըւի  
մեզ այս երկիր , եւ էր այնքան վիշտերով եւ տրտ-  
մութիւնով կը պաշարիմք , երբ անտի կը հեռա-  
նաւք :



— Մի բնական ազդեցութիւն է այդ , որ անդ կը քաշէ մեր սիրտն եւ ոգին , կարծես մի մազնի- սական առածդութեամբ անդ կ'ամբիօթին մեր սէր եւ խօհեր՝ ուր կ'ապրին մեր սիրելիներ եւ բարեկամներ :

Թէ պալատի մէջ իսկ լինի՞ր՝ մեր սիրելիներու բնակած տեղն աւելի անուշ կը թուի քան պալատն , մեր անհատական հայրենեաց հոյն եւ ջուրն՝ աւելի հաճոյական եւ առողջարար եւ դաշտեր եւ լեռեր աւելի գեղեցիկ , դալարուտ եւ շքեղ , քանդի անդ բնակած են մեր սիրտի սիրած էակներ :

Գուցէ այս զգացում եղծրւի երբ մեր անհատական կամ ծննդավայր հայրենեաց մէջ այլ եւս չ'ունենամք մի մարդ՝ ում կարենամք ասել « դո՛ւ իմն ես » :

Եւ անս անդ հոյն կը կորուսնէ իւր հաճոյականութիւնն , ջուրն՝ իւր քրոջրութիւնն , եւ դաշտերն ու սարեր իւրեանց դեզն եւ հրապոյր :

Իսկ անհատական հայրենիքէ յետոյ կը գայ ազգային տոհմական հայրենիք , զոր իսպառ կը պարտիմք սիրել եւ այնմ նուիրել մեր սիրտ , մեր բազուկ , մեր վաստակ , մեր ստացուած եւ մեր կեանք :

Մի անժխտելի պարտք է տոհմային հայրենեաց սէրն եւ զոր ներելի չէ եղծել կամ ջնջել բնաւ :

Մեր տոհմային հայրենեաց փառք կամ անշքութիւն կ'ենթադրէ մեր իսկ անհատական փառք հոմ նուաստացում , քանդի տոհմային հայրենիք որ կ'ըսեմք ուրիշ բան չը նշանակիր , թէ ոչ մեր ամեն մեկուն անհատական հայրենեաց հաւաքական երկիրն եւ բոլոր անձնական շահերու ի մի շահ եւ բոլոր կեանքերու ի մի մշտատեւ կեանք ինքնակամ

ձուլիլն , այն է ամեն մեկու իւր անձ ամենու նըւերել եւ զոհել :

Տոհմային հայրենիք մի մեծ մարմին է , որ կը ներկայէ մի ս եւ է ազգ կամ ժողովուրդ . իսկ ծընընդավայր հայրենիքներ սորա ամբողջացուցիչ մասերն են :

Երբ այս մասեր աղաւաղ , շփոթ կամ դէշ լինին , յայտ է թէ ի նոցանէ կազմեալ մարմինն իսկ կունենայ նոյն յոռութիւնն :

Այսպէս մի ամբողջի լաւութիւն եւ յոռութիւն կը վերաբերի զայն բաղկացունող մասերուն , եւ սոցա պատիւ եւ անպատուութիւն եւս դարձեալ կը վերաբերի սոյն մասերու ստորակարգեալ իրերու կամ զայնս յառաջ բերող անձերու :

Արդ քանի որ տոհմային հայրենիքն զատ զատ մենէ կ'առնէ իւր դոյութիւնն եւ կազմութիւնն , այս տեսութեամբ նորա փառքն եւ անշքութիւնն եւս մեզ կը վերաբերի :

Ուրեմն երբ կ'որոնեմք մեր փառք , պէտք է որ մեր տոհմային հայրենիքը , զոր աւանդ , մեր ներքին պառակտումներ երեք տէրութեանց ( Ռուս , Թիւրք , Պարսիկ ) մէջ պառակտեցին , գոնէ այժմ նոցա հովանւոյն ներքեւ փառաւորել ջանամք ուսմամբ , արհեստիք եւ քաղաքակրթութեամբ . որպէս զի անմահ քաջերու հետ մեք եւս վայելեմք ապագայ սերունդներու սն ցանկալի օրհնենքն .

ՕՐՀՆԵԱՒԼ ԼԻՆԻՆ ՆՈՒՔԱ ՈՐ ՀՍՅՐԵՆԻՍՑ ՀԱՄԱՐ ԱՊՐԵՅԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ :



ԺԷ.

ՏՈՂՄԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԻՔ.— Հոս է որ կամիր-  
 փին մի ազգի նահապետներու, քաջերու եւ զիւ-  
 ցազններու դամբարաններ եւ աճիւններ. հոս է որ  
 մշտատեւ կը պահուին նախնի մեծագործութիւննե-  
 րու ազօտ յիշատակներն, յօրինակ եւ ի յորդոր ա-  
 պագայ սերունդներու. հոս մի հայակազ պալատ,  
 հոն կիսակործան սիւներ, այլուր ամայի բերդեր,  
 կիսափուլ պարիսպներ բարձրացած կը նշմարւին,  
 որոց վրա ժամանակի աւերածու ձեռքն կը ծանրա-  
 նայ,

---



---



---



---



---



---

անցեալի հանդիսաւոր վկայներ որ կը յօրինեն մի  
 ժողովուրդի կենսադիրն եւ ապագայ սերունդներ  
 կը դան քաղել անտի՝ իւրեանց գործերու փորձա-  
 ոական դասն եւ խրատ, խրախոյս եւ զգացում:

Այսպէս տոհմային հայրենիքն պէտք է նկա-  
 տել անցեալ փառքերու մի խորհրդաւոր հանդիսա-  
 րան, ուր սիրոյ ոգիին հետ ի տես կերէն եւ ասե-  
 լութեան վատչուեր ճիւղաղն. անդ՝ որպէս առաքի-

նական տեսիլներ, նոյնպէս՝ մոլութեան ցուցանք-  
 ներ, նոյնպէս քաջութիւն եւ վատութիւն, երկ-  
 նոպարդեւն ազատութիւն եւ ժանսն գերութիւն,  
 անմիութիւն եւ մատնութիւն, զատ զատ իւրեանց  
 կենդանի զոյներով, իւրեանց սիրուն կամ անարդ  
 պատկերներով յերեւան կը դան: Եւ ահա՝ ապա-  
 դայի հանդիսատես սերունդն՝ այս փառաց եւ ան-  
 պատուութեան, քաջութեան եւ ետութեան խառն  
 տեսարաններէ զգածեալ կ'ուսնի ինչ որ կը փառա-  
 ւորէ ազդերն եւ կենդանի կը պահէ, կ'ուսնի նա-  
 եւ ինչ որ նոցա գերութեան, նուաաստութեան եւ  
 անկաման առիթ եղած են եւ կը լինին:

Ապագայի որդին ահա փորձառութեան այս  
 գործնական դասարանէ դուրս ելած՝ պիտի խիզա-  
 խէ եւ գործէ ինչ որ ալեւոր անցեալն ուսոյց նմա:

Եւ յաճախ, անմահ քաջերու խորհնալ յիշա-  
 տակով թունդ ելած՝ չը պիտի դադրի յեղյեղել սոս  
 խօսքը:

ՕՐՀՆԵԱՒԼ ԼԻՆԻՆ ՆՈՒՔԱ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱ-  
 ՄԱՐ ԱՊՐԵՑԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ:

ԺԸ.

Տօհմային հայրենիքէ վտարանդի եւ զազթա-  
 կան Հայորդիներ, դուք՝ որ պանդխտութեան աս-  
 տեղաց նեքեւ կը թափառիք, դուք՝ որոց աչքի առ-  
 ջեւէ տօհմային հայրենիքն մի ստուերի պէս կը փա-  
 խի, այս, ձեր այդ օտարութեան երկրի մէջ յիշե-  
 ցէք ձեր նախնի հայրերն, որ ապագայի պարծան-  
 քին, ձեզ համար տքնեցան, եւ դուք ձեր ետական



անտարբերութեամբ ի դերու պիտի հանէք նոցա անձնուէր ջանքերն :

Ո՛հ , մի մեղկանաք հեշտութեան ծոցին մէջ կամ ծուլութեան բարձին վրա :

Խստակեաց եղիք որպէս Սպարտացի , եւ հայրենասէր՝ որպէս Հինն-Հոովմայեցի :

Հայաստանէ դուրս՝ աշխատեցէք նորա պարծանքին համար , մաքրեցէք ձեր սիրտեր այն ամեն վատ զգացումներէ եւ կիրքերէ որ կարծես ընդառոյս բնութիւն եղած են Հայուն :

Մեկզի թողէք եղբայրական ատելութիւնն , նախանձն , գժտութիւնն , վհատութիւնն , անտարբերութիւնն , որք ետութեան լեզի պատուհներ են :

Պերճացէք եւ զարդարեցէք այն զուտ եւ մաքուր առաքինութիւններով . որպէս պերճացան եւ զարդարեցան Հայկ , Արմենակ , Արամ , Արայ , Տիգրան , Տրդատ , Սմբատ , Խոսրով , Վարդան , Վահան եւ այլ բազում իշխաններ եւ հայրապետներ :

Անձնասիրութենէ եւ ետական կամքերէ վեր բարձրացէք , քանզի նոքօք միայն մեր ազգի փառքն նսեմացաւ :

Գիտացէք թէ ի՞նչ որ ետութիւնն քանզէ , անձնուիրութիւն կը վերաշինէ զայդ . ի՞նչ որ ատելութիւնն եղծէ , սէրն կը նորոգէ ի գոյ կածէ եւ ի՞նչ որ անտարբերութիւն , վհատութիւն եւ թուլութիւն կը վատացունեն՝ սոցա հակառակ շարժում , գործունութիւն եւ արիւթիւն ի լաւ անդր կը փոխեն զայն :

Ուրեմն սիրեցէք , շարժեցէք , գործեցէք , ստարագիր Հայորդիներ , եւ մի կասիք եւ խոտորիք նախնի ազգասէրներու շաւիղէ , որ ի փրկութիւն կը

տանի զձեզ եւ անկեալ Հայաստանն . ապա թէ ոչ՝ դուք ալ Վասակի նման պիտի ընդունիք ձեր ճակատներու վրա սա անաւոր դրոշմ .

ԱՆԻԾԵԱՂԼ ԼԻՆԻՆ ՆՈՒՔԱ՝ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ԳԷՄ ԿՈՒՆԵՅԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ :

ԺԹ .

Եւ սակայն պէտք է շտապիլ , քանզի սուղ է ժամանակն . պէտք է թողել հինօրեայ պապեանական Ետութիւն . երբ Հայրենիք անձնուիրութիւն եւ զոհողութիւն կը պահանջէ . պէտք է յաւիտեան ի մահ մատնել սա ամօթալի զգացում , « Ի՛նչպէս պէտք է » :

Այո՛ . քեզ պէտք է , ո՛ր Հայորդի , քեզ պէտք է որ խեղդես սրտիդ այս անարժան զգացում . քեզ պէտք է որ անտարբերութեան թելադրած այս վատ խօսքն այլ եւս չը հնչես բերանիդ մէջ , քեզ պէտք է որ Ե՛ս Ե՛ս պողոտայով ազգային միութենէ չը զատուիս այսուհետեւ . եւ վերջապէս քեզ պէտք է որ քո շորթեր Ե՛ս Ե՛ս ըսելու տեղ սնայես ըսելու վարժեցունես . « Հանուրի կամքն եւ կարծիքն թող լինի հեղինակ՝ իշխան եւ տիրապետ , զի ես ինքնին ոչինչ եմ եւ ստոյգ իշխանութիւն ժողովուրդի ձայնին կամ քուէին մէջ է ԶԱՅՆ ԲԱԶՄԱՅ՝ ԶԱՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ » :

Ո՛հ , մեր էր թէ ատենով Հայաստանի հզօր նախարարներ անմիութեամբ Ե՛ս Ե՛ս գոռալու տեղ , սահմանադրական այս գեղեցիկ սկիզբով վարուէին՝ այն ժամանակ այս չարաշուք Ետութիւն , որ գրե-



Թէ ընդհանուր եղած էր, մեր հայրենի թագն ի թաւազազ փոխելու չափ չը պիտի յառաջանար :

Ո՛ւր էր թէ Ժ. Ժ. Ռուսոյի յայտնած սանկիղըն կանուխ արձագանգ դանէր Հայ սիրտերու մէջ . «Միայն ընդհանուրի կամքն, կ'ըսէ, կը պարտաւորէ մասնաւորներն, եւ կարելի չէ ստուգել թէ մի մասնական կամք համաձայն է հանրականի, մինչեւ այն մասնականն չ'ենթարկի ժողովուրդի ազատ հաւանութեան » :

Իսկ մեք ես ես կըսեմք դեռ այսօր, առանց այնքան չարիքներէ խրատուելու եւ փորձառու լինելու . ես, կըսեմք եւ կարծես մեր առջեւ բացւած կորուստի վիհն կուղեմք ըսուլ մեր վաղեմի փառաց եւ պարծանաց բեկորներով :

« Ե՛ս » . . . բայց պէտք է սլ այս ձայն խեղճել մեր սիրտերու մէջ, մեր շուրթերու վրայէ պէտք է սրբել այս պիղծ բառ :

Արդարեւ երբ մի ազգի մէջէ ետութիւն եւ նորա ժանտ արբանեակներ կ'անհետին, անդ կը դահալալեն առաջդիմութիւն եւ պարծանք . սա այնքան բնական է եւ այնքան երկբայութիւն չը վերցուներ, որքան արշալոյսի ծագումն կ'աւետէ արեւն :

Քանզի այս վատ կիրք այնպիսի ամուր շղթայներ կը յօրինէ, որ ամեն արիական զգացում կը կաշկանդին . ամեն գովելի աշխոյժ կը մարին եւ ամեն բարեմասնութիւններու անտարրեր կընեն սիրտերն :

Ձանս ուրեմն ո՞ Հայորդի, որպէս զի քո սիրտ ապաստան չընես այս պժգալի մոլութեան, օգնական լինիս քո ազգակիցներու եւ հայրենեաց բոցեւանոց սիրով վառեալ գոչես ճակատաբաց :

ՕՐՀՆԵԱ՛Լ ԼԻՆԻՆ ԿՈՒՐԱՍ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՄԱՐ ԱՊՐԵՅԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ :

Ի.

Իսկ դու, ո՞ Հայաստանի բնիկ Հայորդի, դու՛ որ հայրենի երկրիդ սիւքն կը ծծես, դու՛ որոյ կեանք պանդխտութեան եւ դաղթականութեան բաժակի մրուրով դառնացած չէ դեռ, եւ սակայն խուժ-դուժ Քիւրտերու եւ անարժան ու մոլեռանդ պաշտօնեայներու կեղեքումին տակ կը ճըւաս, մի տրկարանար երկրաւոր դօրութեան առջեւ . պէտք չէ որ անբեկ լինիս թշնամոցն փայլուն դանակէն, որ կը գայ ստացւածիդ եւ սլատիւիդ հետ կեանքդ ալ բառնալ ի քէն :

Վրէժի անաւոր հնոցն թող ի քեզ բռնելի, աշխալէս յարձակէ՛ ճոցս գէ՛մ որ յանիրաւի կը դանկը վրդովեն քո խաղաղութիւն եւ կը կապտեն զքեզ քո արդար եւ անբռնարարելի իրաւունքներէ :

Գու ինքնին ել, զքեզ պաշտպանէ, մի վախեր . ամենաշոր Աջն պիտի զինէ քո ջլապինդ բաղուկներ, եւ օրհասական թշնամիներդ պիտի տեսնեն որ քաջաց երակներուն մէջ ատենով չըջան ըրած արիւնն իրենց յաջորդներու երակաց մէջ ալ կը խորտի :

Երբ կը տեսնես քո մէկ եղբայրն, որ չարաչար կը նեղւի մի անօրէն բազուկէ . մի՛ հեռանար վատաբար, մի՛ ըսեր ետութեամբ, ինչո՞ւս պէտք է, այլ վարէ՛ այնպէս որպէս վարուեցաւ Մովսէս Եգիպտացիին հետ . . . :



Երբ կը տեսնես մի անհատի փառքն ոյր աստ-  
ղին առջեւ քո արեւ պիտի մարի , մի հակակրիբ նը-  
մա , մի վշտացուներ նորա սիրան . թող փառաւոր-  
ւի , թող զարգանայ , նորա փառք իմ եւ քո փառքն  
ալ պիտի առաւելու :

Աչքիդ լոյսին պէս սիրէ ու պահէ հաւատքդ .  
եւ պաշտպանութիւն գտնելու սին յոյսով մի փոխեր  
զայն , որպէս այնքան ամենադժնդակ պարաշայնե-  
րու մէջ չը փոխեցին Վարդան եւ իւր նմաններ ,  
այլ իւրեանց նահատակութեամբ աւելի խոր արմա-  
տացուցին զայն Հայաստանի մէջ :

Ինչ որ կը վերաբերի հայրենեաց նուիրական է :

Եւ նա՛ որ կը վարանի մեռնիլ հայրենեաց հա-  
մար եւ կը շլանայ երկրաւոր սուա եւ պատիր յոյ-  
սերով , յաւիտեան վատանուն է :

Հայ , ինչ ունիս քո արդի կիսակործան վի-  
ճակի մէջ , որ իսպառ քայքայելէ զերծ կը պահէ  
զքեզ , — Հաւատք , կը գոչեն խելքի եւ խիղճի տէր  
գլուխներ :

Եւ ես կըսեմ , հաւատարիմ հետեւող եղիր Ա-  
ւետարանին . բայց մի մոլեռանդ :

Աղաւնիի միամտութեան հետ՝ օձի խորաման-  
կութիւն եւս ունեցիր . թէ ոչ յանդուհդ պիտի  
թաւալիս :

Ներող եղիր , բայց ոչ ծայրահեղ :

Սիրէ զքեզ ասողը , բայց մի նուաստանար :

Բարի կամեցիր թշնամույդ , բայց մինչեւ մէկ  
սահման :

Վայելէ այսօրը եւ մի հոգար վաղիւր . բայց  
երբ քո էութեան նախանձողներն բրբիլ ի ձերին սկը-  
սին խրամատել տունիդ հիմերն , դու մի ննչեր ան-

հոգապէս , այլ շտապէ , փութա՛ աղատիլ ապագայ  
կամ մօտալուս կործանումէ :

Շապիկդ ուղչին բաճկոնդ ալ հանէ տուր .  
բայց աւազակին եւ յաիշտակողին մի ներեր երբէք որ  
մեկ թել մազիդ անգամ ձեռք երկարէ եւ վնասէ քեզ :

Եւ վերջապէս , եթէ յարձակողական զիրք ալ  
չը բռնես , որովհետեւ մեր նախնիք անգամ որ այն-  
քան կռիւներ մղեցին օտար ազգերու հետ , չունե-  
ցան յարձակողական սկիզբ , Հայկէ սկսեալ որ իւր  
վրա նախայարձակ եկող Ռէլի դէմ զինւեցաւ , նոյն-  
պէս Արամ , որ թէեւ աշխարհակալեց , բայց նա-  
խապէս զինք չըջապատող թշնամիներն վանելու  
գիտումով ճանբայ ելաւ . մի բան՝ ամբողջ Հայ  
Պատմութիւնը քրքրած ատեննիս պիտի տեսնեցք  
որ Հայն երբ հարկը պահանջած է , այն ատեն մի-  
այն ի դէն գիմելով պաշտպանած է զինք եւ իւր  
դէնքը կորուսնելով է որ այժմ պահպանողական  
զիրք ալ չունի , այլ յաճախ , որպէս գառնուկ ի  
սպանդ կը վարւի անպաշտպան . սակայն ո՛ Հայոր-  
դի , ալ բնւ սեպէ քեզ այս հէք վնասութիւն եւ  
եթէ յարձակողական ալ չը վնիս , կասեմ , գոնէ  
պահպանողական եղիր :

Քանզի եթէ այսպէս յարատեւէ այս լքում ,  
այս դառն վիճակ , կը վախեմ , թէ կենդանութեան  
ճրաղն որ այժմ գոնէ ընդ աղօտ կը սլլսլայ , մի  
քիչ յետոյ նա եւս պիտի մարի :

Քաջպերէ ուրեմն , արի այս մեծ խոչնդոտ  
ձովէ ոտիդ ներքեւ , եւ ձայն ի բերան քո ասպա-  
րէզի մէջ երդէ սոսպէս :

ՕՐՀՆԵԱՎ , ԼԻՆՆԻՆ ՆՈՒՄ՝ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱ-  
ՄԱՐ ԿԱՊՐԻՆ ԵՒ ՄԵՌՆԻՆ :



ւի, միլիօններով դրամ կը վաճարուի եւ դեռ ցայսօր գոհացուցիչ արդիւնք տեսած չէ:

Ի՞նչ է պատճառն որ այսքան ճիգերու հակառակ տգիտութիւն, հետեւապէս եւ անմիութիւն կը վխտայ մեր մէջ:

— Ետութիւն. այո՛, Ետութիւն որ մինչեւ իսկ դպրոցի նուիրական սեմէն ներս սպրդած է: Հոն, անհոգ եւ անխիղճ դատարարակներ ետութեան կը դոճեն ազազայ սերունդի ոսկի ժամերն:

Ո՛հ, քանի՛ հազուադիւր են այնպիսի հանճարներ որ Հայկի ոգիով հրահանգեն Հայ զաւակներն: Բայց դժար չէ գտնել շատ քանճարներ այդպիսի փափուկ պաշտօնի դրւած:

Գիտես Հայ Ազգ, ուսումի եւ դպրոցի համար քո սխաճ շարժում երեկի եւ այսօրի սկզբնաւորութիւն չէ: Գու վաղուց արդէն ելար, դարուս ետեւէն քայլելու համար շարժեցար. բայց դարն յառաջացաւ, դնաց. իսկ դու դեռ առաջդիմութեան ԱՊԱԳԱՅ յոյսերով կ'օրորիս:

Ապագայ ապագայ ըսելով մինչեւ երբ պիտի սպասես ժամանակի. ո՞չ միթէ մարդն է գործողն եւ չէ թէ ժամանակն որ մի կոյր միջոց է մարդկային գործերու:

Արշտապէք ուրեմն հարցանել թէ՛ ինչ է դարմանն տգիտութիւնը փութապէս վանելու եւ հետեւապէս Հայն Հայուն հետ համաձայնեցունելու:

Ահա՛ ըսեմ. Բա՛ղ ազգէն վաներն էրեւոյց թե՛ մեջ ունեցած որքե՛ր բահանայերն և բահանայորդիներն չըլնելու միայն հոգ բանին և խղճութեամբ մեջ ցրեն զնոս. եւ ահա տգիտութիւնը ինքնին պիտի հալի յայնժամ:

### ԻԱ.

Ա՛խ, խոչնդոտ կը վնասեմք ազգային առաջդիմութեան, տգեղութիւն, վէրք կ'որոնենք Հայութեան մարմնոյն վրա, զոր ետութիւնն պատճառած չը լինի:

Ետութիւնն, աւանդ, թո՛ղ տըւած է որ տգիտութիւն կեանք ունենայ Ազգին մէջ. տգիտութիւն, սոսկալի խոչնդոտ ազգային զարգացման, ոյր դաճութիւն կը ճաշակեմք դարերէ ի վեր:

Այժմ իսկ, այս լոյսի յաղթական դարուն մէջ տգիտութիւն մի գերեզմանական մշուշի պէս պատած է Հայ Ազգի մեծագոյն մասի միտերն եւ անթիւ Հայ ընտանիքներ լի են տգիտութեան պատճառած տխուր վերքերով:

Այս խոր վէրքեր այնպէս վատացուցեր են Հայ սիրտերն, այնպիսի վատութիւն եւ անտարբերութիւն ազգեր են նոցա, զոր անհնար է նկատել առանց արտասուաց:

Տգիտութեան երեսէն է որ Հայն Հայուն հետ կը զինի միշտ, մինչեւ անգամ չնչին պատճառներով սոսկալի գժտութիւններ կ'ունենայ իւր դրացոյն հետ:

Եւ պէտք է դիտել որ մինչեւ այս գժտութիւններ եւ սորա պատճառներ չը վերնան մէջ տեղէ, չը պիտի կրնամք քաղել միութեան պտուղներն:

Բայց ինչ է պատճառն որ դրեթէ կէս դարէ աւելի միջոց շարունակ ուսում եւ գիտութիւն ծաւալել կ'աշխատի, դպրոցներու օգուտ կը քարոզ-



Եթէ ի դորձ դրւի իմ այս առաջարկ , փորձով պիտի տեսուի թէ որպէս արագ պիտի ծաւալի ուսումն ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ :

Օրինակն տարասիրտիկ է եւ մրցումն առաջ-դիմութեան նշան :

« Հազար ուսեալ քահանայներով Հայաստան կրնայ վերածնիլ տաս տարիի մէջ » որպէս կը գրէ մի Հայ գրագէտ :

Մի ուսեալ եւ բարեկիրթ քահանայ ինչ կարող չէ ընել :

Նորա ցանկալի օրինակն ժողովուրդի վրա եւս պիտի ազդէ . ժողովուրդն նորա պէս ծանր , բարեբարոյ , ողջմիտ , քաղաքակիրթ եւ վերջապէս ամեն ինչ կարող է լինիլ :

Եւ դարձեալ մի ուսեալ եւ բարեկիրթ քահանայորդի՝ ժողովուրդի սիրտին մէջ ինչ բարի նախանձներ պիտի յուզէ անուղղակի կերպով , եւ խորհեցէք թէ այս վերջինն իւրեան համար որքան պարտաւորիչ պիտի ճանչէ ուսումն եւ դպրոցն . եւ պիտի պարտաւորէ իւր որդին ալ , որպէս զի ուսում ստանայ , ետ չը մնայ քահանայի որդիներէ :

Քանզի ազդի աշխարհական դասն պիտի տեսնէ որ թէ քահանայն եւ թէ քահանայորդին իւրեանց բարձր արժանիքով եւ թէ պատկառոտ , մեծարոյ եւ նախանձելի կացութիւններ կունենան եւ բարձր պաշտօններու կը հասնին , եւ բնականապէս թէ աշխարհականի որդին քահանայորդիի չափ արժանիք չունենայ , յոռի կացութիւն պիտի ստանայ եւ պիտի նսեմացունէ իւր սոռձի անունն եւ փառքն :

Քանի որ այժմ սորա հակառակը կը տեսուի , քանի որ քահանայորդիներ մեծ մասով գրեթէ ամեն

դաւառ եւ թաղ անուս եւ յետադէմ են եւ արժանիք չունին (բացառութեամբ) աւելի քան ժողովուրդի զաւակներն , ուստի եւ ժողովուրդի սիրտին մէջ ալ մրցումի կայծն կը շիջանի եւ յաւէտ ապրուստի հոգեբով ընկճեալ եւ եթէ հարուստ է իւր ճսխութեան ապաւէն՝ կը քաշէ կը հանէ դպրոցէ իւր դեռուս որդին եւ սն իսկ մի տղէտ արհեստաւորի քով կամ առեւտրական աղմուկներու մէջ կը մոռնայ ինչ որ ուսած է եւ այսպէս ումպէտ կը գրէ դպրոցներու համար վատնուած դրամն :

Անա այս ընթացքն է որ տարիներէ ի վեր կը շարունակի մեր մէջ . նաեւ այս է մի ուրիշ պատճառն որ դպրոցներու եւ ուսում ծաւալելու համար մեր բաղամտեայ ջանքեր ամուլ մնացին :

Թող ուրեմն ուսումն քահանայի եւ քահանայորդիներու համար միայն պարտաւորիչ լինի , եւ առ այս դոնէ միայն վանքերն եւ դպրոցներն փոյթ տանին , եւ Ազգիս համար յայնժամ լուծւած կը համարուի կրթութեան խնդիրն :

Այսպէս միայն Հայ ազգ , հնար պիտի լինի ջախջախել քո առաջդիմութեան այս մեծ խոչնդոտն ալ , որ է տղիտութիւն եւ սորա ծնունդ եղող բազմադարեայ անմութիւն :

Եւ երբ այն ձեռնհաս պաշտօնեայն որ իմ այս առաջարկին ուշադիր՝ պիտի փութայ ձեռնարկել այս մեծ դործի , արդարեւ նա եւս պիտի մասնակցի քաջերու բաժին եղող սն յաւեժական օրհնեքին :

ՕՐՀՆԵԱ՛Ղ ԼԻՆԻՆ ԿՈՒՄ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՄԱՐ ՏՔՆԵՑԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ :



մէջ նորքա են մարդերու նեցուկն , սփովն եւ միւթարողն :

Քիչ մարդ կը գտւի , նաեւ յետին աստիճան ապականեալ սիրտերու մէջ որ իւրեանց դառն աշխատութեան կամ ցաւերուն մի մխիթարութիւն կամ նեցուկ չը վնասեն կիներու ընկերութեան մէջ :

Թերեւս կը պատահի նաեւ որ կին մարդու բարի սովորոյթներուն եւ քաղցրութեան հակառակ այր մարդն չը համակերպի եւ չը համաձայնի նորա հետ . իւր վարժըւած գէշ ունակութիւններէն եւ անուպայ ընթացքէն չը դառնայ իսկոյն , բայց կարող եմք պնդել որ կնոջ տեսական եւ անյողող դժբաղցրութիւն , անդդուելի համբերատարութիւն եւ հեղութիւն բնաւ աղէկեցութիւն չընեն եւ հուսկ ուրեմն չը բռնադատեն այր մարդն իւր օրինակի աղէկեցութեան տակ խոնարհիլ :

Երբէք չը տեսայ մի ո՛ր եւ է մարդ , որ գեղեցիկ կոչւած սեռին արժան եղող յարդն ու պատիւն ընծայեր եւ վնասեր իւր պատուասիրութեամբ :

Երբէք չը տեսայ մի մարդ , որ ուղեղով նուաւտացունել կիներն , զմանար նորա յարգանքն եւ ինք յարգըւեր :

Կնոջ փառաւորութեամբ կը փառաւորիմք . նորա նուաստութեամբ կը նուաստանամք :

Բայց սրբիւսի կին . . . ո՛չ արդի պճնասէք եւ հեշտութեան երկրպագու կիներով , որ աւանդ , անհնարին շատցած է մեր ազգի մէջ ալ , եւ ո՛չ այնպիսիներով որ կը կարծեն թէ այր մարդու ցանկական հաճոյքին ծառայելէ զատ ուրիշ կոչում եւ պաշտօն չունին այս կեանքի մէջ :

Կիներն թէեւ տունի խորանին մէջ կը նստի ,

ԻԲ.

Մի ուրիշ խոչնդոտ ազդային առաջդիմութեան այն է՝ որ մենք յապաղեցանք ուչ զնել իզական սեռի կրթութեան եւ այն պաշտօնին եւ աղէկեցութեան զոր կին մարդն ունի մարդկային ընկերութեան մէջ :

Արդարեւ ինչ որ ալ լինին կիներն , առաքինի կամ մոլի , գիտուն կամ փսմար , այրերն նոցա վարքին եւ բարքին նոցա յատկութիւններուն իւր ձիրքերուն վրա կը ձուլին :

Թէ նորքա ունենան սննդիսի բարի սովորոյթներ , ընտիր եւ հաճելի ունակութիւններ եւ ամենադառն պարագայներու մէջ իսկ մի անայլելի քաղցրութիւն , ամօթալի գործերու վրա մի վեհանձնական սրտմտութիւն , անհնար է որ այր մարդեր չը բռնադատուին հետեւիլ նոցա օրինակին :

Կիներն է այր մարդը բարձրացնողն . կիներն է դարձեալ զայն բարձրացունողն :

Այր մարդու բարքն եւ ընաւորութիւն այն ատեն կ'եղծանի , երբ կիներն արդէն եղծեալ եւ ապականեալ լինի :

Մի կին մարդ հեղութեամբ մի բարբարոսի բարքն կ'ամօքէ , եւ գթութեամբ կը պատէ թշուառութեան եւ աղքատութեան վերքերն :

Ամեն ազգի եւ երկիրի մէջ կիներու ընական ձիրքերն եղած են հեղութիւն , անուշութիւն , զրթութիւն , որդեասիրութիւն եւ ընկերական կեանքի



Թէեւ օրօրոցի մօտ կ'երգէ միայնակ, բայց բնութիւն մի մեծ ազդեցութիւն տրւած է նմա, զոր այդ նորուկ տեղէ իսկ կը բանեցունէ ընկերական աշխատի վրա:

Առաստուրեալ եւ առաջդէմ են այն ազդերն որ աւելի շատ լուսամիտ կլիներ ունին:

Արեւելք երկար ատեն ընկերական աշխարհէ հեռի պահեց կլինն. տուներու մէջ, վանդակներու ետեւ գրեթէ բանտարդել ըրաւ զայն եւ ամեն խրատութիւն բանեցունելով նորա պաշտօնն նկատեց մի անարգ ծառայութիւն այր մարդու կամքին, բայց ո՞վ էր այս պարագային մէջ վնասողն, — նոյն իսկ մարդկային ընկերութիւնն:

Քանզի կլինն ընկերութեան մէջ չերեւելով՝ մարդու առջեւ ելնելու եւ խօսելու ազատութիւնն ու կրթութիւնն ալ չունենալով կանանոցի միայնութեան մէջ մի անզգայ էակ դարձաւ. անզգայ դարուս պահանջներուն. տղէտ՝ ընկերական պայմաններու. եւ անհոգ ու ծոյլ մանաւանդ անկարող հասցունելու այնպիսի զաւակներ, որ իւրեանց խելքով ճարտարութեամբ եւ գործունէութեամբ օգտակար գիւտեր հնարէին եւ իւրաքանչիւրն զատ զատ միջոցներով հայրենեաց եւ իւրեանց զարգացումին համար աշխատէին:

Ի՞նչ հզօր ազդեցութիւն ունին կլիներն ի խրթան եւ ի խրախոյս ընկերական գործերու. բայց Արեւելք անզօր համարեց նոցա ազդեցութիւն:

Եւ կլինն իբր անհոգի էակ, գիտնական կրթութիւններէ զուրկ թողեցաւ եւ հետեւաբար գիտնական կրթութիւններէ եւ գործօնութենէ զուրկ մի սերունդ յառաջ եկաւ. ուստի արեւելեան ճար-

տարութեան, հարստութեան եւ փառաց լոյսն անցաւ յարեւմուտս (յճւրոպ), ուրկէ այսօր Արեւելք, որ գրեթէ մի դար յառաջ լոյս տրւած էր, մի դար յետոյ լոյս, գիտութիւն կը մուրայ, եւ իւր ոսկին ու ճոխութիւնն՝ նորա ճարտարաչէն եւ բազմաբուստ հրաշակերտաց հետ փոխանակելով կըսպառէ:

Թէեւ արեւելքի փառաց խաւարումն՝ ունի ուրիշ պատճառներ ալ. բայց մի գլխաւոր պատճառ եթէ կայ՝ այդ իսկ է կէն հորդէ շարժումն եւ կըլինէ:

— Երբ Արեւելք տղիտութեան այսպիսի խաւարի մէջ կը քայլէր շփոթ ու մուրաբ եւ անն յարեւմուտս երկու երեւելի եւ բարձր հանճարներ նըստած՝ հայրենեաց զարգացումին եւ աղագային համար կը խորհէին:

« Ի՞նչ կը սլակսի Ֆրանսայի բարիքին համար կը հարցունէր Մեծն-Նյարօլէոն-Պօնաբարդ տո Մ. Սէվիլեէ, որ նոյն ժամանակի գիտուն կլիներէ մին էր »:

— Մայրեր, կը պատտօխանէ սա անմիջապէս, մայրեր որ գիտնան կրթել իւրեանց որդիներն:

Այս միակ խօսք զոր արտաստանած էր մի կլին, Գեղիկեան պատգամի պէս կարծես արձագանդ կը գտնէ Ֆրանսական ազգի մէջ. գրագէտներ իւրեանց խոհերու նիւթ կը բռնեն այս կտորը. երեւելի մատենագիրներ, Յ. Մարթէն, Թիրարօն, Շալթոպրիւան եւ ուրիշներ իւրեանց մատենաներու մէջ լուսաբանելով այս խնդիր՝ հանուրի միտին մէջ կը տալաւորեն թէ արդարեւ պէտք է հասցունել այնպիսի մայրեր՝ որ գիտնան կրթել իւրեանց որդիներն:

Արեւմուտքի մէջ հնչող այս հզօր ձայնին մէջ,



Հայերս ալ անզգայ չը կեցանք . մէք ալ նմա արձա-  
զանդ տալով կրկնեցինք ու գոչեցինք յաճախ , մայ-  
րեր պէտք են մեզ , մայրեր՝ որ գիտնան կրթել իւր-  
եանց որդիներն :

Ստէպ կրկնեցինք թէ առանց լուսաւորեալ եւ  
բարեկիրթ մայրեր ունենալու՝ անհնար է ունենալ  
ճշմարիտ առաջդիմութիւն : Ստէպ կրկնեցինք թէ  
բնաւ կարող չէ զարդանալ մի ժողովուրդ , մինչեւ  
որ գեղեցիկ սեռի դաստիարակութիւն ձեռք չառ-  
նըրի :

Ուստի իդական սեռն իւր գաւաճ վիճակէ  
բարձրացունել , նորա ընտիր ընտիր ձիրքերն մշա-  
կել ուզեցինք ուսուսմով : Կանգնեցինք վարժարան-  
ներ եւ գեղեցիկ սեռի դաստիարակութիւն ջերմե-  
ւանդ ուխտերով ձեռք առնըւեցաւ :

Բայց միթէ բաւ էր այս շարժում , որ Ազգիս  
մէջ դեռ ընդհանուր եղած չէր : Միթէ օրիորդաց  
վարժարաններու ցանցառ թիւն կրնանր հիմնական  
վերնորոգում յառաջ բերել Հայերու վիճակին , —  
տարակուսելի , չըսեմ անհնար բան , եւ սման համար  
է որ ազգային առաջդիմութեան համար մեր թա-  
փած քիրտեր թէ սչ բողբոլին , այլ մեծ մասով  
ամուլ մնացին :

Նաեւ մի մեծ սխալ գործեցինք մեր ձեռնար-  
կի մէջ . թէեւ մեր նպատակ բարի էր եւ արդար ,  
բայց ձախող եւ զէչ արդիւնք ունեցանք :

Ամենակարեւոր ուսումներն , որ մի ընտանի-  
քի , մի ազգայ մօր անհրաժեշտ պարտքերն կը  
բովանդակեն , մեր օրիորդաց վարժարաններէ դուրս  
վանեցինք , կրթութեան ստիպողական մասերն զանց  
բրինք եւ երկրորդականներն եւ հաճոյքի վերարե-

րող վարժութիւններն նախադաս եւ դեր ի վեր բըռ-  
նեցինք : Սորա արդիւնքն եղաւ այն ունայնասէր  
եւ պճնամոլ օրիորդաց խումբն , որ իւրեանց ա-  
պագայ ամուսիններուն փոխան երանութիւն եւ  
փառք լինելու՝ թշուառութիւն եւ փորձանք կը լի-  
նին եւ պիտի լինին :

« Քանզի այն ժողովուրդ ոյր կիներն եւ աղ-  
ջիկներ չեն աշխատիր մանելով եւ սակայն նոցա  
զգեստն Սողոմոնի ամենախառաւոր ժամանակի ըզ-  
գեստներէ աւելի զարդարուն է , պիտի սպասէ  
վերջն ապաշաւել եւ ողբալ » :

Կովի հասակին հասնելու համար ուսելով ճա-  
թող գորտին տխուր դէժիկին պիտի հանդիպի եւ նա :

Ե՞ր կը դադարեցունե՞ք մեր օրիորդներն պարի ,  
գաշնակի եւ գծադրութեան նման զգայական ու-  
սումներով , որ մայրական պարտքերէ կրնան հեռա-  
ցունել զնոսա , եւ էր նոցա չե՞ք ուսուցներ նա-  
խապէս բարեկարգութիւն , խնայողութիւն , մաք-  
րութիւն , պարկեշտութիւն , ուղղամտութիւն , համ-  
բերութիւն , բարեգործութիւն , ժրութիւն , խոնե-  
մութիւն , արիութիւն եւ անձնուիրութիւն :

Բոլոր այս գեղեցիկ առաքինութիւններով է  
որ ընտանիքներու մէջ կարմատանայ խաղաղու-  
թիւն եւ զժտութիւններ ու կոիւներ կը փախին  
սարսափահար :

Աւանդե՞ք ուրեմն մեր օրիորդաց ինչ ու-  
սում որ կրնայ պահել զնոսա մայրական պարտաւո-  
րութեան սահմանին մէջ . բայց հեռացունելով զնո-  
սա առանին եւ բարոյական կրթութիւններէ , յանձ-  
նել հաճայական կամ զգայական ուսմանց . ուրիշ  
բան չէ , բայց եթէ կրթութեան դէմ , ընտանական



խաղաղութեան դէմ, վերջապէս Ազգի ապագային դէմ ի գործ դրւած մի սպանութիւն, ունայնասիրութեան վարժութիւն եւ աղատարեր կրթութեան օգիին դէմ մի մեղապարտ եւ ետական հակառակութիւն է այդ, պարզութեան դէմ թշնամութիւն, նորասիրական զեղխութեանց խրախոյս տալ, ընտանեկան պարտուց զգացում ջնջել եւ Ազգին մէջ ամբարիներութիւն յաւելել է :

Է՛հ ուրեմն, պիտի հրճուիք անմիտ ծնողներ, երբ ձեր աղջկանց ապագայ ընտանեկան վրդուղում տեսնէք փոխան երանութեան, երբ տեսնէք սէքն ի դառնութիւն փոխւած եւ ամուսնութիւնն ի թըշուառութիւն . Է՛հ, եթէ այդպէս կուղէք, աղէ, շարունակեցէք տալ այդ խոտոր դաստիարակութիւն, որով դուցէ դուք ալ բաժին ունենաք վատերու սեփական եղող սոս անհաճոյ ժառանգութեանէն .

ԱՆԻՄԵԱՂ ԼԻՆԻՆ ՆՈՒՔԱ՝ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՕՊՈՒՏՆ ԵՍԱԿԱՆ ԿԱՄՔԵՐՈՒ ԿԸ ԶՈՂԵՆ :

ԻԳ.

Գաստիարակութեան մէջ մեր մայրերու առած մի խոտոր ընթացքի վրա խօսելէ ետեւ հարկ կը տեսնեմ աւելի մանրամաս կերպով խօսիլ գաստիարակութեան մեծ խնդրոյն վրա որ այսօր ներհուն իմաստասիրաց ուչն առ ինք զրււած է . կենսական ամենակարեւոր խնդիր՝ որ բարօրութեան յաղթանակն կընծայէ խոհուն հանձարներու երեւակայութեան առջեւ :

Քննելք ուրեմն թէ ինչ է գաստիարակութիւն :

Գաստիարակութիւնն մարդուն կենդանական եւ հոգեկան կարողութեանց մշակութիւնն եւ ծաւալումն է : Ան մի դորաւոր եւ անվրէպ միջոց է որ կապահովէ մարդկային ազգի բարեօրում եւ ընկերական դիւրակեցութիւն . սովաւ է որ մարդ կը դանէ իւր կատարելութիւն եւ հետեւաբար երանութիւն :

Մարդուն կենդանական կարողութիւնն որ կ'ըսեմ, կուղեմ հասկըցունել մարմինն իւր բոլոր անդամներով, ջիղերով, ոսկրներով, որպէս նաեւ զգայնութեամբ, ծնելութեամբ եւ այլ շարժումներով :

Նախ ակար է մարդ այս կարողութիւններու մէջ, բայց քանի յառաջանայ կենաց անպարէզի մէջ, սոքա կը զօրանան, կ'աճին, կը կատարելագործին եւ իւրեանց պաշտօնին կը յարմարին :

Իսկ հոգեկան կարողութիւնն կը ներկայէ երկու բան . միտք եւ սիրտ :

Մտաց կարողութեամբ կըմբռնէ, կը դատէ, կը վճռէ, կ'որոշէ, կը հնարէ, կը յիշէ եւ կ'երեւակայէ եւ որ կը կատարելագործի արտաքին եւ փորձառական գոտիարակութեամբ :

Եւ սրտի կարողութիւնն բարոյական զգացումներու կրթութեամբ կը վերացունէ մարդն իր գոյութեան մէջ :

Եւ եթէ մարդս ունի մի իրաւունք ազնուութեան եւ աւազութեան արարածներու կարգին մէջ եւ հանդիստ ու երջանիկ լինելու շարժառիթ, սոյն ալ սրտի այս բարոյական կարողութիւնն է :



Սորա կատարելութեամբ է որ մարդ սինդե-  
րաց գերազոյն արարիչն ճանչելով կը տիրանայ  
արդարութեան եւ ճշմարտութեան , եւ կատարելով  
իւր պարտքերն կը լինի ճշմարիտ եւ կատարեալ մարդ :

Հոս մի փոքր իմ ձայն մայրերու ուղղելով կը  
փափաքիմ խօսիլ նոցա հետ մի քանի կարեւոր ճըշ-  
մարտութիւններ :

Մայրեր , դուք որ ձեր սիրալիր զուակաց ծը-  
նունդն կ'ողջունէք բերկրութեամբ , լսեցէք ձեր աղ-  
գականներ եւ համօրէն բարեկամներ որ եւ ձեզ հետ  
քաղցր ցնծումով համակուած ձեր նորածին զուակի  
ապագայ լաւութեան համար սրտառուչ մաղթանք-  
ներ եւ սիրփիչ յոյսեր կը տրուեն ձեր առջեւ . զգու-  
շացէք զի մի գուցէ խաբուիք այդ յոյսերէ . քանզի  
յոյս եւ աղօթք որ միաւորած չեն գործի հետ՝ ան-  
կարող են արդիւնաւորիլ . յուսացէք եւ աղօթեցէք .  
այո՛ , զի սօքս յաջողութեան նախաշաւիղներն են .  
բայց գործեցէք ալ , որպէս զի կարողանաք գանել  
իրական լաւութեան անխտոր ճանապարհն :

Մեծ եւ ծանր է յիրաւի մայրական պարտուո-  
րութիւն . եւ որքան մեծ եւ ծանր , քնքան եւս  
սուրբ եւ նուիրական . քանզի բաւ չէ միայն մարմ-  
նապէս յաշխարհ բերել , այլ պէտք է զան գնել  
ճշմարտութեան եւ ուղղութեան շաւիղին մէջ :

Երանի այն մայրերու՝ որ իւրեանց փոյթեանդ  
ճիգերով իւրեանց որդիներն ուղիղ մարդեր կը պատ-  
րաստեն , Սատուծոյ խոնարհ երկրպագուներ եւ հայ-  
րենեաց բնաիր զաւակներ կը յօրինեն գնոսս : Ո՛հ ,  
քանի մեծ եւ անհամեմատ կը լինի ապագայի մէջ  
նոցա ուրախութիւն , երբ քաղեն եւ վայելեն իւր-  
եանց ճիգերու պտուղներն :

Մայրեր , ձեր առ որդիս ունեցած մայրական  
պարտերն պէտք է որ նոցա անտիական հասակէ  
սկսեալ ի դործ դնէք մեծ արթնութեամբ . բարի  
մայրեր , զիտեմ զի ձեր սիրտեր զաւակի վրա ե-  
ռանդազին վառուած հանապաղ կը փափաքիք նոցա  
բարելաւութեան , որպէս զի նոցա որդիական փո-  
խադարձ սէրն ալ վայելելով հողելին զմայլիք նո-  
ցա նախանձելի վիճակին վրա , բայց սրպէս եւ ինչ  
միջոցով կարող էք արդիւնաւորել ձեր յոյսեր եւ ինչ  
վստահութիւն ունիք որ նոքա ի դերեւ չը հանեն  
այդ յոյսեր : Կենաց ձմեռին մէջ , ուր ձեր միակ  
մխիթարութիւն պիտի լինին ձեր զաւակներ , արդ-  
եօք պիտի համապատասխանեն ձեր յոյսերուն :

Աղէ՛ , մտէ՛ք մի անգամ ընկերութեան մէջ եւ  
դիտեցէք պատահածներն : Ահա կը ներկայի ձեզ մի  
զարմանալի հակապատկեր , որ կը պատկերացունէ  
մի քանի ընտանիքներու վրա բերկրութիւնն , խա-  
զաղութիւնն եւ հանգիստն , եւ ուրիշներու վրա  
վրդովում , խռովութիւն , խեղճութիւն եւ տառա-  
պանք :

Այս երկու դաս ընտանիքներ ձեր առջեւ տե-  
սած ատեն՝ հարկաւ հետաքրքրաբար պիտի հարցու-  
նէք թէ ինչ է այս տարբերութիւն , ինչէն մին եր-  
ջանիկ , միւսն ապերջանիկ է : Ինչէն մի գասի ըն-  
տանիքներ կը վաւելն կենաց քաղցրութիւնն , իսկ  
միւս գասի ընտանիքներ թշուառութեան մացառա-  
խիտ անտաններու մէջ կը մոլորին զուրկ ուրախու-  
թիւնէ :

Կուզէք հասկանալ այս տարբերութեան աղ-  
բիւր , կուզէք գիտնալ միոյն երանութիւն եւ միւ-  
սոյն թշուառութիւն բերող իսկ իսկական պատճառ-



ներն , վերջապէս կողէք տեղեկանայ թէ ուստի ծագում առած է ընտանեկան կենաց մէջ այն հակապատկեր տեսարան , ուր մին ընկերակրութեան , եղբայրութեան եւ երախտագիտութեան զգացումներով կապուած ատեն միւսն կիրքերով յուզեալ , առաջութեան հուրով եւ գառնութեամբ լցեալ կը կրքէ անմխիթար գգազողութիւններ , արդ ուշ դրէք հետեւեալ պատմութեանս :

Մի ընտանիքի մայր կը ճանչեմ որ այս միջոցիս կեանքի յետին հասակին թեւակոխած է : Սա իւր մանկամարդ հասակի մէջ կորուսած էր իւր սիրական ամուսինն եւ մնացեր էր երկու մանչ զաւակներով :

Յօճանէս , անդրանիկ որդին , տասերկու տարեկան թողոյով իւր հայրենի երկիրն հեռացած էր մօրը քովէն , եւ շատ քաղաքներ անցնելով Պրուսիէ մինչ Սեպտեմբրիոյ հասած էր 1854 ի Արեւելեան պատերազմի ժամանակ : Հոն այս պատանեակ իւր խոհեմ , անտեսող , գործունեայ եւ փութաջան վարքով հարստացեր եւ վերագարձեր էր իւր մօր քով եւ ամուսնանալով մի մեծ ընտանիք կը կազմէր իւր մօր՝ եզրօր՝ տիկնոջ եւ մի ազգականուոյ հետ :

Հարուստի յտուկ մի գեղեցիկ քնակաբան եւ ճօխ կարասիներ ստացեր էր , նոյնպէս եւ կալուածներ եւ հողեր ունէր եւ իւր շահաւոր վաստակով կը լիացունէր իւր ընտանիքն : Ա՛հն օր կը պարպէին ուրախութեան նեկտարն եւ վայելից բաժակն , վիշտ եւ կսկիծ հեռի էին ի նոցանէ :

Այլ աւանդ , այս ընտանիք եւս երկար առեւելք մնաց այն ուրախ եւ ցանկալի վիճակի մէջ :

Մի գիշեր , անագորոյն մահ իւր սայրատուր գերանդն առած կը մանէ Յօճանէսին տունն եւ իւր

ամենածախ երկաթով կը կտրէ նորա կենաց թէքն , որով եւ կ'աղաւաղի այս ընտանիքի կացութիւնն : Կը լայ , կ'ողբայ այն ծերունի բարի մայրն , զի իւր զաւակի կորուստն հետ կը կորուսնէ նաեւ իւր սիրտի եւ բարօրութիւն , կը լայ իւր սիրտի խորհրէ , զի բաժնըւելով իւր սիրական որդւոյն կենակցութենէ՝ բաժնըւեցաւ նաեւ սերակրութեան վայելքներէ :

Մի գարնանաք եւ մի տարակուսիք թէ արպէս մի հարուստի ժառանգորդ ընտանիք խսկոյն իւր բարօրութենէ ի գգազողութիւն գլորուեր է :

Տեսէք որպէս աւերեցաւ այս վարժամ ընտանիք :

Յօճանէսի մահէն յետոյ յայտնի է թէ նորա ընտանիք պիտի ժառանգէր զոյքն :

Արդ՝ Յօճանէսի կինն անելով իւր բաժին կը գառնայ անգաւակ իւր հայրենի տունն :

Գամք Յօճանէսի կրտսեր եզրօր . Պօղոս , որ իւր երկրին մէջ ծաղկեալ մի արհեստի եւս տէր էր . բացց աւանդ , զի սա շոտայութեան անձնատուր եղած էր միանգամ , շոտայութիւն որ յաւէտ յաջողակ է ամենածախ հարստութիւններ ալ փճացունելու :

Իւր եզրօր մահէն առիթ գտած՝ կըսկսէր այնուհետեւ Պօղոս աղատաբար ի դօրծ դնել իւր մտլութիւններ , ծոյլ եւ անաշխատ կեանքի միտումներ միացած վատթար շոտայութեամբ , այլ եւս դօրծ , աշխատութիւն ոչինչ կը թուին նորա աչքին . փէ՛ն , ի՛նչ պէտք է աշխատիլ , կըսէր իւրովի , ահա ես կը վայելեմ մի ճօխ ժառանգութիւն , որ մինչեւ դերեզման կապրեցունէ զիս : Եւ այս ձա-



խող խորհուրդով խելագարի նման միշտ կը թափառի սրճարաններն , գինեատուններն եւ դրօսավայրերն :

Նա խապառ կը թողէ իւր աշխատութիւնն եւ կը վազէ անիրաւ զուարճութեանց ետեւէ :

Անն աչսպէս է ետութիւն , այս վնաս կիրք այնպէս կուրացուցեր էր նորա միան , զի չէր խորհէր թէ որքան ալ չափաւոր եւ անմեղ զուարճութիւններ օրինաւոր եւ արդար եւ վայելուչ լինին , այնքան ալ կարգէ դուրս անսովոր օրեր գործէ քաշուած դրօսանքի հետեւելի անարժան եւ ապօրինի է . բայց ուր կը վնասուես այս բաներ մտածող զըլուխն . Պօղոսի ուսերսն լրա , նա որ կը ծաղրէ եւ կը հեղինէ ապագայն . օ՛հ , օ՛հ , կ'ըսէ արհամարհ ձայնով , ապաշայն խորհիլ , վաղիւն այսօր մտածել քննչ փուճ բաներ են :

Եւ իւր բաժակն պօրայել դրաղելով կը կրկնէ աշխարհակալին Արտաշէսի սան խօսքն . « կեր , անք , եւ ուրախ լեր , զի վաղ մեռանիս » :

Ապառաժուտ կամ անմշակ հողի վրա ցանուած սերմերն ինչ կ'արդիւնաւորեն , քան այն տեղն զոր ոտդեցին ժիր մշակի քիրտերն : Այսպէս եւ ինչ պառուկ կրնան բերել պիղծ սիրտերու անդաստանին ինկած բարի խրատներ , որքան բարի եւ խղճահար սիրտեր անպիտան խրատներէ եւս օգուտ կը քաղեն :

Պօղոս ալ չարաչար հետեւեցաւ . Արտաշէսի խօսքին , որ խոհական մարդու համար մի բարի խըրատ կարող է լինիլ , բայց բարի գործելու համար պէտք է զի սիրան եւս բարի լինի . ինչ հեռաւոր բան այնպիսի մարդէ , որ կարծես իւր կեանքն եւ գոյք վասնել ուխտեր էր բաղոսեան տաճարի մէջ :

Եւ արդարեւ վառնեց ամեն բան , մինչեւ իսկ տան կարասիներէ շառն , որով թէ ինք եւ թէ իւր մայրն յետին ծայր թշուառացան . Յօճանէսի մահէն քիչ ժամանակ յետոյ :

Եւ այն ծեր կլինն որ կեանքի սառնապատ եղանակի մէջ կը յուսար վայելել իւր դաւակի միութարութիւնն եւ օգնութիւնն . եւ այդ զեղեցիկ յոյսերով օրօրած էր Պօղոսն ալ , սխալած տեսաւ զինք իւր զուարթ ակնկալութեան մէջ :

Այս խօսքերով չեմ ուզեր հետեւցնել թէ մի մայր չը յուսայ օգնութիւն եւ սիրտի իւր դաւակէ . — ո՛չ :

Արդարեւ մի մայր եւ մի հայր , կարող են դաւակաջ վրա դնել իւրեանց ապագայ յոյս , եւ վայելել նոցա օգնութիւնն ու բարիք . բայց սն դաշամբ զի պէտք է մեծցունել զայն գեղեցիկ եւ կատարեալ գաստիարակութեան մէջ :

Մարդկային վարք կը նմանի այնպիսի հողերու , որ երեսի վրա թողած ստնն կ'արտաբերեն միայն անպիտան խոտեր . բայց թէ անըւրի մշակութեան ներքեւ յայնժամ խոտաներկիրն կը վերածի արդիւնաւոր անդաստանի , եւ նա որ յառաջ անպէտ եւ ապարդիւն խոտերով , փուշերով եւ տառասկներով պատած էր՝ այժմ իւր առատ բերքերով կը պսակէ մշակողի քիրտերն :

Մարդ այնպիսի անարդ եւ յոռի կիրքերէ կը յախշտակի իւր մանուկ հասակի մէջ՝ որում եթէ յօգնութիւն չը փութայ մի բարերար ձեռք , ալ այնուհետեւ յաւէտ գերի կը մնայ նոյն կիրքերու :

Չափահաս մարդու բարի կամ չար ունակութիւններն մատնանիչ կընեն իւր մանկութեան ա-



անն ընդունած դաստիարակութեան օրայիտութիւնն :  
 Արպէս մի քնքուշ ծառ դեռ իւր աճումն չ'առած՝  
 կրնայ շտկիլ իւր ծուռութենէ . մարդն ալ երբ բա-  
 րի կրթութիւն չստանար փոքր հասակի մէջ , ալ  
 մինչեւ մահ կը յարատեւէ այդ անուղղայ բնութեամբ :

Գալով վերայիշեալ Պօղոսի մօրն՝ կըսեմ . նա  
 չը կարողացաւ անթերի կատարել իւր մայրական  
 պարտաւորութիւն . զի , որպէս յայտնի է , Պօղոսի  
 մատղաշ հասակին մէջ՝ ուր սիրան իւր մնորամօմ  
 կ'ընդունէր ամէն կերպ տպաւորութիւն . այդ պար-  
 զամիտ մայրն անփոյթ դաւած էր նորա յոռի բնաւո-  
 րութիւններն , մղի հակամիտութիւններն եւ ան-  
 կիրթ ճաշակներն ուղղելու մասին :

Մայրական գործին որ անքան ազդու եւ պեր-  
 ճախօս է մի զաւակի սիրտին եւ միտին վրայ , չէր  
 ցուցած նմա յաճախ :

Պօղոսի գարուն հասակին այն է պատանեկու-  
 թեան մէջ չէր համոզած թէ քանի՛ քաղցր է աշխա-  
 տութիւն , քանի՛ օգտակար է անտեսութիւն , քանի՛  
 զուարթարար է առաքինութիւն :

Անմշակ եւ ազէտ թողած էր նորա միտն . չէր  
 զարթեցուցած նորա երեւակացութիւնն ժանտ մո-  
 լութիւններու եւ չարագործութիւններու անաւոր  
 պատկերին վրա , ոչ ալ մի ուսուցիչ փայլեցուցած էր  
 նորա առջև յաղագս իւր անձի անբաւականութեան :

Աւերմն Պօղոս իւր մօր դաստապարտելի անձո-  
 գութեամբ չէր ուսած ուղիղ կենցաղավարութիւն .  
 չէր ուսած թէ ինչ պարտքեր ունի մարդ առ Աստ-  
 ուած , առ ընկերն եւ առ ինքն . այլ նա մեծցած  
 էր զուրկ մի բանական արարածի վայելուչ ունա-  
 կութիւններէ :

Եւ վերջապէս Պօղոս բարոյական եւ մտաւոր  
 դաստիարակութիւնէ անբաժին սոսկ կենդանապէս  
 մեծնալով էր որ իւր ընտանիքին աւերում եւ թըշ-  
 ուտութիւն պատճառած էր :

Ահա երեւակայեցէք , մայրեր , այն աղէտներն  
 եւ ցաւեր որ յառաջ կը բըլխին մի անկիրթ որդիէ .  
 տեսէք թէ ինչէն ընտանիքներու շրջանին մէջ մի-  
 ասին կաճին ծաղիկ եւ փուշ . կամ երանութիւն եւ  
 թշուառութիւն . զգացէք թէ դաստիարակութեամբ  
 պէտք է ուղղել մարդն իւր տղայ հասակին մէջ ,  
 որպէս զի նա իւր ընտիր վարքով մխիթարութիւն եւ  
 ուրախութիւն լինի իւր մօրն : Ի միտ առէք թէ շատ  
 ընտանիքներու զժգաղղութեան հիմնական պատ-  
 ճառ անկիրթ զաւակներն են :

Մտաւոր կութութիւն , անտեսական սկիզբ-  
 ներու անմասնօթութիւն , անխոհեմութիւն եւ ան-  
 հեռատեսութիւն , այս բաներն են որ կեանքի չաւի-  
 դին մէջ չէ թէ միայն կը մոլորեն մարդն օրինաւոր  
 ընթացքէ , այլ եւ ընտանեկան գրութեան որպիսու-  
 թիւնն կը զանաղանեն : Կրթեալ մարդն կրթեալ ըն-  
 տանիք կը կազմէ , որով կը վայելէ երանութիւն եւ  
 խաղաղութիւն . իսկ անկիրթ եղողի ընտանիք ճա-  
 խաղ գէպքերով եւ խեղճութեամբ կը լցուի . . . :

Այսպէս զգալի կը լինի դաստիարակութեան  
 անհրաժեշտ կարեւորութիւնն . եւ ո՞վ կարող է ու-  
 րանալ նորա օգուտներն որ մարդկային սեռի բա-  
 րօրութեան նպաստաւոր միջոց համարւած է . եւ  
 զոր գարուս հանճարաւորներն նկատեցին իբր մի  
 ստիպողական պէտք կեանքի ճանապարհն հեշտ եւ  
 ուղիղ պատրաստելու համար :

Եւ քանի որ դաստիարակութեան կարեւորու-



Թիւն այսքան զգալի եղած է , ձեզ ալ կը մնայ ուրեմն լսել իմաստուններու խորատին . « Կաստիարակեցէք ձեր զաւակներ » . գաստիարակեցէք զնոսա , այս , բայց կատարեալ գաստիարակութեամբ :

Թերի եւ անկատար գաստիարակութիւն աւելի վնաս է քան անկրթութիւն :

Գաստիարակութեան մի ճիւղին մէջ վարժել , միւսին մէջ անվարժ թողել , միոյն մէջ գիտուն ընել , միւսին մէջ սողէտ , սա եւս անօգուտ մանաւանդ վնասակար է :

Մի ո՞ր եւ է անձի լոկ կենդանապէս կատարելագործիլն եւ մտաւորի եւ բարոյականի մէջ խակ եւ թերակատար մնալն ընսւ չեքաշխաւորեր նորա ազադայ լաւութիւն :

Երեւակայեցէք մի կենդանապէս սնած եւ գարգացած մարդ , գիտեցէք եւ տեսէք նորա կեանքն , շարժումներն եւ գործերն : Տեսէք , ի՞նչ փայլուն առոյգութիւն իւր կերպարանի վրա , ի՞նչ քաջութիւն իւր նայուածի մէջ , ի՞նչ առողջութիւն իւր անձի վրա , ի՞նչ անվեհեր շարժումներ , ի՞նչ արիասիրտ քայլեր , ի՞նչ ուժեղ եւ ջգալի բազուկներ :

Ահա մի մարդ՝ որ մարմնական կատարելութեան ճշգրիտ տիպար կը հանդիսանայ . լսւ . բայց երբ թախանցե՞ք նորա գոյութեան աւելի խորն , սրպիսի արգահատանք պիտի շարժէ զմեզ տեսնելով նորա հոգեկան ընութիւնն խոպան եւ անմշակ Գիտեցէք , ի՞նչ անկատար է նա այս մասի մէջ . մտաւոր տխուր գատարկութիւն կը տիրէ իւր վրա , ունայն խօքեր իւր բերանի մէջ , անարժէք գազափարներ եւ կարծիքներ իւր լեզուի վրա : Անզգաղ իւր գործադուլի ժամերուն մէջ , տաղաուկ եւ սրբա-

նեղութիւն կը պաշարէ զնա , կը ձանձրանայ , եւ չունի մի քաղցր եւ անմեղ վայելք իւր անգործ ժամերուն մէջ :

Գոնէ միայն կարգւն գիտնայ . . . :

Ի մի բան՝ նորա մտաւոր կեանք ծանրացած է անբաւ ունայնութիւններով . քանզի լոկ կենդանապէս գաստիարակած է , եւ բանականութիւն որ միակ նշանն է մարդն անասուններէ տարբերող , վրիպած է ուշադրութենէ :

Երեւակայեցէք նաեւ մի այնպիսի մարդ՝ որ քիչ շատ հմտութիւն ունի ընկերութեան մէջ ամենակարեւոր եղող գիտելիքներու վրա . նորա միտն պճնուած է ուսման եւ դիտութեան գեղանի զարգերով . բայց սա եւս ազատ չէ պարսաւէ . քանի որ ուսումն եւ գիտութիւն չը միացունէր բարոյականի կամ առաքինութեան հետ : Զի նա՞ որ կը մեղանչէ բարոյականի դէմ , մարդկային ազնիւ զգացումներու եւ անքիժ ու առաքինական վարմունքի դէմ . անուս եւ սողէտ անձերէ աւելի պարսաւի եւ դատապարտութեան արժանի է . քանզի գիտութեամբ եւ իւր եսական կամքն հաճելու համար է որ կը մեղանչէ այդպիսին . զի գաստիարակութեան ամենամեծ նըպատակն մարմինն եւ միտքն կրթելէ զատ մարդկային սեռի ուղիղ եւ մաքուր բարոյականն պատրասել եւ այնմ հսկել է :

Արեւմն , մայրեր թէ կուգէք որ ձեր որդիներ իւրեանց գովելի ընթացքով մխիթարութիւն լինին ձեզ , փոյթով ջանացէք զի նոքա գաստիարակութեան երեք ճիւղին մէջ անթերի կրթւին եւ արժանաւոր անդամներ լինին թէ ձեր ընտանեաց եւ թէ մարդկային համատարած ընկերութեան :



Ո՛հ . . . երանութիւն , զոր մեր կեանքի միակ նպատակն կրղզածք , այնքան հեռի չը պլտի լինէր ի մէնջ եթէ հանուր մարդկութիւն զգար դաստիարակութեան մեծ պէտքն եւ եւ ընդհանուր եւ անթերի կերպով տարածէր զայն իւր բոլոր խաւերու մէջ :

Յայնժամ մեծ մասով կ'անհետէին երանութեան արտին մէջ ցանաճ թշուառութեան որոմներն , եւ տառապեալ մարդկութիւնն ազատ քայլեր կ'առնէր դէպ առաջդիմութիւն :

Այո՛ , այն ատեն յառաջ կ'երթայինք երբ մարմնոյ , մտաց եւ սրտի դաստիարակութիւն ընդհանրապէս ծաւալէր մարդկային ընկերութեան մէջ , երբ մարդկութիւնն դաստիարակութեան դձերեք ճիւղին մէջ ալ շատ անդամներ ունենար վարժ եւ կիրթ :

Երբ մի տղայ կենդանապէս այսինք մարմնով դաստիարակելի , միանգամայն մտաւոր դաստիարակութիւնն եւս դանց չառնըւէր , եւ սրտի կրթութիւնն որ բարոյական զգացումներու եւ կատարելութեան մշակումն է , իբր խոտան եւ անպիտան չը յապաւէին , այլ մանուկի կրթութեան իբր ամենակարեւոր եւ ստիպողական մասն յոյժ կարեւոր բանի տեղ դնէին եւ այս գրութիւն ընդունէր բոլոր մարդկային ընկերութեան մէջ . այո՛ , այն ատեն մարդ էակն ազատօրէն դէպ յառաջ կ'երթար երանութեան շաւղին մէջ :

Քանզի , որպէս յայտնեցի վերը , կատարեալ եւ օգտակար դաստիարակութիւն այն է՝ որով մարդ կը հրահանգըւի իւր մարմնոյ , մտաց եւ սրտի կարողութիւններու մէջ համանշանայն : Եւ այս դրու-

թեան պակասութիւնն է կարծեմ , որ դուռ կը բանայ ընտանեկան ցաւերու եւ թշուառութեան :

Եւ ընտանիքներու թշուառութիւնք մեծ կը պատկանին , մեծ այնքան հզօրապէս կ'ազդեն , եթէ ոչ համայն ընկերութեան , զի ընտանիքներն չեն որ կը կազմեն ազգերու օգակներն եւ ազդերն չեն , յորոց կը ձեւանայ մարդկային համատարած ընկերութիւն :

Սրբ , որովհետեւ ընկերութեան բաղդն ընտանիքներու ծոցէ կը բխի , եւ որովհետեւ առաքինի եւ բարեկիրթ անդամներէ զուրկ ընտանիքներ կը տառապին թշուառութեան մէջ , ապա պէտք չէ աշխատիլ զի նախ ընտանիքներու երանութիւնն պատրաստեմք մարմնոյ , մտաց եւ սրտի կատարեալ դաստիարակութեամբ :

Եւ երբ ընտանիքներու որդիներ այսպիսի դաստիարակութեամբ զարգանան եւ երջանկանան , հետեւութիւնն այս է , որ այն ընտանիքներն բազկացունող ազգն ալ պիտի երջանկանայ :

Ահա ընկերական վիճակի վրա դաստիարակութեան ունեցած այս մեծ ազդեցութեան համար է որ դարուս մէջ այնքան կարեւորութիւն տրւած է այս խնդրոյն , եւ ոյր վրա որքան ալ խօսուի , սրբան ալ վիճաբանութիւն լինի , սրբան ալ թուղթ սեւնայ , գարծեալ քիչ է :

Ըստ իմ կարծին , ուրիշ բան այնքան նպատուաւոր չէ ընկերական բարեխառութեան գործին՝ նաեւ մի ազգի մէջէ մանաւանդ Հայ ազգի նման անկեալ եւ ցիր ու ցան ազգի անհասանելի Եսութիւնն բաճնալու համար ուրիշ զօրաւոր օժանդակ չը կայ՝ որքան մի կատարեալ դաստիարակութեան համայնական ծաւալումն :



Իմ սիրելի ազգի օրհիններ , մայրեր , հայուհիներ , դուք գիտէք թէ քանի մեծ է ձեր դորուծիւն ազգի ճակատադրին վրա . ուրեմն ազգի բարեքին , նոյն իսկ ձեր բարեքին համար ձեր բոլոր կարողութեամբ աշխատեցէք ի ծաւալումն ազգային դաստիարակութեան եւ ձեր պրոբններու վրա պիտի կարգացուի սա անլուելի բարբառն .

ՕՐՀՆԵԱՎ ԼԻՆԻՆ ՆՈՒՄ՝ ՈՐ ԱՌԱՆՅ ԵՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՄԱՐ ԿՄԱՇԽԱՏԻՆ ԵՒ ԿԸ ՔԸՐՏԸՆԻՆ :

### ԻԴ

Միթէ զէնքերն են , միթէ թնդանօթներն կամ հրացաններն կամ ռազմական փողերու ընդ միշտ հնչուններն են որ կ'ապահովեն մի ազգի ապագայն , երանութիւնն եւ բարգաւաճումն . — ոչ , ոչ , երկբորդական պիտոյքներ են սոքա :

Մի ազգի կենդանութեան եւ առաջըլիմութեան առաջին եւ անժխտելի պայմանն է կրթութեամբ կատարելագործել մարմինը եւ միտը եւ սիրտը , եւ հասցունել այնպիսի անհատներ որ իւրեանց այդ կատարելութիւններով խորտակեն Եսութիւնն եւ Վատութիւն եւ սիրայօժար նպաստն ազգի առաջըլիմեան :

Ազէ , բանտիք պատմութիւնն եւ մի փոքր նըշմար դարձունեմք հին դարերու եւ հին ազգերու վրա :

Ո՛հ , ի՛նչ ցաւալի բան , զի ժամանակով աշխարհի առջեւ յառաջդէմ եւ քաջ հանդիսացող ազ-

գեր հիմա պատմական յիշատակարաններու մէջ չոր անուններ միայն թողած են . որպէս Կարքեղոսացիք , Հոռմայեցիք , Փիւնիկեցիք , Սպարտացիք եւ այլ բազում ազգեր :

Ո՛ւր են այն անեղ եւ մեծագոր ազգերն , որ երբեմն աշխարհ կը սասանեն եղեր . — կործանման վիատակներու տակ :

Բայց էր այսպէս անկարծելի անկումով իւրեանց մեծութեան բարձրերէ վար կը գլին . ի՛նչ եղաւ դոցա . — Սյո՛ , կործանեցան . քանզի իւրեանց ազգութեան հիմերն չը հաստատեցին վերոյիշեալ դաստիարակութեան հաստատ վէժին վրա , այլ նախամեծար սեպեցին զինաշարժութեան , արիւնհեղութեան , աշխարհակալութեան եւ պատերազմական աւերածութեանց խախուտ աւազուտին վրա կանգնելն :

Ո՛րպիսի անարդ ատելութեամբ կը նայէին օտար ժողովուրդներու վրա եւ ի նախանձ ի թշնամութիւն կը գրգռուէին :

Սրտի եւ մտքի կրթութենէ զուրկ , նոքա միշտ պատերազմական արիւնալի յաղթանակներ ձեռք բերելու տենչով սպառեցին իւրեանց մեծութիւն , ուժ եւ կենդանութիւն , երբ կը կարծէին թէ կը յաւելին դայնս :

Յիրաւի վերոյիշեալ հին ազգերն այնպիսի սքանչելի արիութիւն եւ հայրենասիրութիւն ունէին , որ հազուադիւտ է մեր ազգի բազմադարեայ կենցաղին մէջ . բայց աւանդ , զի իւրեանց այդ եւսական զգացումներու մէջ եւս խոտոր քայլելով կը սխալէին :

Ո՛րն է ճշմարիտ արիութիւն եւ հայրենասիր-



բութիւն . ուրիշ ազգերն կամ ժողովուրդներն աւանց մեծ իրաւունքի կոտորէին , յազմէն , նուաճեցին . — չէ թէ արիութիւն , այլ վատութիւն , վայրենութիւն են սոքա , մարդատեցութիւն են եւ չէ թէ հայրենասիրութիւն :

Երնամս երկրիդ մէջ օգտակար եւ իմաստուն օրէնքներ հաստատել , հանուրին օգտակար ծառայութիւններ մատուցանել , ընկերակրական գործեր գործել , բարոյական սկիզբներ տարածել եւ լուսամբոս դադափարներ հաղորդել . անս այս եւ այսպիսի սահմաններու մէջ ամբիփուած է ճշմարիտ հայրենասիրութիւն :

Ե՞ր կը յարձակէիք մի ազգի վրա , երբ դայն կը տեսնէիք ուժի մէջ տկար քան զձեզ . էր կուզէիք լափել ջնջել դայն որ յարձակողական զիրք չէր բռներ եւ ուրիշներու իրաւունքն կորզելու եւ երկիրներ դրաւելու այնքան տրամադիր չէր . ուրիշ ազգերու փրատակներով եւ կողոպուաներով կուզէիք ճոխացունել ձեր պետութիւններն . բայց անս ձեր բաժինն եզան անկում եւ աւերում . անս զըրկեցիք վերջապէս սեւ գերեզմաններն :

Նոյն իսկ այն աղիտալի պատերազմներու որոց սոսկալի նկարագիրն յաճախ ուրեք կը տեսնենք պատմութեան արիւնալի էջերուն մէջ , երբ մի եւ նոյն հօրէ եւ մօրէ սերած բայց իրարէ անջատ ժողովուրդներ իրարու արիւնն թափելով դալարազարդ մարգերն կը ներկէին . այն վայրագ պատերազմներու նպատակն ինչ էր , թէ ոչ երկրակալութիւն եւ վեհասպետութիւն . ետութեան անարդ ծնունդներ , որ մարդկութիւն իւր փառաշքէդ մեծութենէն անասնային ցածութեան խոնարհեցուցին , որ կասեցու-

ցին մարդկային առաջդիմութիւնն իւր ընթացքէ , որ արդարութեան եւ իրաւանց զգացումներն խեղդեցին , խափանեցին եւ արգիլեցին բանական լոյսի ծաւալումն , որ մարդկային ընկերութեան մէջ սրիւնեցին անհնարին զեղծումներ , մոլութիւններ եւ անկրթութիւններ . անդիտացան պարտուց եւ իրաւանց մասին , անդիտացան սիրոյ եւ արդարութեան մէջ , եւ ազգ ազգի դէմ այնքան երկար դարեր ժայթքեցին ատելութիւն եւ թշնամութիւն :

Ար դիտես , Հայ տղայ , մարդկային ազգի վրա ինչ սոսկալի աղէտներ հասուցած է ետութիւնն , եւ քո սիրան զեռ բանց պիտի թողուս այս վատ կիրքի . ան , այդ ինչ սիրտ է ուրեմն . . . :

Աղեքսանդր Մակեդոնացին երբ կը տեսնէ իւրեան համառուն մի գինուոր որ կը վախէր անցնիլ մի գետէ , կ'ասէ բարկանալով՝ կամ սիրտդ փոխէ անունդ . ես ալ կ'ատեմ քեզ , Հայ , կամ սիրտդ փոխէ եւ մարքէ ետութեան պղծութենէն , կամ զարկ եւ յօշատէ՛ դայն , որպէս զի չը միտայ այնպիսի անարժան սիրան , որ անտարբեր է մարդկային պատուոյ եւ ցաւու :

Տունիդ կակուղ բարձերուն վրա ընկողմնած ատենդ՝ չես յիշեր քո այն համարիւն եղբայր , որ իւր գիշերային խշտիկն իսկ ի վաճառ կը հանէ տիրող պետութեան տուրք հատուցել կարողանալու համար , եւ երբ դու կը ննջես անողոր քո փառաւոր մահիճի մէջ , ապահով թշնամոյ յարձակումներէն , հեռուն՝ եղբայրներ , քոյրեր ունիս որ անծածկոյթ մնացած են , եւ որոց աչերէ քուն հեռացած է . զի մի՞ գուցէ հարոտահարող ապստամբ Քիւրտն յարձակի յանկարծ եւ իւրեանց քունն ի մահ փոխէ ,



կամ լրիէ անմեղութիւնն եւ կողոպտէ իւրեանց կենսապահիկն : Մ՛հ , ի՛նչ դառն երկիւղներ են ստքա , որ յաճախ յիրութիւն կը փոխուին : Ապրիլ է այս . մանաւանդ ամեն օր մեռնիլ չէ . չարչարելի՛ եւ չը կրնալ ազատիլ , աշխատիլ՝ քրտնիլ եւ հացն յափըշտակողին կերցունելով անօթի մնալ , ապրիլ է այս :

Բայց քո ապրիլն եւս ապրիլ չէ , ս՛ բարեկեցիկ Հայորդի , որ այնպիսի կենաց , պատուոյ եւ գոյքի սպառնացող վտանգներէ ազատ կը յօրանջեա մի անդգայ եւ անտարբեր ետութիւնով , հեռի ազգակիցներէդ , հեռի հայրենիքէդ , հեռի նորա վերքերն պատելու եւ թշուառ եղբայրներդ եւ քոյրերդ մխիթարելու պարտաւորութիւններէ . բայց լաւ կըշռէ այնպիսի Հայն որ ոչ դգալ դիտէ , եւ ոչ գործել , եւ չուզեր բնաւ վրդովել իւր անձի անդորր . ինչ բաժին պէտք է ունենայ Ապագայէն . եթէ սա աննախանձեկի ժառանգութիւն գոր ստացան փառամոլ եւ անձնատէր վատեր .

ԱՆԷ՛ՄՔ ՆՈՅՍ՝ ՈՐ ԵՍՈՒԹԻՒՆՈՎ, ԱՊՐԵՑԱՆ  
ԵՒ ՄԵՌՍՆ :

### ԻԵ.

Կը պարզէին սուրերն իւրեանց պատեանէ . կը զսպէին երկվարներն իւրեանց սանձերէ , եւ բոցաթիւ կը խիզախէին լեռ , դաշտ եւ ձոր , որ թէեւ կանանչազեղ տեսքով եւ վճիռ ջուրերով կը փայլէին , բայց նոցա սրտի կատաղութիւն անսանձ կը մնար այն դմայլուն տեսարաններու առջեւ . ուրիշ բանի վրա էր նոցա նայուած . դաշտերու լայնա-

ծաւալ տարածումին մէջ սատ անդ կ'արշաւէին , կը խոյանային , այս , ուրիշ բան կուղէին տեսնել :

Եւ անս՛ դաշտերն կարմիրով կը շաղախւէին . բիւրաւոր մարդեր իւրեանց յետին շունչ արձակելու վրա պատկած արիւնաթաթաւ , շատեր վիրաւոր փուած կամ մեռած , ականակիտ ջուրերն արեան կայլակներով ողողած եւ այլագունած :

Ապա կիջնէին երկվարաց թամբէն . դուլ կը տային իւրեանց պարտասեալ բազկաց , կը լուային կը մաքրէին արիւնարբու սուրերն եւ մի կատաղի խնդումով կը դիտէին այն վիրաւոր փուած էակներ զոր ծարաւի երկաթի ժանիքն բզքտած էին :

Բայց սվէին այս արտակերպոն արարածներ , որ իւրեանց նմաններն խոտի նման ի գետին փռելու խիղճ չէին ընէր եւ նոցա ապաժամ մահուան վրա կուրախանային . — աւանդ , անցեալ դարերու պատմութիւնն այսպիսի նկարագիրներով քանի՛ անադորոյն յաղթականներ , դու ըսէ՛ Քահիճներ կը ներկայէ մեզ որ հեռաւոր ազգերն կամ իշխանութիւններն յանիրաւի իւրեանց ներքեւ առնելու կամ մի բազմաշահ բեղմնաւոր երկիր կորզելու համար արիւնով կ'ոռոգէին աշխարհս եւ կը լցունէին տարածամ մեռելութիւններով , վիրաւորներով եւ փլատախներով :

Պատերազմի մահարշաւ դաշտին վրա սուր ի ձեռին փայլատակելով , նոքա անխնայ կը հնձէին երիտասարդ ծաղիկներն , լացի եւ արոսօսի լիճեր կը գոյացունէին ծնողական աչերու մէջ , անբուժելի վերքեր կը բանային քոյրերու եւ հարսերու փափուկ սրտին մէջ :

Եւ մինչ այս ժողովուրդ աղիողորմ կը հառաչէր արիւնի եւ կուրի աղէաներուն եւ կոտորածին



վրա, անդին միւս ժողովուրդ վայրենամիտ խնդու-  
մով « յաղթութիւն, յաղթութիւն » կը դուռար,  
ուրախ հանդէսներ կը կատարէր եւ պատկեր կը  
բաղորէր այն գիւցազնի ճակատին ոյր հետքերն ան-  
քան արիւնայի եւ աւերող եղած էին . . .

Սակայն մարդկային ազգ քայլելով անցեալ  
դարերու բազմաւեր փլատակներուն եւ արիւնայի  
հողերուն վրայ՝ հուսկ ուրեմն հասած է մի անյայտ-  
ալի գարու, ուր պատերազմի անունն լսողին սար-  
սափ եւ զգուանք կ'ազդէ, ուր հաշտասիրութիւնն  
գրեթէ ամեն քաղաքակիրթ ազգի անզուտայ բաղ-  
ձանքն եղած է, (\*) ուր Ս.Պ.Ա.Յ ԻՐԱՆԻՆԻՍԻ կոչւած  
օրէնքն մի նուիրական սկիզբ դարձած է, եւ գիւ-  
ցազնութեան գաղափարն փոխւած է մի ուրիշ ճըշ-  
մարիտ հաճելի եւ վեհ գիւցազնութեան :

(\*) Ա՛րքան ալ մի քանի վեհապետներ ղեռ  
միջնադարի վայրագութիւններուն մէջ կը սիրեն շա-  
րունակել, եւ անցեալ ժամանակներու արիւնոտ  
տեսարաններն վերատին հանել աշխարհի առջեւ,  
բայց ինչ փոյթ, երբ քրիստոնէական հաշտարար  
սկիզբներն տարածելով անդու կը յառաջէ մարդ-  
կային ազգի քաղաքակիրթութիւն, այն կենսատու  
սկիզբներ՝ որ ընկերականութեան բուրստանն են  
սակաւ առ սակաւ տեսլութեան, անդթութեան եւ  
անիրաւութեան որոմներն ջնջելով՝ սիրոյ, գթու-  
թեան եւ արդարութեան սերմերն կը սերմնն, եւ  
որով մարդկութիւնն կերպարանափոխ եղած պիտի  
դադրին անցեալի սրտամորմոք գործերն եւ վերջա-  
պէս խաղաղութիւնն պիտի թաղաւորէ աշխարհի :

Լաէ, ո՛հ Հայ, տես ինչ կը պահանջէ մեր ապ-  
րած ծ.Թ. դարն :

Մեր դարն կը պահանջէ մի անյայտի զիւցազ-  
նութիւն, որոյ փառքն ո՛չ սուր, ո՛չ նիզակ, ո՛չ հը-  
րանօթ եւ ո՛չ ուրիշ մահադէնք կ'որոյդ են յափշտա-  
կել . մի գիւցազնութիւն, ում հետ ո՛չ աշխարհա-  
գորդ կ'ործանեալ պետութիւնն Հոովմէական կըր-  
նար մրցիլ իւր նախնի յաղթակամարներով եւ ո՛չ  
հին դարերու գիւցազններն իւրեանց քաջագործու-  
թիւններով :

Մեր դարն կը պահանջէ անձնուիրութիւն, որ  
է միայն ճշմարիտ եւ գովելի գիւցազնութիւնն :

Ո՛վ սր անձուէր է, նա է ճշմարիտ գիւցազն :  
Ճշմարիտ գիւցազն ես դու, երբ կը տեսնես  
քո նմանն, քո եղբայրն, որ ի կարօտութիւն անկ-  
եալ կը սուչորի, օգնութեան կը հասնիս նմա, ձեռք  
կը կարկառես, թմրութեանն ուժ եւ եռանդ կը տաս  
եւ կը լրացունես նորա պիտոյքն : Չես կրնար դու  
ինքնին կատարել զայս . լաւ, միջոցներ կը փնտռես  
եւ կ'ընկերանաս նոցա որ կարող են :

Ճշմարիտ գիւցազն ես դու, երբ կը տեսնես  
քո աղակերպն որ մաաւոր մշակուամէ զուրկ չը վա-  
յելեր նորա պառուղն, կը տեսնես զի նորա գաղա-  
փարներ միթացած են սոխտութեամբ, առանց շա-  
հադիտութեան կը ջանաս նորա մաքին լոյս տալ,  
գիտութեան եւ հանճարոյ նշոյլներով պայծառացու-  
նել : Երբ չես կարող միայնակ կամ անձամբ ընել  
զայս՝ օժանդակ եւ աջակից կը լինիս ընողին եւ չէ  
թէ թշնամի եւ խոչնդոտ :

Ճշմարիտ գիւցազն ես դու, երբ աննախան-  
ձաբար կ'ուսուցնես աշակերտիդ ինչ արհեստ եւ



գիտութիւն որ ունիս, եւ չէ թէ հետդ իբր թէ գերեզման տանելու համար կը խնայես ինձանէ :

Ճշմարիտ դիւցազն ես դու, երբ անկեալն կը կանգնես, սգաւորն կը մխիթարես, մոլորեալն յուղութիւն կը բերես, ծարաւիին ջուր կը տաս, անօթիին հաց, մերկին հագուստ, տղէտին բարի բան կը սովորեցունես, հիւանդին տես կ'երթաս, բանտարկեալն կ'այցելես, գերեալն կ'ազատես, յուսահատեալն կը քաջաբերես :

Ճշմարիտ դիւցազն ես դու, երբ կը տեսնես քո ընկեր, քո նմանն, որ հոգեով մարմնով ընկըզմած է մոլութիւններու տիղմին մէջ, նոսաստութեան, չարագործութեան եւ այլ վատ կիրքերու ստուերներ պատած են նորա շաւիղն, կը վառես նորա առջեւ առաքինութեան մշտարձարձ ջահն, կը ջանաս դնել զայն մի փառադեղ ճանապարհի մէջ եւ պատրաստել նորա փրկութիւն եւ երանութիւն :

Ահա մեր ապրած ժամանակն այս օրինակ դիւցազնութիւն կը պահանջէ ո՞չ Հայորդի :

Երանի՛ մեզ երբ կատարեմք այս դիւցազնութիւններն, երանի՛ մեզ երբ, հեռի ետութենէ, հայրենեաց համար ապրիմք եւ մեռնիմք այսպիսի անձնութեամբ :

Յայնժամ պատմութիւնն իւր լայնածաւալ էջերու մէջ, մի յաւէժական յիշատակ եւ յաւիտենականութիւն իւր երանաւէտ օթեւանի յարատեւ փառքն պիտի ընծայեն մեզ :

Եւ նոր որդիք հայրենեաց պիտի երգեն եւ յախտագիտութեամբ :

ՕՐՀՆԵԱՎ ԼԻՆԻՆ ՆՈՒՅԱ՝ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՄԱՐ ԱՊՐԵՑԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ :

## ԻԶ.

Ի՞նչ է, սիրելի Հայորդի, ինչ է այն իրիտ եւ թանձր մուխ, որ կը ծխէ անձիւր ծխնելոյզէ . ո՞ր վայրիկ մի վեր կ'արձակի, հազիւ կը շրջի հովին մէջ եւ իսկոյն կը ցնդի կ'անհետի :

— Փառասիրութիւնն է այն թանձր մուխ . մարդկային սիրտն է այն ծխնելոյզ, եւ այն հողմ, ուր կը շրջի եւ կ'անհետի փառասիրութեան մուխն, ժամանակի շրջանն է, որ պահ մի կը ծածանէ մեր սին գործեր եւ ծաղրելով կարծես՝ կանցայտէ զայնս :

Փառասիրութիւն եւս մին է այն մոլութիւններէն, զորս կը ծնի Նստութիւն :

Փառասիրութիւն այն կիրքն է, որ բնածին եւ բնական պիտոյք լինիլ կը թուի մարդ էակի . զի անձիւր սիրտէ կը մխայ, Բայց պէտք չէ զայս դատել երեւոյթէ :

Կան մարդիկ՝ որ սաստիկ փառասէր են, կան մարդեր ալ որ նուազ փառասէր են :

Ուրեմն փառասիրութիւն ո՞չ այնքան բնածին եւ բնական պիտոյք է, ո՞րքան տարափոխիկ ախտի նման մի բարոյական հիւանդութիւն ; որ ճարակած է մարդկային ազդի մէջ :

Փառասիրութիւն ուրիշ բան չէ, բայց միայն ի մեծութիւն հասնելու, ուրիշներէ պաշտօն եւ հրպատակութիւն վայելելու փափաք, որ անդադար կը բորբոքի եւ կը ծխայ մարդկային սրտի մէջ մինչեւ այն յետին վայրկեան՝ ուր դադրի թռթռալէ եւ խոնարհի իջնէ սեւ հողի ներքեւ :



Կան մարդեր պատմութեան մէջ յիշատակւած, որ իւրեանց սիրտերու մէջ առաւելագէտ անեցուներով մեծութեան եւ փառաց տենչն, շատ չարիքներու պատճառ եղած են, որպէս այն անզուսպ աշխարհակալներ՝ որ նետուելով պատերազմի դաշտին վրա, կը հեղեղեն բիւրաւօր մարդերու արիւնն. ուզելով տիրապետել ուրիշներու վրա լացերու եւ ողբերու դուռեր կը բանան, ժողովուրդներու ծոցէն, ընտանիքներու մէջէն կը բառնան հանգիստն եւ անդօրը, եւ սրտամորմոք վիշտեր կը սփռեն մօր եւ զաւակի, հարսի եւ փեսայի, եղբօր եւ քրոջ միջեւ. որոց զէմքերն թաղծալիւր կը տխրին եւ ցընծումի ժպիտներուն կը փոխանակին վիշտ եւ արտասուք:

Եւ այդ խօլ փառասէրներ բոլոր այս ցաւալի պարագայներով կը տենչան փառք ժառանգել, մեծ մարդ լինիլ եւ ուրիշներու զարմանք եւ հիացում չահիլ. սրբան մեծ սխալում:

Միթէ երկրաւոր սին եւ մոլի իղձերով կուրացած իւր նմաններ կոտորելն փանօք է:

Միթէ երկաթի բերանով զաշխարհ արեան մէջ ողողելու վայրագ փափաքն փանօք է:

Միթէ բռնութեամբ եւ տիրապետութեամբ ժողովուրդներու վրա ծանրանալն եւ ահարկու լինիլն փանօք է, մեծութիւն է, — ո՛չ, ո՛չ:

Ապագայի զաւակներ փոխան այսպիսի զէպքերու վրա զմայելու եւ հիանալու աւելի գործով կը գիտնան կամ աւելի արդար զայրոյթով կը դատապարտեն զնոսա, երբ մարդ անուան անհամաձայն կը վարեն աշխարհի վրա եւ առանց ընկերութեան մէջ օգտակար գործերու յիշատակ թողոյ կը մեկնին աստի:

Երբ ակնարկս կը դարձունեմ զէպ Անցեալն եւ պատմութեան շաւիղին մէջ տեղ տեղ կը պատահիմ այնպիսի մարդերու, որ միայն փառաց ծառաւով կատարաբար կ'արշաւէին եւ կը կոտորէին ժողովուրդներն եւ աւերովներ կը դիզէին, կ'աւաղեմ նոցա խօլութիւն եւ կը խղճամ այն ապարդիւն յոռի ճիւղերն զոր թափած են փառաց եւ մեծութեան հասնելու համար:

Ո՞չ միթէ ժամանակի մշտանոյով անիւն անխնայ ի կորուստ վարեց զնոսա, եւ որոց շատերու անխնայ աննշանութեան մէջ թաղւած եւ շատեր ալ անխիճից եւ արդահատանաց արժանի յիշատակներ ժառանգած են:

Ի զՆՐ գոռացին, որոտացին, հրամայեցին, իշխեցին, տիրացան. մի ամենախոր վիճ, գերեզմանն բացւեցաւ վերջապէս նոցա առջեւ, ուր թաւալղլոր վիժելով նոցա մարմիններ որդերու եւ օձերու ուտեստ հայթայթեցան:

Եւ քնչ ունայնութեամբ անցաւ այդպիսեաց կեանք, քնչ արդեօք շահեցան, փանօք, մեծութիւն, համբաւ. սեւ մուխեր, որ անարգ եւ անխիճալ յիշատակներ թողած են:

Օ՛հ, քանի անցաւոր եւ ունայն է այգալիսի փառք եւ մեծութիւն:

Ճշմարիտ փառքն եւ մեծութիւնն, սիրելի Հա՞յ յորդի, պէտք է փնտուել առաքինութեան մէջ հայրենեաց բարենսրատ գործերու մէջ, եւ չէ՛ թէ զայն ստանալու ջանալ այն աղխապի միջոցներով որ աւելի վնաս քան շահ կը գործեն հայրենեաց եւ աւելի նորա վրդովումն քան նորա խաղաղութիւն կը սրտաճառեն:



Ըսէ ինձ, իմ սիրելի եղբայր, երբ անցեալի պատմութեան մէջ կը նշմարես այնպիսի աշխարհակալ փառասէրներու նկարագիրն եւ արիւննուշտ գործերն, որ լոկ իւրեանց խնամութիւն կամ բըռնական տիրապետութիւն ընդարձակելու համար պատերազմի աղէտներով կը հարուածէին ժողովուրդներն, միթէ չէ՞ փղձկեր սիրող, չես ըսեր թէ Ամենակալի անզին պարզեւ եղող իւրեանց կեանքն փութան արդիւնաւոր եւ նուիրական գործերով զարգարելու՝ ի նանիր վասնած՝ եւ իւրեանց քայլերուն սեւ հետքեր գծելով անցած են իբրեւ փոշի . . . :

ԱՆԷ՝ԾՔ ՆՈՅԱ՝ ՈՐ ՓԱՌԱՄՈՂ ԵՍՈՒԹԵԱՄԲ ԱՊՐԵՅԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ :

ԻԷ.

Տես, սա անձն, աննշանութեան մէջ եւ իւր մանկական օրերն խեղճութեամբ անցուցած է, բայց տես, երեկի այն խեղճ մանուկն կ'երեւի այսօր փառաւորեալ եւ մեծացեալ :

Երեւակայէ մի սքանչելի վեհանձնութիւն, որ կը փայլի նորա վրա, տես այն պարկեշտ խոնարհութիւն՝ որ տպաւորած է նորա զիմաց վրա, այն ախորժ ծանրութիւն որ կը յաւելէ իւր մեծութեան եւ փառաց չուքն :

Մտա երթամք նմա եւ ականջ դնեմք սա խոնարհ խոստովանութեան :

Այն ցաւալի վայրկեանն ուր մի աղքատիկ մօր արգանդէ եկայ այս վշտաց հովիտն, ուրիշ բան չը բերի ինձ հետ, բայց միայն մերկութիւն, որպէս

բնական է ամեն մարդու : Թշուառութիւն եւ աղէտ ծնած վայկեանէս հետս ընկերացան եւ տառապանք եւ չքաւորութիւն երկար ատեն լլկեցին զիս : Մակայն ես քանի կը յառաջանայի կենաց բաւիղին մէջ, խրախոյս եւ քաջալերութիւն մարմնոյս հետ միասին կ'ածէին այն յուսահատական պարագայներու դէմ. որ կուղեն վնասել հէքն իւր տառապանաց մէջ : Բայց վնասութիւն չատ հեռի էր յինէն. քանզի լաւ համողւած էի թէ՛ չեմք կարող ուրիշ կերպով դիմադրել աշխարհիս վշտաց, բայց միայն ամենուն ալ հանդուրժելով եւ քաջալերելով : Տարիներ անցան : Բանավարութիւն երբ զարգացաւ իմ վրա, յայնժամ կը խորհէի թէ մեզ նման մարդեր այս աշխարհի վերա մերկութեամբ կը դան, մերկաբար կ'ապրին եւ մերկաբար կը խուսափին չը թողլով արդիւնաւոր գործեր, եւ յետոյ իւրեանց վրա կ'ընդունին սա իրաւացի վճիռ . « Լաւ էր զի աննշան մարդն վիժէր քան տեսներ արեւն » . ուստի ես մի անհնարին ճիշով համակեալ՝ չուզեցի անկնիւ այս վճիռի ներքեւ, զոր գուցէ կարգային դիակիս վրա : Զէնք առի ինձ հաստատամտութիւնն, ձեռքիս գործիք ըրի աշխատութիւնն եւ բանավարութիւնս առաջնորդ բունելով իմ ընթացից՝ նետեցի անձս գործի ատպարէղին վրա : Կամ այն է, կըսէի, որ մի փայլուն ճանապարհ պիտի գտնեմ, կամ ես իմ ժրութեամբ պիտի սպարառտեմ . կամ մահ, կամ նշանաւոր կեանք, կամ առաքինական ցանկալի փառք կամ արագահաս վախճան :

Եւ կատարելութեան աննկուն փափաքով եւ անսասան յարատեւութեամբ յառաջ կը խոյանայի Հայրենեաց օգտակար ծառայութիւններ մատուցա-



ներու ասպարէզին մէջ : Գոհութիւն ստեղծողին , որ օրհնեց եւ պատկեց իմ աշխատութիւն , եւ մոռնալ սրբաւ ինձ աղքատութեան տառապանքներն եւ աշխատութեան հօգնութիւններն :

Ահա , ազնիւ Հայրդղի , աննշանութեան մէջ ծնունդ առած մի անձ , ոչր անուն պիտի լռեմ , թողլով զի նորա գործերն հոշակեն իւր անունն եւ փառքն . այժմ այս անձ մի աւագ եւ փառաւոր պաշտօնի անցած է ժամանակիս աղգային եւ քաղաքական գործերուն մէջ : Կա՛ մի աննշան տոհմի նշանաւոր դաւակն եղած է անվնաս ջանից եւ հաստատամիտ կամաց չնորհիւ :

Այս անձ որպէս երեւցաւ իւր խոստովանութենէ , սկիզբէն փառաց փափաքեցաւ թէպէտ , քայց իւր փափաքածին հասնելու համար ծայրացեղ միջոցներ չէր գործածէր , հանուրին չէր վնասէր , մանաւանդ իւր փառաց ճանապարհն գտաւ հանուրի օգտին աշխատելու մէջ :

Եւ եթէ մարդկային աղգի անջրան ընդհանուր եղած փառասիրութիւն մի դովելի կէտ ունի , այն իսկ այս տեսակի մէջ է : Մի այդպիսի փառասիրութիւն հարկաւ ազատ է դատապարտութենէ :

Երբ կուզենք զի զերծ մնամք աննշան մեռնելէ կամ ապաղայի դատապարտութենէ , եւ զի մեր փառաց ծուխն յերկին վերանայ , չը թուշտանք զեղեցիկ եւ բարենպասակ ձեռնարկներու եւ աղքատութեան ծոռայութիւններու մէջ :

Անձնուէր լինիլ ջանամբ եւ ի հարկին մինչ իսկ մեր կեանք չը խրաչիւք նուիրել ընկերի սիրոյն եւ օգտին , զի այս է զերազոյն զիւցադնութիւնն զոր կը պահանջէ մեր հայրենեաց ներկայ վիճակն :

Բայց երբ առանց այս գովելի ընթացից հետեւելու , ընկերի սիրան կեղեքելով եւ վշտացունելով եւ հայրենեաց աւերած եւ վնաս պատճառելով փառաւորիլ ժպրհիմք , ո՛հ , փառք չէ այդ , այլ վայրենութիւն , եւ յայնժամ մահն աւելի գերազանցէ այդպիսի փառքէ , այդպիսի բռնական վայրենութենէ , որ առիթ կը տայ հանուրին հեղու իւր անէծքն մեր գերեզմաններու վրա , փոխան սյն օրհնութիւններու զոր պիտի վայելէինք եթէ մեր մարմիններն բարի եւ հայրենաշահ գործերով հոգնած իջնէին հոն :

Այո՛ , կրնամք անշուշտ արժանանալ փառաց , օրհնութեան , բարի եւ անմահ յիշատակներու՝ երբ սանձ եւ չափ դնեմք մեր մարդկային կիրքերու եւ ջանամք օրտակար եւ անձնուէր անդամներ լինիլ հայրենեաց :

Բայց երբ սին փառասիրութեամբ մեր նմաններու աւերածին կամ չարիքին պատճառ լինիմք , աղիտալի պիտի լինին մեր կեանք եւ մեր մահ եւ փոխան բարի յիշատակներու՝ պիտի ենթարկիմք Մերուժաններու եւ Վասակներու անիծեալ վիճակին :

Արհամարհեմք սիրելիս , արհամարհեմք այնպիսի փառքն եւ մեծութիւն որ հայրենեաց վնաս տալով , ընկերին չարիք կամ զրկում ընելով կըստացուի :

Հեռի կենամք փառամոլութենէ , որ միշտ ազիտալի է :

Օ՛չ թէ զգուելով զգուէինք եւ դձուձ մուրացկանի նման փառաց հետամուտ չըլինէինք բնաւ : Բայց որովհետեւ փառաց եւ մեծութեան տենչն



աննուաճելի բնութիւն , պիտոյք դարձած է մեզ , ուրեմն զայն ստանալու համար ուսնիմք աւելի առաքլնի լինիլ , աւելի բարիք գործել , պարտազանց չը գտուիլ , զգուշ մնալ մոլութիւններու արասնեւրէն , եւ պիտի տեսնեմք զի փառք , պատիւ , արժանիք ինքնին մեզ կը դիմեն եւ զմեզ կը բարձրացունեն :

Ահա , եթէ աշխարհի վրա ճշմարիտ եւ վայելուչ փառք ստանալ ուղեմք , այս կերպով կրնամք գտնել զայն . այս սահմանէ անդին կը կանդնի անջարադէտ փառամոլութիւն , ոյր անհամար օրինակներն կը գտնեմք պատմութեան լայնածալ էջերումէջ եւ ոյր հեռեւութիւն եղած են միշտ աղէտ եւ թշուառութիւն :

Պատմութիւնն սանկ գնելով՝ նոյն իսկ եթէ մեր Ազգի արդի վիճակին վրա մի ուշադիր նայւած ուղղեմք , քանինք պիտի տեսնեմք , որ հայրենեաց շահն եւ հայրենակիցներու բարօրութիւնն եւ խաղաղութիւնն զո՞ կրնեն իւրեանց փառասիրութեան :

Կը սիրեն փառաւորիլ , բայց ուշ չեն գներ թէ՛ փառք ստանալու միակ միջոց ուրիշ բարիք հայրենեաց օգուտ գործելն է :

Պատուոյ եւ մեծութեան ետեւէ կը վազեն , բայց կը անտանան կատարել ազգային պարտեր , եւ անգործութեամբ յազեցունեն իւրեանց խնութիւնն :

Ո՛րքան արհամարհանաց արժանի են այսպիսիներ իւրեանց փառամոլութեամբ :

Ե՛կ ուրեմն , սիրելի Հայորդի , այս վայրկեանէ առաջադրեմք եւ գործեմք յօգուտ մեր սառապելալ եղբարց եւ անկեալ Հայաստանի , ուխտեմք մարտնչիլ բոլոր ազգակործան մոլութիւններու դէմ :

Ա՛լ այսուհետեւ յաքսոր դատապարտեմք ի մէջ հստութիւնն եւ իւր արբանեակներ , եւ աներկբայ լինիմք , զի մեր վրա պիտի մրմնջեն սա ջանկալի օրհնենքն .

ՕՐՀՆԵԱՒԼ ԼԻՆԵՆ ՆՈՔԱ՝ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՄԱՐ ԱՊՐԵՅԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ :

### ԻՇ.

Հայ մանկութիւն , Հայ պատանեկութիւն , սիրելի Ազգիս ապագայ յոյսեր , դուք հոտաւէտ ծաղիկներ , որ կարծես հիմա կը բացուիք բուրեղու համար միայն , դուք որ դուարթ եւ կայտառ կը խայտաք եւ կը ցաթկըտէք պարտէզներու մէջ իբր անհող թիթեռնիկներ , զձեզ ալ չեմ մոռնար ձեր խղերուն եւ զբօսանաց միջեւ եւ կը դամ մեղմով վարժել ձեր ականջներն այն բառերու որով կարելի է ձեզ յառաջակային լինիլ ճշմարիտ Հայ եւ արի խոյեան հայրենեաց :

Այո՛ , սիրելի մանկութիւն , պատանեկութիւն , առօրք եւ զուարթ բնութիւն , առողջութիւն , զիւրազգածութիւն , անմեղութիւն , անկեղծութիւն , դուք՝ որոց սիրտերն դեռ եղծեալ չեն աշխարհային կիրքերով , դուք՝ որոց միտերն պարապ վատութեան եւ հստութեան խմորներէ , սովրեցէք ապրիլ այնպէս , որպէս ազրեցան եւ մեռան մեր ազգասէր իշխաններ եւ նախնի հայրապետներ , որոց յիշատակն անմոռաց է պատմութեան մանաւանդ Հայ սիրտերու մէջ :

Գիտացէ՛ք , մանուկներ , զի մարդ էակի ար-



ժանի եւ վայելուչ եղող կեանքն լոկ ուտելու, խըմելու, ննջելու եւ դարթելու մէջ չը կայանար. լոկ հագւիլ, սգւիլ, դարդարուիլ եւ սիրամարդի պէս սոնքալով աստ անդ չըջիլն ալ ճշմարիտ կեանք չէ. ոչ սոցա համար եւ եթ ստեղծւեցան մարդիկ, այլ աւելի քան զսոսա շատ մեծ դործեր կատարելու համար :

Յիշեցէք մարդուս կոչումն, որով աշխարհի եւ նորա արարածներու վրա տէր եւ իշխան դըրւած է : Աստուած նորա գանկին մէջ հեղած է իւր անբաւ հանձարի կաթիլն եւ զայն երկրի վրա մի երկրորդ արարիչ կարգած է :

Բայց մի աճապարեցէք սոնքալ իբր տէր աշխարհի. ոչ, անիրաւներ, երբ կը ծնիք եւ կ'աճիք եւ ուրիշ բան չէք գործեր, բայց միայն չարութիւն. երբ ատելութիւն, նախանձ եւ թշնամութիւն կը սնուցնէք ձեր եղբարց դէմ, երբ ամեն լաւութիւն ձեր անձերուն կը բաղձաք ետութեամբ եւ ուրիշներն գրկել կը նկրտիք իւրեանց իրաւունքը, յայնժամ դուք ոչ իբր երկրի իշխան, այլ բոլոր անասուններէ ցած մի կենդանի պիտի թուիք, քանզի մարդս միայն իւր բարի գործերով է որ մեծ կը լինի, եթէ ոչ անբան կենդանի կը դառնայ :

Մարդ որքան ալ մեծ եւ հարուստ լինի աշխարհի վրա, հոյակապ տուներ եւ գեղեցիկ դարդեր ու կարագիներ ունենայ, կամ որքան ուժով եւ գեղեցիկ լինի, չը կրնար պատուաւոր համարուիլ, եթէ զոնէ իւր վարած կեանքի մէջ մի փոքր եւս ազգի համար չը խորհի եւ չը քրտնի, այլ միայն ուտելով, խմելով իւր եսական հաճոյքներուն զոնէ ալլային անդրժելի պարտաւորութիւններն :

Յիրաւի այնպիսին թէ եւ ազատ ազգի վիշտերն խորհելէ եւ հայրենեաց համար տքնելէ, հանդիստ կը վարէ իւր կեանքն, բայց թող փառք, մեծութիւն եւ յարգանք չըսպասէ նա, ոչ ներկայի եւ ոչ ապագայի մէջ :

Եւ ինչ իրաւունքով փառք պիտի սպասէ մի այնպիսի մարդ՝ որ իւր անձէ զատ իւր հայրենեաց համար մի փոքր բարիք գործած չէ եւ մի կաթիլ քրտ չէ հեղած նորա լաւութեան համար :

Նոցա է փառաց ժառանգութիւն որ կը սիրեն իւրեանց ազգ եւ հայրենիք եւ նորա բարիքին համար կ'աշխատին :

Դուք եւս սիրելի մանկութիւն, պատանեկութիւն, որպէս զի փառաց եւ պատուոյ արժանի լինիք, դուք եւս այժմէն վարժեցէք զձեզ ազգի համար խորհելու եւ տքնելու մասին, եւ ձեր երկտասարդութեան ատեն ալ իմաստութեամբ եւ խոհեմութեամբ գործի դուռին անցած աշխատեցէք ի բարելաւութիւն ազգի. աննախանձ սիրով սիրեցէք ձեր այն ազգակիցներ որ աւելի քան զձեզ փառաւոր եւ պերճ են, եւ եթէ մի որ փառքն զայ եւ զձեզ ալ վարձատրէ, այն ատեն ալ պէտք չէ որ խոնարհութիւնն ի ձէնջ հեռանայ, պէտք չէ որ հպարտանաք ձեր վայելած փառքի վրա :

Եւ եթէ դուք զարդարւած էք այն զօղոր եւ պանծալի առաքինութիւններով որ ի վեմութիւն կամբառնան մարդն, բաւ մի համարիք զայն, այլ ջանացէք աւելի առաքինի լինիլ յուղղութիւն հրաւիրելով ձեր անկարգ եւ մոլի ընկերներ :

Եւ ազգն ալ անկեղծ պանելով ձեր բարի յիշատակներ՝ պիտի օրհնէ եւ փառաւորէ այսպէս .



ՕՐՀՆԵԱՎԼ ԼԻՆԻՆ ՆՈՒՐԱ՝ ԱՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱ-  
ՄԱՐ ԱՊՐԵՅԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ :

### ԻԹ.

Մանկութիւն , սլատանեկութիւն , երիտասար-  
դութիւն , վառվռուն հասակներ . դուք՝ որ կեանքի  
ամենէ աշխուժալի եղանակին մէջ կը դաւիք , դուք  
էք աղգային առաջդիմութեան գործակատարներն ,  
դուք պիտի օգնէք այս մեծ գործին :

Միայն Հայ աղջն ետ պիտի մնայ դարգացու-  
մէ եւ մտաւոր՝ մարմնաւոր եւ բարոյական կատա-  
րելութիւններէ , երբ սոցա հասնիլ կը տենչան ամէն  
աղգ , եւ նոյն իսկ ամեն ստեղծուածներ , որ կը  
զրււին բնութեան մէջ , մի ձգտում ունին դէպ կա-  
տարելութիւն :

Յառնջ երթալ , արդարեւ մի բնական անյեղ-  
լի օրէնք է այս . նման մի անդիմադրելի հոտանքի .  
որ ոչ միայն մարդ էակի , այլ տիեզրի մէջ եղող ա-  
մեն կարդ կենդանական , բուսական եւ հանքային  
ստեղծուածներու դաշն եղած է , յառաջանալ եւ կա-  
տարելագործիլ ժամանակի շրջանին հետ :

Տես արեւն , տիեզրի այս լուսաշող կանթիւղ ,  
դեռ չը ծագած կամ նոր ծագելու մօտ ինչ աղօս  
նշոյլ ցոյց կը տայ եւ սրպէս անդօր կ'երևի . բայց  
մի փոքր յետոյ ժամանակն յառաջանալով աղօտա-  
նըշոյլ երեւցող արեւն իւր պայծառութեամբ կ'ողո-  
ղէ բոլոր ախպրն , նորա լոյս կը հալածէ գիշերի  
խաւարն եւ նիրհող բնութեան կաղղէ նոր կեանք ,  
նոր արթնութիւն եւ նոր զուարթութիւն . նորա

Վերմութիւն առաւօտի ցօղին հետ միանալով թալ-  
կաթաւալ դալարներն կը դարթօւցնէ իւրեանց թըմ-  
բութենէ . վերջապէս համայն բնութիւնն ի շարժում  
կը դրդէ եւ ակնախտիղ ճառագայթներով կը ջեռու-  
դանէ աշխարհն :

Տես սա փոքրիկ որդն՝ զոր չերամ կ'անուա-  
նին , արքայական պալատներ նորա գործած թեյե-  
րով կը դարդարին , նա շատ երկիրներու բնակիչ-  
ներն իւր շահաւէտ արդիւնքով կը պարարէ , նա կը  
հայթայթէ մտաքսեայ գեղեցիկ կերպաներու նիւթն-  
բայց նա ուրիշ բան չէ սկիզբէն , այլ մի աննշան  
մանր հատիկ , որ կը փթթի . մի տեսակ կենդանի  
կը գառնայ օր քան զօր աճելով եւ անքան օգտա-  
կար կը լինի իւր բնական առաջդիմութեամբ եւ իւր  
բնագրու մէ չը հեռանալով :

Տես նաեւ սա երկնուղէչ եւ սաղարթախիա  
ժայրիներ եւ կնձնիներ , որ իւրեանց բարձր դա-  
գայթներէ կը շարժեն իւրեանց լայնատերեւ ճիւղերն  
եւ որպէս թէ կուզեն յիշեցունել մեղ թէ՛ ինքեանք  
ժամանակ յառաջ մի աննշան բոյսեր էին , եւ ան  
աւելի յառաջ փոքրիկ եւ չնչին հունսեր եւ ժամա-  
նակի դարաւոր հոլովումն այդ հասակին բերաւ  
գայնս :

Այսպէս ուրեմն բացայայտ կ'երևի թէ , բնու-  
թեան ծնունդ եղող բոլոր բաներն ժամանակի շըր-  
ջանով կը դիմեն յառաջ դէպ կատարելութիւն :

Կատարելութեան այն արտաքին երևույթ ուժ  
ենթակայ է մարդն ալ իւր անգօր եւ փափուկ ծը-  
նունդով եւ ժամանակի շրջանին մէջ ի զարգացում  
դիմելով , այն առաջդիմութիւն կը կուզի նիւթա-  
կան :



Բայց մեր առաջդիմութիւն որ կ'ըսեմք, այս նիւթական կամ մարմնաւոր կատարելութիւն չէ գոր կ'իմանամք: այլ այն բարոյական առաջդիմութիւն, որ մարդուս հոգեկան կարողութեանց կատարելագործումին մէջ կը հասկացուի:

Քանզի մարդ ինչպէս որ մարմնով կածի, կը զօրանայ եւ կը կատարելագործի, նոյնպէս նա բարոյապէս յառաջ կը դիմէ այն կարողութեանց մէջ, որ զնա կը տարբերեն միւս անբան կենդանիներէ: այն կարողութեանց մէջ կըսեմ, որով կը կսմի՝ կը յիշէ՝ կը բազդատէ՝ կ'որոշէ՝ կը հնարէ եւ այլն:

Երբ մի խորազննին աչով քննեմք ժամանակագիրներն եւ ներկայիս հետ բազդատեմք անցեալ դարուց մէջ եկող զնացող մարդոց կենցաղն՝ արուեստն եւ այլ հանդամանքներ՝ պիտի տեսնեմք թէ մարդկային ազգ մեծ քայլեր առած է բարոյական առաջդիմութեան մէջ:

Ներկայ դարուս մէջ մարդկային մտաւոր կարողութիւններ այնպէս առաջդիմած են որ խպատ կը գերազանցեն անցեալն:

Մարդկային ազգի յատուկ այս բարոյական առաջդիմութիւն է, որ ջնջելով սխալ կարծիքներն եւ նախազաչարումներ, ցրելով մթին խորհուրդներ՝ լուսավիտ գաղափարներու, վսեմ խոհերու եւ ընտիր եւ ուղիղ դատումներու կառաջնորդէ մարդկային միտն: վերջապէս մեր մտաւոր կարողութեանց զարգացումով կը դրդեմք թողել խոտոր եւ մոլոր ճամբայներն եւ ընտրողաբար դիմել ի բարին:

Բայց առաջդիմութիւն անունով բազում տգեղ ունակութիւններ եւ սովորյալներ մտած են ազգիս մէջ այս վերջի ժամանակներ, որ զմեզ ճշմարիտ ա-

ռաջդիմութենէ ետ կը մղեն եւ յանկում կը տանին: Քանզի, քանի որ Եսութիւն կայ, անձիւր ոք առաջդիմութիւնն եւս իւր Եսն հաճեցունելու կերպով կ'ըմբռնէ եւ կը մեկնէ:

Հայ, ճշմարիտ առաջդիմութիւն կուզես, ուրիշ ըանի մէջ մի վնասուեր զայն, այլ բարքի ազնուութեան, նորանոր գիւտերով արհեստից կատարելագործումին եւ առողջ ու զօրաւոր անհատութիւններ պատրաստելու մէջ:

Աեղծ կը համարիմ այն ամեն առաջդիմութիւն, որ այս սահմանէ հեռի կը գտուի:

Եթէ առաջդիմութիւնն բարի ազնուացումին մէջ չէ, ուրեմն չըկայ մի տարբեր առաջդիմութիւն մարդու համար: այլ միայն կենդանիներու եւ ուրիշ անշունչ մարմիններու առաջդիմութիւն:

Յայտնի է թէ կենդանիներն ընտրութիւն չունենալով բարւոյ եւ չարի դիտութեան մէջ՝ անորոշապէս կը դիմեն թէ ի բարին եւ թէ ի չարն: մանաւանդ բարին ճանաչելու ուրիշ կարողութիւն չունին, բայց եթէ մի բնազդ, որով բնականապէս կը կարողանան նշմարել իւրեանց փոանգ կամ չարիք եւ հոգալ իւրեանց պիտոյքն:

Ունին նաեւ բնատուր ձարտարութիւններ կամ կարողութիւններ որով կը հայթայթեն իւրեանց կենսական պիտոյքներն:

Տես, քանի վարպետ է սարդն օդի մէջ հիմնել իւրեան մի այնպիսի տուն ոյր ամենանուրբ թելերն չը նշմարելով խեղճ ճանճիկն՝ որս կ'անկնի նորա ծուղակին:

Յիշէ այն ժբաջան մեղուներն եւ իւրեանց փեթակի կանոնաւորեալ ընկերակցութիւնն որով ծա-



դիմենքու հիւթէն մեզր կը դործեն եւ իւրեանց ասորուստ կը պատրաստեն . բայց չէ որ նորա ինչ որ էին տարիներ , դարեր յառաջ , հիմա եւս ճիշդ նոյն են իւրեանց գործերու ձեւերն եւ իւրեանց ընկերական կարգապահութիւն եւ չէ մակարեւր թէ այնպէս պիտի մնան միշտ առանց այլափոխութեան :

Մի մեծ ասպարոյց չէ այս զի միայն կենդանիներու յատուկ է իւրեանց բնատուր արուեստի եւ այլ հանդամանաց մէջ չ'այլափոխիլ եւ ուրիշ քայլ չ'առնել :

Բայց , երբ մարդկային արուեստներու եւ գործերու վրա դարձունեմք մեր աչեր , դարուց շըրջանին հետ նոցա կրած փոփոխումներն եւ լուսագոյն կատարելութիւններն պիտի նշմարեմք , քանզի մտաց կարողութիւններն հետզհետէ զարդացած եւ յառաջացած են եւ այսպէս պիտի յառաջանան դարուց ընթացքին հետ .

ԵՐԱՆԻ՝ ՆՈՅԱ՝ ՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԴԻՄՈՒԹԵԱՆ ԿԸ ԶՈՂՅԵՆ ԻՒՐԵԱՆՅ ԵՄՈՒԹԻՒՆ :

L.

Խորհրդածելով մարդկային ազդի առաջգիմութեան վրա՝ յայտնի կը տեսնեմք թէ զիտութիւններն սրբան կարեւորութիւն եւ անհրաժեշտ պէտք ունին մեր մտաւոր զարդացման եւ հետեւաբար ազդի բարելաւութեան եւ երանութեան համար :

Հետամուտ լինիմք ուրեմն զիտութեանց , մըշակեմք նոքօք մեր միտերն , որպէս զի ծլին ու ծաղկին անհարթ եւ խոսպանացեալ անդաստաններ :

Գիտութիւններն պիտի տան մեր ազդին մի իւրական առաջգիմութիւն եւ բարեւոքում . նոքօք պիտի ծնին նորանոր զիւտեր եւ արհեստներ , յորոց զուրկ է այսօր մեր աղքատիկ ազգութիւն :

Ի՞նչ է արդարեւ մարդն առանց զիտութեան , եթէ ոչ մի խեղճ խաղայիկ զիպուածոց ափին մէջ : Աշխարհ՝ Ովկէան , մարդն է մի նաւ , որ իւր միտն ղէկ բռնած կը յառաջանայ :

Երանի՛ նմա՝ որ այս Ովկէանի մէջ գործածելով իւր ղէկն՝ անվտանգ կանցնի այն ժայռերու մօտէն՝ որ Ձախողութեան ժայռեր կը կոչւին :

Իսկ վնչ նմա՝ որ առանց բարեկազմ՝ հաստատուն եւ նորաչէն ղէկի այս վտանգալից Ովկէանի մեծ տարածութեան վրա նաւել կը պատրաստուրի , ուր մի օր անշուշտ չը կրնայով այն ժայռերէ ազատել իւր նաւն՝ պիտի խորտակի եւ անդնդասոյց պիտի ընկղմի նորա խորութեան մէջ . . . :

Է՞ր ուրեմն կը դանդաղիս սրդեակ , հետեւիլ զիտութեանց , որք մարդն փառաւորելով հանդերձ չարեալ եւ ձախողութեանց գիմադրելու կարողութիւն կը պարզեւեն . էր կը մերժես նոցա կենսատու լոյսն , զոր անխտիր կը ճառագայթեն եւ առաջգիմութեան ասպարէզ կը բանան ամեն հետամուտ եղողի :

Կարո՞ղ ես ուրանալ թէ զիտութեանց ծնունդ չեն այն ամեն ճարտարութիւններ եւ արհեստներ , որով մարդկային պիտոյքներ զիւրապէս եւ վայելչաբար կը պատրաստուրին :

Ինչո՞վ այնքան սլայծառացաւ եւ սերճացաւ Եւրոպա՝ որ երբեմն աշխարհիս անչէն եւ ամայի մասն էր , ինչո՞վ առաջգիմեց եւ գերազանցեց աշ-



խարհի միւս մասերն՝ եթէ ոչ գիտութեանց շնորհիւ :

Ո՛րքան պիտի եւ վայրենի պիտի մնար նորա վիճակն եթէ գիտութեանց ծնունդ այնքան ճարտարակերտ արհեստներէ եւ գիւտերէ զուրկ լինէր :

Արդարեւ մարդկային միտն մի հրաշալի դործի է զոր Աստուած իմաստութեան անսպառ աղբիւրն , գետեղելով մեր հողածին մարմնոյ մէջ վեմացուց մեր բնութիւնն . միտն այնպիսի գործի է ոյր մշակումն չաքանչեղի կարողութիւններ պարգեւեց մարդ էակի :

Եւրոպացին իւր միտն մշակելով է որ կարող եղաւ մեծամեծ բաներ գործելու , մինչեւ անգամ բնութեան անջրպետներուն դէմ մաքառեցաւ դիւրութեամբ , հնարեց օդագունդն եւ կարծես մարդն ռո՛ւ իւր հազած դէպ օդն բարձրացաւ , հնարեց շողեխուն եւ այդ լուսնու աստղերով անաղին Ովկէանի ամենի ալիքներն պատուեց անցաւ դէպ նոր աշխարհ եւ վայրենութեան օթեւան եղող այդ Ամերիկն լուսաւորութեան օրօրան դարձուց , հնարեց շողեկաւքն եւ երկաթի երկու գիծերու վրայէ կայծակի պէս սուբալով հեռաւոր երկիրներն իրարու մօտ բերաւ . վերջապէս միտի մշակումով հնարեցաւ հեռագրաթիւնն որ հանուր մարդկութիւնն իրարու հետ հաղորդակցութեան մէջ դրաւ :

Արեւմն երբ մի ո՛ր եւ է ազգ կուրջ յառաջ երթալ եւ բարւոքել իւր ընկերական վիճակն , կը պարտաւորի նաեւ գիտութիւններով մշակել միտերն , որպէս զի ծաղկին արուեստներն , եւ ապահովի հացի խնդիրն որ մարդուս ամենէ առաջին հոգն եւ մտածումն եղած է :

Մեր թշուառ Ազգի համար ալ այսօր առաջին եւ կարեւոր պիտոյք նիւթական կեանքի բարւոքումն է , երբ ես կեանքի պահպանութեան անհրաժեշտ եղող բաներն չունենամ , ալ սրբան կրնամ մտածել եւ զբաղիլ այն խնդիրներով որ ազգի ներքին բարոյական կենաց կը պատկանին :

Հուսկ ուրեմն Նստութիւնն , որ ազգի անաւոր ներքին թշնամին է , այն ատեն կորաքամակ կը սմբի , երբ գիտութեանց շնորհիւ կը ծաղկին շահաւէտ արհեստներ եւ երբ կ'ապահովին նիւթական կենաց անհրաժեշտ պիտոյքներն .

ԵՐԱՆԻ՝ ՆՈՅԱ՝ ՈՐ ԿԸ ՆՊԱՍՏԵՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՄՈՒԹԵԱՆ :

LU.

Երբ ազգիս նիւթական կենաց բարւոքման վրա կը խորհրդածեմ , ի յուշ կածեմ այն անմահ տողերն , զոր կը գրէր Մ. Նալբանդեանց իւր մի գործի մէջ .

« Ի՞նչ ազբիւրներից կարող է հանել հասարակ ժողովուրդը իւր , չասեմք հարստութիւնը , այլ ապրուստը , եւ ապրուստ հաւաստի , մշտնջենական եւ առօրեայ : Հասարակ ժողովուրդի համար ուղղակի եւ մնացած մասին համար անուղղակի , բայց եւ այնպէս անհրաժեշտ ինչպէս ջուրը ձուկի համար , միակ աղբիւր ապրուստի եւ հարստութեան է ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ , Երբոր մի ազգ կազմող անհատների մեծագոյն մասը պարապի երկրագործութեամբ եւ առհասարակ գիւղական տնտեսու-



թեամբ, այն ժամանակ այդ ազգի ընդհանրութիւնը հարուստ է եւ ապահովեալ. որովհետեւ նորա հիմքը դրւած է բնականապէս եւ բնութեան վրա: Եւ այս պատճառով փոքրագոյն մասն, որ չէ պարագում երկրագործութեամբ, կարող է հաւաստի լինիլ որ հազիւ պիտի կարողանայ մշակել, շինել, գործել եւ վաճառել զայն, ինչ որ դուրս է բերում զեանից նորա մեծագոյն մասը: Ազգի մեծագոյն մասը երկրագործութեամբ ապահովեալ է եւ անհնար է թէ նեղութիւն պատահի ապրուստի կողմից: Փոքրագոյն մասը, որ բաղկանում է վաճառականներից, չէ կարող անգործ կենալ, քանի որ մեծագոյն մասի արդիւնքը սպասում է նորա կամ մշակութեան կամ վաճառականութեան կամ որ եւ իցէ մի դժբաղդ դիպուածում, այդ փոքրագոյն մասից ամենափոքրագոյն մի մասը միայն կարող է ենթարկուիլ առօրեայ եւ անցողական նեղութեան. քանզի ազգի հիւքը դրւած է երկրի մակերեսութի վրա եւ կախւած չէ օդի մէջ: Չը կայ մարդ որ չը խոստովանի այս ճշմարտութիւնն . . . . . »:

Անս այս անմահ տողերով ինչ միջոց որ կըրնայ գտուիլ մի ժողովուրդի իրական եւ հաստատ դիւրակեցութեան համար՝ ցոյց կը տար Մ. Նալբանդեանց այն հանձարն, որ Հայութեան պարծանքն եւ հօգին էր, որ աներեւոյթ ձեռքով ամուր բըռնած էր ազգութեան մարմինն. որոյ ձայն ազատութեան սիրահար էր եւ զրիչն ուղեցոյց ազգի առաջդիմական ճանապարհի. «բայց ազգն մի շիթ արցունք չը կաթեցուց նորա զերեզմանի վրա», որպէս կը գանդատի մի Հայ բանահիւս. «չը հնչեցաւ մահու զանգակն, եւ մեք չը հիւսեցինք նորա վրա

ողբական երգեր, այլ իբր թշնամի նորա յիշատակաց վրայ ծածկեցինք մի թանձր վարագոյր. որպէս զի յաւիտեան չը յիշեմք, չը խօսիմք նորա վրա. այս անձնուէր եւ ազգասէր երիտասարդն որ հայրենեաց փայլին համար չը սոսկից ի վտանգ մասնել իւր անգին կեանքն, կարծես մի ելեքդրական թեւ էր նա, ոյր մի ծայրն հայրենի աւերակներու վրա, միւս ծայրն Եւրոպ. մի քանի ճիւղերու բաժւած թագակիր գլուխներու առջեւ ուժգին կ'որոտացունէր մեր թշուառութիւն եւ արդարութիւն արդարութիւն կ'ազազակէր»:

«Բայց ցաւայի է որ, կը շարունակէ բանահիւսն, այս չնաշխարհիկ էակի հայրենիք հայրենիք միմնջող շուրթերն իւր բոլոր կենաց մէջ Հայութիւնն Հայերու ճանչեցունելու համար անդադար մաշող սիրան, հեծկտուքի ձայներով յաղթբւած եւ անարգանաց փուշերով վիրաւորւած՝ Սիպիրի սառնապատ գիրկը կը նետել . . . ժամանակի կայծակէն շանթահար, ակամայ կը կորանայ այն ցուրտ, ժեռուտ եւ ամայի վայրերու մէջ եւ հոն կ'արձակէ իւր վերջին Հայ շունչն. սակայն էր կ'անչնչանայ, էր կը մեռնի տարածամ մահով. — քանզի նա այս ազատական դարուս հարադատ զաւակներէ մին էր, եւ անիրաւութիւնն զայն ընկերական աշխարհէ հեռի ապրիլ եւ մեռնիլ դատապարտեց, անմխիթար սուգի մէջ թողով զինք սիրողներն»:

Սակայն մարմինն թէեւ կը մեռնի, հոգն հողին կ'երթայ, այլ Ամենակալի փչած շունչն չը մեռնիլը, երբ մի թուղթի վրա անկնի եւ տպաւորելի զայն խնդրող անհամար միտերու մէջ, սուր կամ Սիպիր չէ կարող անհետացունել զայն:



Նաեւ երբ մի ս եւ է հեղինակ աստղարէզ նեա-  
 ւած ատեն՝ անաչառապէս եւ ուղիղ դատումով  
 ցոյց կը տայ ինչ որ կը նպատակէ ընկերական երա-  
 նութեան, ազգի առաջդիմութեան, եւ ինչ որ կը  
 հեռացունէ կամ կը զրկէ ընկերութիւնն կամ հայ-  
 րենիքն իւր օգուտներէ եւ բարեխառութենէ, երբ  
 մի հեղինակ նպատակ ընտրելով այս սլոյմաններն  
 կը մտնէ գրական աստղարէզ՝ յայնժամ նորա մտա-  
 ծում ժողովուրդի արտին մէջ պիտի ունենայ այն  
 բեղմնաւորութիւն զոր ունի ցորենի մի հատիկն եւ  
 պիտի լինի սերմ յաւէժական, որոյ շառաւիղներ  
 ապագայ դարերէ անգամ կ'ողջունին եւ կը յիշին  
 անլուռ եւ երախտադէտ ներբողներով:

Մահն յանմահութիւն կը փոխի, ածիւնն յա-  
 րութիւն կը տայ նորագոյն սերնդոց որ իւրեանց  
 շուրթերու վրայէ անձնուէրներու յիշատակներն  
 կ'անմահացունեն այսպէս:

ՕՐՀՆԵԱՒԼ ԼԻՆԻՆ ՆՈՒՔԱ՝ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱ-  
 ՄԱՐ ԱՊՐԵՅԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ:

ԼԲ.

Երկրագործութիւնն ժողովուրդի զիւրակեցու-  
 թեան եւ կենաց ապահովութեան իբր միակ միջոց  
 յառաջ բերի Մ. Նալբանդեանցի գրիչին տակ. բայց  
 յոյժ դառն ցաւ է անհեղ զի այս ազատ եւ ապա-  
 հով գործն՝ որ աղբիւրն է մի ժողովուրդի հարըս-  
 տութեան եւ անդորր կենաց, խիստ անշուք վիճա-  
 կի մէջ է մեր ազգի մէջ եւ հաղիւ կը դաւին այն-  
 պիտի Հայաբնակ գաւառներ, ուր գոնէ նահապե-

տական գործիներով երկրագործութեան պարագող  
 լինին Հայեր:

Ազգի սակաւաթիւ մասն է որ կը մշակէ եր-  
 կիրն, իսկ մեծագոյն մասն՝ անհաշտ աչով կը նայի  
 արօրին եւ արօտին վրա, որոց համար Հենրիկոս,  
 Յոանաթի թագաւորն, երկու ստինքներ են, կ'ա-  
 սէր. նոքօք պիտի մնի ժողովուրդ:

Բայց զարմանալի չէ թէ Էր տակաւին խաւար  
 է այս ճշմարտութիւն մեր ազգի համար, եւ Էր կը  
 ճնշուի՞ք ծառայական ճղմով շահեր սենեցող գոր-  
 ծերու ներքեւ եւ կը նեղուի՞ք մեծ մասով չքու-  
 թեան եւ կարօտութեան մէջ:

Պատճառն այն է որ Եսութիւնն հպարտացու-  
 ցեր է զմեզ, որով անարդ եւ արհամարհ կը սեպեմք  
 մշակի կամ երկրագործի պաշտօնն. եսութեամբ  
 կուրացած չեմք նկատեր թէ մի մշակ աշխարհի  
 երջանկութեան համար աւելի գործ կը տեսնէ քան  
 բոլոր քաջամարտիկ յաղթականներ, որ արցուն-  
 քով կ'ոռոգեն աշխարհս եւ արիւնով կ'ողողեն դայն:

Անշուշտ եսութեամբ կուրացած, չեմք խոր-  
 հիր թէ մշակն է որ կը պատրաստէ ժողովուրդի  
 կենսապահիկն, նորա ճակատէն կայլակած քիրտերն  
 կը մատակարարեն մեր անունդն. դէժքն արեւէ  
 սեւցած, ձորձերն պատուտած, սուրն ցեխոտած,  
 այսպէս կ'աշխատի նա ժողովուրդին հաց տալու  
 համար:

Եւ այս խոնարհ, այս ժիրաժիր գործաւորի,  
 մարդկային սեռի այս մեծ բարեբարի գձուձ կեր-  
 պարանն գիտելով չեմք հաւնիր նմա եւ կ'արհա-  
 մարհեմք փոխան մեծարելու:

Պէտք չէ որ նա իշխան կամ թագաւոր լինի,



պէտք չէ որ նա սուր շողացունէ ժողովրդոց գլխին վերեւ, պատերազմի դաշտն կամ քաղաքական ասպարէզն ինչ արժէք ունին նորա մատուցած մեծ եւ կարեւոր ծառայութեան քով:

Անշուշտ այս նկատումով էր որ Բ. Արտաշէս Հայաստանի քաջ եւ բարի թագաւորներէ մին աւելի երկրագործութիւնն եւ արուեստներն ծաղկեցունել աշխատած էր մեր հայրենի երկրին մէջ:

Արդարեւ երկրի արգանդէն կամ հանքերու մէջէն ինչ զանձեր երեւան ելաւ ժիր մշակի քիրտով:

Երկրի այնքան բերարեղուն արգասիքն եւ դանձերն բոլորովին անյայտ պիտի մնային եթէ մշակն (այս բառով հողագործ եւ հանքահան երկուքն ալ նշանակելով) չը վնասեր զանոնք այս հոծ հողակոյտէ:

Ո՛րքան ալ մշակն պատուեց եւ քրքրեց հողն, ո՛րքան ալ իւր ժրաջանութեամբ երկրի խորն, հանքերու մէջ իջաւ, այնքան ալ զանձեր բերաւ երեւան եւ կենաց ամենահարկաւոր բերքերն հայթայթեց:

Նորա ձեռքերն ո՛րքան ապառաժներ որ փրշրեց, այնքան ալ նոցա մէջէ աշխարհի քաղաքակրթութեան եւ նիւթական պերճութեան աղբիւրներ բղխեցան եւ ոռոգելոյն մարդկային ընկերութեան խոսքան անդաստանն:

Քանզի միայն փիլիսոփայի մտաջան խոհերն չէին բաւեր երանաւետել ժողովուրդն, միայն ճարտասանի որոտազին հնչումներն ալ չէին կարող բարւոքել ընկերականութիւնն. փիլիսոփայի, ճարտասանի եւ արուեստագէտի ճիգերուն հետ պէտք էին խառնուել եւ բարի մշակի քիրտերն:

Այսպէս կըսկսի ընկերական ներդաշնակութիւնն, եւ մին միւսի համար փոխանակաբար աշխատելով կը հաստատուի եղբայրական մի աներեւոյթ կապակցութիւն անձնիւր ոք իւր նմաններու հետ՝ ոյր արդիւնքն կը լինի Հպարտութեան անկումն եւ Հաւասարութեան լուսոյ ծագումն ցեղային խտրութեանց խաւարին վրա:

Յայնժամ տեսնելով աշխատաւոր մշակն, չեմք ասեր, այս ինչ աղտոտ մարդ է, յարգանօք կը մօտիմք նմա, կ'ողջունենմք զնա մի իշխանի հաւասար պատիւով իբրեւ բարերար մարդկութեան եւ իբրեւ առաջին օժանդակ հայրենեաց զարգացման որ չը կրնար յաջողիլ ուրիշ կերպով, բայց եթէ իւրաքանչիւրի աշխատութեան մեծ եւ փոքր կաթիլներով:

Ամեն մարդկային ընկերութիւն միշտ երկու կարգ մարդոց կարօտ եղած է. մի քանիներ պէտք է իւրեանց միան յողմեցունեն, ուրիշներ՝ իւրեանց բազուկներն:

Արդարեւ եթէ ժողովուրդն լուսաւորող եւ առաջնորդող չը գտուի, մարդկային ազգն հազիւ կարող է տարբերիլ անասուններէ:

Սակայն դարձեալ այդ լուսաւորող եւ առաջնորդող խումբն որ կը յողմեցունէ իւր միտն, կարօտ է ուրիշներու՝ որ յողմեցունելով իւրեանց բազուկներ՝ նոցա կենսական պիտոյքն հայթայթեն:

Եթէ կենսական պիտոյքն հայթայթող բազուկներ չը գտնին, հայրենիքն զինք լուսաւորող եւ առաջնորդող գլուխներ ալ չէր ունենար:

Ուրեմն միտն եւ բազուկն, գիտունն եւ մըշակն հաւասարապէս պէտք են հայրենեաց, հաւասարապէս պէտք է յողմին հայրենեաց համար:



Պէտք է ս' Հայրդի , յարգեմք եւ օրհնեմք միշտ այն թշուառ եւ աղքատ մարդեր , որ իւրեանց լքեալ վիճակի մէջ իւրեանց քրտնաթոր աշխատութեամբ կը գործեն երկիրն եւ իւրեանց բազուկներով կը նպաստեն հայրենեաց :

ՕՐՀՆԵԱՎ ԼԻՆԻՆ ՆՈՒՅԱ՝ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՄԱՐ ԿԱՊՐԻՆ ԵՒ ԿԸ ՄԵՌՆԻՆ :

ԼԳ.

Ս.յն մեծ սրբերներէ մին եւս , զոր Եստեթիւնն իբր թումբ կը յարուցանէ մի ազգի առաջդիմական քայլերու առջեւ , արծաթի ծարաւն է , սիրելիներ :

Արծաթի կամ դրամի սէրն քանի՜ ծայրահեղութիւններու մղած է մարդն :

Պատմութիւն վիպ է այսմ :

Արծաթի սէրն էր որով Յովսէփ իւր եղբայրներէ ծախուեցաւ նախանձով :

Արծաթի սիրով Յուդա իւր տէրն կը մասնէր , եւ միթէ այն ամեն վտտեր եւ մատնիչներ , որ սեւ յիշատակներով ազտեղած են սլաւմութեան էջերն , ազատ էին այս ախտէ :

Ս.յն Մերուժաններ , Վասակներ , Կիրակոս եւ Բեցիներ , Վեամ-Յարդիւններ , որ հայրենիքն ոտնհարեցին . ինչ զօրաւոր զրդիւռ ունէին ի վատութիւն եւ ի մատնութիւն դիմելու համար , քան թէ հարըստութեան համնելու կոյր եւ եսական տենչն :

Եղած են եւ կան այնպիսիներ որ ազգի դարգացման եւ բարօրութեան իբր միակ պիտոյք համարած եւ հնչակած են դրամի խնդիրն . բայց պատ-

մական փորձառութիւն համոզած է զիս թէ ամեն ժամանակ դրամն անիծեալ գեր խողացած է եւ աւելի անկում քան կենդանութիւն բերած է ազգերու վրա , զի սն է ազանութեան եւ մշտնդամայն շտայլութեան աղբիւրն :

Երբ մարդկային ազգի բաշտութիւնն դեռ աշխարհի ամեն կողմն տարածւած է՛նր , երբ դրամ կոչւած անիծեալն դեռ դոյութիւն չունէր , այն նահապետական դարերու մէջ թերեւս մարդ ենթակայ չէր այն դժբաղդութեանց զորս մեք այսօր կը կրեմք սորա երեսէն եւ մի ներքին փոթորիկով յուզւած կը գոչեմք . Անիծեալ դրամ :

Եթէ մի այնպիսի երկիր դուռէնք , ուր բնադրամ չը գործածէր , ոչ ալ դուրսէն բերելու միջոց լինէր , միթէ առանց դրամի պէտք ունենալու եւ զայն գործածելու , չէինք կրնար անդորր եւ ապահով ապրիլ . — այս , փոխանակութեամբ կրնայինք ապրիլ :

Բայց բնական է թէ երբ մի նեղ շրջանակէ բոլանդակ մարդկային սեռի հետ հաղորդակցութեան մտած լինիմք , յայնժամ անհնար լինիլ կըսկի ապրիլ նահապետական պարզ եւ սիրելի փոխանակութիւններով եւ գանազան դժուարութիւններ յառաջ կը գան :

Ահա այն դժուարութիւններ ջնջելու եւ կենակցութեան դիւր ընծայելու համար դրամն հնարել հարկ եղած է , որ արդարեւ իւր նպատակին նայելով մի սքանչելի դիւռ է :

Սակայն շատեր կան , զի փոխան դաջն օրհնելու կը գոչեն ստէպ , անիծեալ դրամ , անիծեալ դրամ :







Անա այսպիսի կոյր սիրով եւ մտածումներով կապրէր ազանս, նա բնաւ չէր հոգար ուրիշներու պարտան եւ բնաւ չէր քաշէր իւր անվայել արարքներէն . քանզի անհնարին ետեւեամբ զինք ուշիմ հեռատես եւ ուղղամիտ մարդու տեղ դրած էր :

Չէր ուտեր չէր ծախսեր, վասն զի ներքին երկիւղն կարծել կըտար թէ կըսպասի իւր դրամն :

Իւր սակիներէ բաժուել կամ հողին աւանդել միեւնոցն նշանակութիւն ունէր նմա համար :

Կուռքի պէս կը պաշտեր դանոնք եւ իւր կեանքն եւ գոյութիւնն նոցա մէջ ապաստան կը կարծէր :

Օհ, այն ինչ հիանալի զդժնամտութիւն կը համարէր իւր խոտամբեր կենցաղ, իւր տամբղի արարքներ եւ անիրաւ վարմունքներ, որով զղուանք կը բերէր զինք անանողին :

Անտանելի կծծիութեամբ ճոխանալով մի օր իւր կեանքն յարդի, անդորր եւ բարեխաւ յօրինել կերպէր . բայց հանապազօրեայ մտատանջութիւններ, երկիւղ եւ կասկածներ հալ եւ մաշ կ'ընէին զնա :

Կորուանելու, զոգցունելու եւ սպառելու մրտմրտութիւններ միշտ կը լիղէին եւ կը կրծէին նորա ուղեղն :

Վերջապէս այսպիսի սրտամաշ եւ արհաւելի վարանումներով հալելով մի օր եւս թարերար մահն կը դար եւ կը կտրատէր ազանին կենաց թելն եւ զաղբեցունէր զայն իւր սակիներն հողալէ . յորոյ ի զօր կը յուսար ազալայ ուրախ եւ անդորր կեանք :

Յակոյն իւր այնքան ճօխ հարստութեամբ ինչ կըրցաւ յաւելուլ մահուան տիրատունիլ բնակարանին

մէջ . բայց եթէ մի սեւ հողակոյտ ծածկոյ առած եւ իւր գլուխն մի մերկ քարի վրա դրած ննջեց ի յախտնութիւնն :

Այսպէս վերջացաւ ազանի կեանքն, այսպէս անհետացաւ նա իւր աղբի մէջէն բոլորովին անօգուտ լինելով նմա եւ աշխարհի վրա լոկ ունայնութեան եւ արգանատանաց ակասպան պարզելով, սն եւս զո՞ն անկաւ իւր արծաթսիրական ետեւեանն :

Նա կամովին հրամարելով աշխարհի անմեղ վայելքներէ ցածութեամբ եւ դձնութեամբ վարեց իւր կեանքն, աստուածային այն մեծ պարգեւն որ շատ օգտակար կրնար լինիլ հայրենեաց, եթէ նա արծաթի անյազ տենչով չը պաշտէր իւր ետեւութիւնն :

Բայց ինչ շահեցաւ միայն իւր Ենն հողալով եւ, ո՞ն, ես տեսայ նորա մահուան ինչուկն եւ դեղմութիւն, տեսայ որ թշուառութեան քաժակն մինչեւ յատակն քամեց նա, երբ կարող էր իւր աշխատութիւնն հայրենեաց նուիրելով հանդիլ զո՞ն սրտով եւ իւր գերեզմանի վրա ընդունիլ հայրենասէրներու վայելուչ սո՞ երանական մրցանակ :

ՕՐՀՆԵԱՂ ԼԻՆԻՆ ՆՈՒՅ՝ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՅՈՒՍԵՒՆ ԶՈՂՆՅԻՆ ԻՐԲԵԱՆՅ ԵՍՈՒԹԻՆ :

ԼԴ.

Ես տեսայ նաեւ շուղ մարդն, աչտնի հակոտնեայն կամ հակապատկերն . երբ ականջիս աղմբկալի ձայներ եկան, ուշ դրի եւ լսեցի զայնս, ինչ զուարճութիւն, ինչ պար, ինչ քաղցր նուազներ, ինչ չքեղ երեկոյթ :



Ո՞ւր էին ասորք . — մի ուրախութեան հարկինքի մէջ . հոն էր երիտասարդ շոյալին , հոն էին իւր կեղծ սիրելիներ , իւր սուտ բարեկամներ , իւր յափշտակիչ ընկերներ :

Եւ կ'ուտէին եւ կըմպէին . նոցա զուարթ չուրթեր որ կը միանային զինուոյ վրփրալից գաւաթներու հետ , ա՛հ , որպէս թէ մի յաւիտենական սերտ մտերմութեան կապով կապուէին :

Քայց այնպէս չեղաւ . վրիպեցաւ շոյալին իւր յուսոյն մէջ :

Խնդութիւններն անցան , հարկինքներն վերցան , դրամն սպառեցաւ , եւ մի փոքր ժամանակ յետոյ նայեցայ եւ տեսայ զի այդ ուրախ երեկոյթներու մէջ անձնութիւն ուխտող՝ կարծեցեալ բարեկամներ ամեն բան լափելէ սպառելէ յետոյ զոնէ մի սուտ բարեւ չէին տար խեղճ շոյալին :

Եւ շոյալին կ'ապրէր այնուհետեւ վճատ եւ ապաշաւ սիրով , առանց յուսոյ եւ առանց վարկի : Թէպէտ կը զղջայ իւր զեղխութեանց եւ գործած յիմարութեանց վրա , սակայն չէր ուղեր իւր սրտայն դարմանել աշխատութեամբ եւ բարի սնտուսութեամբ :

Վասն զի միանգամ անկանոնութեան վարժուած մարդն ալ չը կրնար դիւրաւ կանոնաւորել զինք . ծուլութեան եւ դատարկութեան սովորած ձեռքերն ալ չեն կրնար մեծ գործեր կատարել :

Մուլութիւն եւ զեղխութիւն կը թմրեցունեն շոյալի կազմն :

Այն հարստութիւնն զրո շոյալին ժառանգէր էր իւր ազահ հայրէն՝ ինչ մուլութիւններ արդեօք գործել տըւաւ նմա մինչև սպառեցաւ դրամն եւ

ծերութիւն այնքան կանուխ եկաւ հասաւ նմա , լըմընցուց նորա անպտուղ կեանքն որ խենթ ու խելառ գործերով փասակար եղած էր հայրենեաց :

Այս է ուրեմն այն անարգ մետաղ յուժէ ազգի ապագայն կ'ակնկալեն մի քանիներ . մինչդեռ սա յեղծում կը տանի հայրենեաց որդիներն . սնիծեալ դրամ , սնիծեալ դրամ :

Կեցիր , պիտի աղաղակեն այնպիսիք , մի այդքան տարապարա սնիծեր դրամն , որ մարդկային երանութեան , հանգստեան եւ բարեկեցութեան պատճառն է :

— Քայց , բարեկամներ կը պատասխանեմ նոցա . յայտնեցէք ինձ թէ ինչ վատերով կարելի է ընդունիլ դրամն իբր երանաւէտ եւ օրհնեալ առարկայ :

Ե՛հ ուրեմն , ատոր ալ տարակոյնս կուզէ . պատասխանեն թերեւս , տես այն մարդեր որ մեծ կը կոչւին . քանզի շատ դրամ ունին , ո՛ւր ալ երթան ի պատուի են , իւրեանց ամեն բան շտկուած եւ կոկուած . աշխատութիւն ինչ է , ամենեւին փոյթ չէ նոցա . մինչդեռ դու արեան քրտ մտած հողիդ չէ նոցա . կը բերես , նոքա հանդիստ կը ծխեն իւրբերանդ կը բերես , արդ ինչ բան է որ նոցա հանդիստ կը պարգեւէ , ո՛չ միթէ դրամն :

— Ո՛չ , ո՛չ , բարեկամներ , եթէ ճշմարիտ չէ այդպիսի առարկում , դէթ ճշմարտամտն է եւ Եսութիւն կը հոտի . ինչ կշիռ կրնայ ունենալ ազգի մեծամասնութեան վրա մի քանի անհատութեանց դրամով վայելած դիւրակեցութիւնն :

Եւ եթէ հանուր աշխարհ կամ մարդկութիւն ճոխացած լինէին դրամով եւ բնականաբար ամեն



այ՝ ունեցած գրամին վատան՝ աշխատութիւնէ ձեռք քաշելին եւ մշակութիւնն դադրէր : յայնժամ գրամն թող գար կենդանացունել հայրենիքն , ինչ ծաղրելի յոյս :

Ո՛չ , բարեկամներ , ո՛չ , չը կարծեսը թէ զըրբամն կրնայ կեանք կամ երանութիւն տալ մի ս եւ է ազգի , ընդհակառակն , զրամի ճօխութիւնն աւելի ի չապրութիւն եւ ի գեղտութիւն կ'առաջնորդէ ժողովուրդներն , ուստի կը ծնի բարքի սպակաւնութիւնն եւ սն եւս արդէն կ'իտովին ըսչքայեալ ազգութիւնն կը կործանէ իսպառ :

Այսպէս պատանեցաւ ինն Հռոմէական մեծ պետութեան անկումն :

Եթէ կայ գրամէ աւելի հոգը եւ գերագոյն միջոց որ անվրէպ առաջնորդ լինի սպաղայի , այն իսկ է մի գործունեայ մշակութիւն :

Ներկեցէք որ զձեզ պատմութեան վկայութեամբ համոզեմ :

« Ժէ . դարու մէջ Սպանիա աշխարհի մեծ մասին տէրն եղած էր . սրպէս Ներսպի մէջ՝ Միլանի դքսութիւնն եւ Նաբոլի տէրութիւնն , Սարաէնիան , Սիկիլիան եւ Յիլանտրներն . Սփրիկէի մէջ՝ մի մեծ եղերք , Ասիաի մէջ՝ քաղմաթիւ տէրութիւններ Հնդկական-Ովկէանի սահմաններով , Ամերիկի մէջ՝ Մեքսիկան , Բերուն , Պրազիլն , Բարակոէն , Նոր-Սպանիան եւ Եւրոթեանն . ծովին վրա անհամար կղզիներ , որոց երեւելիներն են Պարէաւ , Ազոր , Քանարեան եւ Փիլիպեան կղզիներ , նոյնպէս Մատէրա , Քուպա , Բորթօ Ռիքքօ , Սէն-Տօմիսիք :

« Սպանիաի Սմերիկէ քաջած ոսկին բոլոր Եւրոպան մի քանի անգամ կրնար ծախու առնել :

« Մի չափազանց ծուլութիւն արելով այս գեղեցիկ աշխարհի մէջ , կը թմրեցունէ աշխատութիւնն գերիներու յատկացունելով զայն : Գուլութիւն կամ անպործութիւն շարունակելով իւր ակիզքն՝ կը վճանան արձեաններն եւ երկրագործութիւններ :

« Աղքատն կը սկսի համարձակ մուրալ առանց անօթի , հարուստն կ'ապրի Սրբի նման ոսկին հողի տակ պահելով : Գիւղականներ մոռնալով արօքն՝ նախապատիւ կը համարին հոլոտական ծուլութիւնն : Նրկիք՝ անշարժ , բնակիչներն՝ անշարժ ամեն տեղ , անշարժութիւն արելով զաշտերն կը չորնան :

« Այս ազգովին ծուլութիւն տեսէք ինչ արդիւնք կը ծնին :

« Երկու Քասթիլցիներու մէջ երեք հարիւր քաղաքներ , հազար ալ Քառտոպպի կառավարութեան մէջ կ'ոհնչանան : Մուրերու հրաշալի երկրագործութեան կը յաջորդէ չորութիւն եւ թշուառութիւն , ոչր՝ հետեւանք դեռ այսօր կը ծանրանայ այս գեղեցիկ դաւառի վրա , միայն սն առածն կը մնայ թէ՛ արտոյն տանց ցրեմէ շքուանսր երբ անշէ Քասթիլէ :

« Վանքերու թիւն հազար հազարի վրա աւելնալով Բելգիայի անարդասաւորութիւնն կը տարածի բոլոր տէրութեան վրա :

« Վանականներն կը լինին անապատի հայեր . վերջնպէս Սպանիա կը մնայ առանց Սպանիացոյ . 1619 թիւին՝ մեծամեծաց ժողովն կը սկսի պօռալ թէ՛ « ամուսնութիւնն կը դադրի եւ ամուսնացողներն անգաւակ կը մնան . ոչ մարդ կայ երկիրն մը չափելու եւ ոչ զեկալար ուրիշ երկիր փախչելու , մի դար եւս եթէ անցնի այսպէս՝ չըկնայ Սպանիա » :



Ահա այսպէս էր Սպանիայի վիճակն երկու դար յառաջ : Աշխարհի այս գեղեցիկ երկրին մէջ ոսկին ճոխաբար սփռելով՝ մահաթմբեր ծուլութեամբ եւ աղիտաբեր թուլացումով վարակեց սիրտերն : Չի այնպէս համարեցին թէ ոսկիի ճոխութիւնն ամեն բանի կարող կ'ընէ զինքեանս եւ թէ հարկ չէ հարուստ ազգի աշխատիլ : Հուսկ ապա այն ծայրայեղ դատարկութեան մէջ, որ պիտի փութացունէր իւրեանց անկումն եւ մեռելութիւն, կը խելամոխի իւրեանց վիճակի վտանգին : Ուստի տակաւ առ տակաւ սթափելով՝ վանական անդործութեան հետ կը լքեն անապատի հայրութիւնն եւ կը կազմեն քաղաքական ընկերութիւնն :

Եւ ահա արհեստներն եւ գիտութիւններ վերանորոգ կը պայծառանան, եւ աշխատութեան անշարժ հիման կռթնած վերստին կեննեն այն խորխորատէ ուր անկած էին լոկ զբամի ճոխութիւնով եւ որ պիտի պատճառէր իւրեանց կորուստն :

Ահա բացայայտ կը տեսնուի զի մի միայն դժբախտ (ոսկի կամ արծաթ ինչ եւ է) ամուլ եւ ապիւկար է մի ազգի բարեփոխան եւ առաջըլիմութեան համար . եթէ մշակութիւն կամ աշխատութիւն աւջակից չը լինի նա :

Այն դրամ որ ի զեղիսութիւն եւ ի շուայութիւն հայրենեաց որդիներն, եւ բարձր ապականութիւն կը ցանէ մի ժողովուրդի մէջ յաւիտեան անիծեալ է :

Մշակութիւնն է ազգաց ապահովագոյն եւ իւրական հարստութիւնն . մշակութիւնն է երջանկութեան ուղեցոյցն եւ առաջնորդ եւ առանց մշակութեան դրամն ուրիշ բան չէ մի ազգի համար, բայց եթէ կորուստի գործիք :

Մշակութեան գինն է դրամն . նորա արժէք ուրիշ բանի մէջ չէ, եթէ ոչ նորա վրա թախած քրտանց մէջ : Ուստի մշակութիւն եւ դրամ պէտք է ձեռք տան իրարու . այս միութիւն անքակ պէտք է մնայ, յուսէ կը ծնին բոլոր մեծամեծ գործեր եւ ժողովուրդներու հանգիստն եւ բարօրութիւն :

Դրամն, որպէս յայտնի է, մարդկային յարաբերութիւններ կամ փոխանակութիւններ զլուրացունող մի միջոց է :<sup>3</sup>

Ուստի երբ կը տեսնեմ մի Հայորդի, որ դժբախտ այս սահմանէ անգին կը մղէ, երբ կը տեսնեմ թէ նա այնպէս կը սլաշտէ զայն որպէս հեթանոսն իւր կուռքն, երբ նա իւր անձնական հանգիստի նկատումով կը դառածանի կը պլչկի ազատութեան մէջ եւ հայրենեաց մասն եւ իրաւունքն կը գոհէ իւր ետութեան, երբ կը տեսնեմ մի շուայ ազգակիցս որ մի քանի փարա կամ դահեկան կը զլանայ ազգային բարենպատակ հաստատութիւններէ եւ խոշոր դումարներ կը վատնէ իւր վայրկենական հաճոյքներու համար, նա՛ որ մի փոքրիկ նպաստ անգամ չը մատուցներ դպրոցի կամ աղքատի եւ այսպիսի բարի նպատակներէ խնայած դրամն կը տանի կը մննէ դրամախաղի եւ կամ գինեառուներու մէջ . աւանգ, կը զթամ մի այսպիսի ազգակիցիս ետութեան վրա, եւ կը ցաւիմ, քանզի նորա բաժինն ալ պիտի լինի ապագայի այս անէճք :

ԱՆԻՇԵԱ՛Ղ ԼԻՆԻՆ ՆՈՔԱ՛՝ ՈՐ ԻՐԻՆԱՆՑ ԵՍՈՒԹԵԱՄԲ ԱՆՕԳՈՒՑ ԵՂԱՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ :



ծառայէր, բայց եթէ իւրեանց ընտանեաց բարքն ապականելու :

Յիրաւի չը կայ մի այնպիսի բան որ օգտակար չը լինի չափաւոր գործածումով որքան անօգուտ եւ վնասակար՝ չափազանցութեամբ :

Ո՞վ կրնայ ուրանալ թէ մի լաւ գինիի չափաւոր գործածում օգտակար չը լինի մարդու . բայց երբ շարունակ եւ շատ ըմպել սկըբաւի, մանաւանդ գինետուններու թունալից օգլիներն, յայտնի է թէ կը կորչի յայնժամ գինիի օգուտն եւ լաւութիւն, եւ կը լինի թոյն խաղաղութեան, կը հեռանայ ընական զուարթութիւնն . բարկութիւն՝ կատաղութիւն՝ խռովութիւն եւ չփօթ կըսկսին՝ եւ փոխան քաղցր վարքի երեւան կ'եննեն նորանոր խառնակութիւններ, արթնութիւն կը փոխուի թմրութիւն եւ յապչութիւն . վերջապէս համեստութիւն, դատողութիւն եւ ծանրութիւն կը փախչին կը հեռանան :

Հայրենեաց համար ի՞նչ անօգուտ մանաւանդ անվայել կեանք է այս :

Շատեր կան ստուգիւ որ ոգելից ըմպելին գործածել սկսած ատեն՝ չափաւոր են եւ անխոռով իւրեանց սովորոյթի մէջ, դի չափաւորութիւն չը վնասեր երբէք . բայց աւանդ, սովորոյթն որ մի անդամ հաստատեցաւ, ալ օր ըստ օրէ կը յաճախէ եւ չափաւորութիւն կ'անհետի :

Շատ հեղ մեր ազգի մէջ ընտանեկան երեկումներ կը պատահին, որոց նպատակն հարկաւ սիրտեւրու մէջ բարեկամութիւնն ամրապլինդ հաստատել է . սակայն այն գողար եւ անգին ժամերն ուրիշ կերպով չեն սահիր, բայց միայն ըմպելիքներու քանակութիւնն հետզհետէ կը բազմապատկի, չափա-

ԼԵ.

Հայութեան մարմնոյն վրայ երեւցող տգեղութիւններէ մին եւս՝ արբեցութիւնն է . ծնունդ մարդկային եւ նոյն իսկ ընտանեկան պարտուց մոռացման :

Արբեցութիւնն մի խոր վէրք է բացեր մեր ազգի ընտանեկան կեանքի վրա, որ վաքր խոչնդոտ չէ առաջդիմութեան :

Երբ գիշերային ժամերն կը հասնին եւ շուկայի աղմուկներուն կը յաջորդեն սրճարաններու եւ սինեատուններու շշուկներն, երբ ինամատար հայրեր, լի գորտիով կը դիմեն իւրեանց ընտանեաց դոպն, ստղին կը տեսին մի կարգ մարդեր, որոց մեծ մասն մանաւանդ ընտանեաց եւ զաւակաց ալ տէր են, բայց իւրեանց շահուն կարեւոր մասն կը թողուն գլինետան շշուկներու մէջ, եւ երբ սոքա սաք զլիսով դաւաթներ կը պարսկեն անյազարար, անդին նոցա կ'ինն եւ զաւակներ մի պատտո հացի կըսպասեն մութի մէջ նստած, եւ խեղճ փոքր մանուկներ ի դուր սպասելով իւրեանց հօր դալուսան, ձանձրացած եւ քաղցէ լիւած վերջապէս մեկզի կը իջնան եւ կը քնանան :

Ի՞նչ աղիկտուր երեւոյթներ կը հանդիսացունեն արդարեւ այսպիսի մարդերու տուներն . զոր եթէ կարողանային նշմարել այն խեղճ գինոյթներն, անտարակոյս յօժարակամ պիտի հեռանային իւրեանց վնաս եւ անարդ սովորոյթէ եւ պիտի ուխտէին կանոնաւորել իւրեանց կեանքն, որ ուրիշ բանի չը



ւորութիւն կը փոխուի ի չափազանցութիւն խաղաղութիւնն ի վրդովում, վեհանձնութիւնն ի նուաստութիւն եւ յանպատուութիւն, ոչ հանդարտ խօսակցութիւն կը մնայ, ոչ ազնիւ կերպեր, ոչ արթուն դատողութիւն, կագ, կռիւ, ատելութիւն, թշնամանք եւ խառնակութիւն կը շրջապատէ ամենն:

Արբեցութեան յետին վիճակի մէջ զաւուղ մի մարդ որքան զղուելի ընթաց կունենայ մարդկային ընկերութեան, որքան վեասակար է նա իւր հայրենեաց, եւ արդեօք իւր ընտանեաց իսկ ասելի չը լինիր նա:

Շատ հեղ, շատ մարդեր արբեցութեան ծայրայեղ վիճակի մէջ՝ անհող եւ անխորհուրդ կը լըքեն իւրեանց գործերն, կուրանան իւրեանց պարտերն եւ կը հակին իւրեանց կեանքն անցունել ամեն կերպ շտայլութեամբ:

Զուարճութիւն եւ զբօսանք գտնել կը կարծեն, բայց չեն խորհիր թէ, ինչ որ կը փնտռեն, ոչ շտայլութեան մէջ եւ ոչ զինուոյ փրփրալից բաժակներու մէջ կը կայանայ, այլ հոգիի եւ միտի զմայլման եւ սրտի անմեղութեան եւ հանդարտութեան մէջ, որք իրապէս կը ստացւին անմեղ եւ առաքինի կենցաղով:

Ի՞նչ պիտի լինի արբեցութեան պտուղն, նա որ կը խռովէ մարդու հոգին, կը խանգարէ միտն եւ դառնութեամբ կը լցունէ սիրտն:

Գինովն ինք իրմէ անտեղեակ, ուժաթափ եւ թմրեալ շարժել իսկ կը վարանի, երբ ուղէ քայլել ծունդերն կը դողդոջան, երբ ուղէ կանգնիլ իսկոյն կը գլի գետին: Անկամ տեղն ալ չը գլտեր, եթէ ցետի մէջ լինի, փափուկ անկողին կը կարծէ, ու

րովնտեւ անքան չփոխ է իւր երեւակայութիւնն, Գոռնիկ շուներ կը շրջապատեն զնա, զորս եղբայր կը կարծէ, գորդուրպով կը փարի նոցա:

Իմ սիրելի աղգի մանուկներ, զուշացէք ըզգուշացէք, որպէս զի այսպիսի անարգ եւ նուաստացնող մոլութեան ենթակայ չը մնաք դուք եւս, այլ հայրենեաց օղտակար կեանք անցունէք:

Օհ, ինչ ծաղրելի միտնդամայն ինչ ցաւալի արկածներ ունին զինովներն:

Նոցա շատերն սաստիկ արբեցութեամբ փողոցի մէջ փուած ատեն ընդունած են իւրեանց մահն կառքի անիւի կամ ձիւի ոտի տակ ճմլելով: Շատեր խոր փոսի մէջ անկնկելով վտանգուած են, կամ ցորտ սալայատակներ իւրեանց անկողին ընկելով՝ անբուժելի ախտերու ենթակայ եղած են: Շատեր ալ վուղոցի շուներէ խածատելով վիրաւորուած են, կամ գիշեր ատեն աւաղակներու հանդիպելով կողոպտուած եւ սպանուած են եւ այլն:

Յնյժ ողբալի է արդարեւ սոցա վիճակն, զի կամովին կը յանձնեն զինքեանս վտանգներու եւ իւրեանց բաժին կ'առնեն անհանգստութիւնն եւ անպատուութիւնն:

Կանոնաւորապէս սպրոզ մի մարդ զերծ է բոլոր այն վտանգներէ եւ արկածներէ, որոց կը պատահի զինովն: Սա այն ատեն կը հասկանայ իւր վիճակի տղեղութիւն երբ բաղդատէ զինք այնպիսի մարդու հետ, եթէ իւր վրա մի փոքր դատողութիւն մնացած է անյագ արբեցութենէ:

Մի գինով կ'արբենայ, որովնտեւ իւր երջանկութիւնն կ'որոնէ միայն այն գաղտնիներու մէջ, որ թոյնով լի են եւ յորոց դուրս չի գլտեր մի ուրիշ



հաճոյք , նորա միտն կաշկանդուած է այդ մահա-  
լեր հեղուկի վրա :

Եթէ նա ճաշակն առած լինէր աշխարհի ան-  
մեղ զուարճութեանց կամ ընտանեկան հրճուանաց ,  
եթէ տղայոց շէն եւ զուարթ շարժումներ մի հրա-  
պոյր ձօնէին նորա սրտին , պիտի մերժէր իսկոյն  
զինետան շշնկալից գաւաթներ եւ պիտի վազէր  
փարիլ այն մաքուր հաճոյից , որ հաստատ են եւ  
անձանձրոյթ եւ որոց ճաշակն սրքան առնէ մարդ՝  
այնքան աւելի կը բաղձայ վայելել :

Եկէք սիրելի մանուկներ , Հայ գաւաթներ ,  
մրացուցէք ձեր ձայն իմ ձայնի հետ եւ միասին  
մաղթեմք , որպէս զի զինով Հայերու սրտին մէջ  
տպաւորւի առաքինութեան սէրն եւ անմեղութեան  
հրապոյրն , մաղթեմք զի կարողանան մերկիլ իւր-  
եանց անարգ նուաստութենէ , յիշել իւրեանց մարդ-  
կութիւն , հայրենիք եւ հայրենեաց պարտաւորու-  
թիւններ , եւ ապրիլ այնպէս որ ապագայ սերնդոց  
սն օրհնութիւնն վարձատրէ եւ զնոսա :

ՕՐՀՆԵԱ՝ ԼԼԻՆԻՆ ՆՈՔԱ՝ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՕԳՏԻՆ  
ՁՈՂՅՅԻՆ ԻԻՐԵԱՆՅ ԵՍՍԿԱՆ ԿԱՄՔՆ ԵՒ ՀԱՃՈՅՔՆ :

L 9.

Ես տեսայ այն գինուիլն , որ նուաստութեան  
ծայրայեղ վիճակն եկեր հասեր էր , գլորւած էր նա  
մի աղբուսի մէջ ուր որդեր կ'ենային , եւ թէպէտ  
երկտասարդ՝ քայց մի հարիւրամեայ ցնդածի պէս  
ուժաթախ , թօշնեալ եւ տկարացեալ կը յօրանջէր  
եւ կը խորդար :

Եւ վշտալից կը գոչէի , աւանդ քեզ , աւանդ  
քեզ :

Տիւ էր , հանուր աշխարհ կը շարժէր , իւրա-  
քանչիւր իւր դրաղումով կը պարապէր , իւրաքան-  
չիւր հացի համար քերտ կը թափէր , ժիրածիր մե-  
ղուն իւր փեթակն եւ խոնարհ մրջուռն իւր շտե-  
մարան ճոխացունել կը ճգնէին :

Բայց նա անշարժ փուած կը յօրանջէր եւ կը  
խորդար , աւանդ , աւանդ :

Ձիերն կ'արշաւէին , կառքերն կ'անցնէին ժը-  
խորով , թռչուններն կ'ոտոտտէին եւ կ'երգէին աշ-  
խատելով . մի բան՝ ամեն էակ եւ ամեն բան հնա-  
զանդ բնութեան հրաւերին՝ յեռանդ եւ յարթնու-  
թիւն կը խայտալին . խոկ նա եղծելով բնութեան  
կարգն , ապստամբելով աշխատութեան օրէնքին՝  
հոն , աղբիւսին մէջ պառկած կը յօրանջէր եւ կը  
խորդար , աւանդ , աւանդ :

Ձարթիւր , ս մարդ , զարթիւր , ողորմելի , խե-  
լամուտ եղիր միանգամ թէ նա զոր կը պաշտես՝ յոր-  
պիսի նուաստութիւն իջուցեր է դքեղ , տես թէ այն  
հեղուկն ոյր վրա կը գուրգուրաս , սրպիտի անար-  
գութիւն տրւեր է քեզ , աւանդ , աւանդ :

Աշխարհի ամենաթշուառ մարդն է այն , որ կը  
ծնի մերկութեան եւ չքաւորութեան մէջ , մերկա-  
բար եւ անանկ կապրի եւ ունայնաձեռն կը չուէ  
աշխարհէ . նա մի հէք արարած է արժանի կարեկ-  
ցութեան , ում վիճակակից չը լինելու համար ամեն  
վայրկեան պէտք է յիշել մարդկային բարձր կոչումն  
թէ՝ մարդս մեծադորժութեան եւ անմահութեան  
համար ծնած մի էակ է :

Ձարթիւր ուրեմն , սով գինով , եւ այդ նուաս-



տութեան մէջէ, եւ ապրէ իբր մարդ կատարեալ՝ ճանաչէ քո մեծութիւն եւ բարձր կոչում: Թօթափէ արբեցութեան թմբերն եւ հպատակէ աշխատութեան այն խորհրդաւոր դաշին, որով ի լոյս կոչւած ես:

Զարթիր, հպատակէ բնութեան կանոնին, որ կ'արդիլէ ցերեկ ատեն քնանալն, երբ արեւելք ոսկեճաճանչ կը պայծառանայ:

Քո սիրտ եւս թող ունենայ մի վսեմ գոռոզութիւն, որ միշտ ջանք ունենաս մեծագործութիւններ ընելու, մեծ մարդ լինելու եւ մեծ մեծ տեղ գրաւելու մարդկային ընկերութեան մէջ:

Այսպէս ամենուս համարումն քեզ կը գրաւես, եւ ինչ, դու նախամեծար կը դասես շաղախիլ ազբիւսի նուաստութեամբ քան ծառայել մարդկութեան:

Ո՛հ, դատարկ ազբելու, նուաստ մնալու համար չէր որ Ստեղծողն կեանք եւ լոյս պարզեւեց քեզ. ուտել, խմել եւ դարձեալ խմել, եւ խմելով նուաստանալ աւելի քան անբան անասուններն, եւ մի օր եւս անցնիլ աշխարհէ ունայնաձեռն, ետին, հայրենեաց մէջ թողով յիմարական գործերու յիշատակներ, մուրութեան չարաշուք օրինակներ, ո՛հ, այսպիսի վարմունք, այսպիսի կեանք սարսափելի հեռեւանքներ ունի, դահալէժ անդունդի եզրին վրա ննջել եւ գինտութեամբ ծանրացած աչերն անկման անդունդին մէջ բանալ է:

Դու այսօր կը խմես եւ կը թաւալիս տակառներու տակ, ս գինով, եւ կը կարծես թէ այսպէսով կը ծաղրես աշխարհի վիշտերն եւ կը զուարթանաս, բայց գիտցիր որ հոգւով մարմնով պիտի կորչիս վաղիւ: Քանզի, որպէս կը վկայէ Թեոքոս, « Ամեն տե-

սակ ոգելից ըմպելիներն կը ծնին այլ եւ այլ ախտեր՝ որ կը համառօտեն մարդուս գոյութիւնն. եւ եթէ հիւանդանան այս տեսակ գրգռիչ ըմպելի գործածողներն՝ փորձըւած է թէ դեղերու շատերն չեն ազդեր»:

Մարմնոյդ վնասն բանի տեղ չես դնէր. այնպէս է, բայց անմահ եւ բանական հոգւոյդ հաշիւն օրպէս պիտի տաս, ո՛ խղճալի: Ներկայդ եւ ապագայդ միասին պիտի միացունես դու:

Ներկայն արդէն իսկ մեռած է քեզ համար. երբ կ'ապրիս մի անդդաց ետութեան մէջ, հեռի մարդկային արժանապատուութենէ եւ ազդային անդրժելի պարտքեր կատարելէ:

Ապագայն եւս մեռած պիտի լինի քեզ համար, երբ չը փոխես այս ընթացքդ, եւ չուխտես քո բարեխառնութեամբ, ժուժկալութեամբ եւ աշխատասիրութեամբ բարի օրինակ հանդիսանալ հայրենակիցներուդ:

Հեռագիր ուրեմն, եղբայր, հեռացիր այս վատ ունակութենէդ եւ քո երիտասարդական հուժկու բազուկներն օղիով չը թուլցունելով նուիրէ դանոնք ի շինութիւն հայրենեացդ, որպէս զի ապագայն քո յիշատակն իսկ օրհնէ սա անլուրի օրհնութեամբ:

ՕՐՉՆԵԱՂ ԼԻՆԻՆ ՆՈՔԱ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՇԱՀՈՒՆ, ՀԱՄԱՐ ՀՐԱԺԱՐԵՑԱՆ ԱՐՔԵՏՈՒԹԵՆԷ ԵՒ ԱՌԱՆՑ ԵՍՈՒԹԵԱՆ ԱԳՐԵՑԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ:



ցրութիւն եւ բարութիւն կը բերեն ազգաց, դու կը դարձանես ժողովրդեան մարմնոյն վրա մուշութիւններով բացած վէրքերն եւ կը պատես բուժաբեր սպեղանիներով :

Եւ արդարեւ, թէ դու բերան ունենայիր՝ պիտի բարբառէիր դա կերպով .

Հնութեան այն երջանիկ դարերու մէջ, այն ատեն երբ ես մարդերու մեջ կ'ապրէի, եւ մարդեր ալ ինձ հետ կ'ապրէին, երբ սակաւապետութիւն, գոհունակութիւն եւ պարզասիրութիւն ընդհանուր սովորյալ եղած էին մարդկային ընկերութեան մէջ, եւ հազուադիւր էր տեսնել մի մարդ որ հանրական կանոնաց ժխտեր եւ հեռանար իւր հմաններու նոյնութենէ, այն ատեն մարդերն աւելի երջանիկ կը տեսնէի քան թէ այժմ . այս դարի մէջ ուր միտերն որպէս թէ բարակցած լինին եւ մարդկային դատողութիւնն՝ կրթւած եւ լաւացած : Ներկայ դարուս մէջ, մարդն շատ պիտոյքներու դերի եղած է, պիտոյքներ՝ որ արուեստակեալ եւ անբնական են : Ամեն բանի մէջ կը տեսի մի չափազանցական ընթաց . չափազանցութիւն հագուստի մէջ, չափազանցութիւն ուտեստի մէջ, չափազանցութիւն ըմպելիքի մէջ, չափազանցութիւն վայելքի մէջ, ըզդացողութեան մէջ, խօսքի մէջ :

Եւ այս չափազանցական ընթացքով քանի յառաջանայ ժամանակն, այնքան ալ մարդկային ազդի առօրոյթիւն եւ ուժ կը տկարանայ եւ միանգամայն կեանքն կամ հասակներն կը համառօտին : Շատ անգամ՝ այն մարդեր՝ որ զիս իւրեանց մէջէ վտարական հալածեցին՝ կը հարցունեն իւրովի թէ՛ ինչ են սորա պատճառներն եւ չեն կրնար գտնել թէ՛

ԼԷ .

Երիտասարդութիւն, առօր կ'ապտառ բնութիւն, դու որ այժմ կեանքի փուճ զուարճութիւններէ եւ խաղերէ պահ մի կանդ ատնելով կը հարցանես թէ՛ ինչ պէտք է ընեմ, եւ դու որ աշխարհի անյատակ վայելքներէ յափրացած հեռաքրքրի ես հասկանալ թէ՛ ինչ ընթաց եւ միջոց պէտք են դովելի եւ քաղբ կեանք ունենալու եւ հայրենեաց օգտակար լինելու համար, լսէ ուրեմն, սիրելի երիտասարդութիւն, լսէ այն առաքինութեան ձայնն՝ որ կ'անուանի ԲԱՐԵՆԱՌՆՈՒԹԻՒՆ :

Ո՛հ, բարեխառնութիւն, քաղցր եւ ցանկալի առաքինութիւն, եւ սակայն անախորժ եւ անհաճոյ շատերու քմայն, ատեցեալ ո՛չ միայն ի Հայութենէ, այլ նաև դարուս մարդերէ :

Բարեխառնութիւնն, որ մեր սիրտերու ամեն կերպ փափաքներուն եւ ցանկութիւններուն չափն եւ սահմանն կը գծէ . այս ամենահարկաւոր առաքինութիւնն որ սանձն է մեր անկարգ եւ մոլի կրիգ եւ շարժառիթ առաջդիմական գովելի շաւիղին մէջ զմեզ մոծելու, աւանդ, հալածւած կը տեսի նա ընկերական աշխարհի ծոցէ :

Եկու ուրեմն փրկարար բարեխառնութիւն, եկու եւ խօսէ առ Հայ երիտասարդութիւն քո բոլոր պահանջումներն, համարձակ յայտնէ քո տրտունջներ, Հայութիւնն հարկաւ դո՛ւ պիտի լինի քո վրա, քանզի դու երանութիւն կը բուրես, քո քայլերն քաղ-



« Մարդս անբարեխառնութեամբ ընական օրէնքներէ դուրս անընական գործերու կամ պիտոյքներու անձնատուր լինելով անդգալապէս կը խանդարէ իւր առոյգութիւնն , քաջակազմութիւնն եւ երկարակեցութիւնն » :

Շատ անգամ ալ նահապետներու պատմութիւններն կարգալով , կը դարմանան նոցա երկարակեցութեան վրա , որպէս աշխարհի ամենէ երկար ապրող մարդն Մաթուսաղա՝ որոյ կեանք մինչեւ 968 տարիներ երկարեցաւ՝ բաղդատելով իւրեանց կարծատեւ կենաց հետ՝ որ այժմ 80 է եւ 90 է վեր չ'եղնէր եւ մի հարիւրամեայ ծերունին մտնանիչ կը ցուցնեն , այս մեծ տարբերութեան առջեւ յապուշ կը կրթին իմ հալածողներ եւ չեն մտածեր թէ որչափ ալ մեծ տարբերութիւն կայ նոցա եւ իւրեանց արդի կենցաղին մէջ : Նոքա միշտ բնութեան հպատակներ , անչէղ կը քայլէին նորա ճանրայէ : նոցա կեանք ապականարար մոլութիւններով , անծայր վիշտերով եւ ճնհուրով եւ օղի , յէի , չիւի , քիւի , ձիւի , ձիւի եւ քիւի նման արուեստական վասակար պիտոյքներու ծանրութեամբ չէր ճնշուէր :

Նոքա ազատ էին այսպիսի պիտոյքներու մոլութենէ եւ հետեւաբար ազատ օդ կը շնչէին : Մի քանիներ մաքուր օդի մէջ , վճիտ ջուրերու մօտ եւ պայծառ երկինքի տակ կը մշակէին իւրեանց արտերու եւ ազարակներու բեղուն հողերն եւ ժուժկալութեամբ ապրելով անվտանգ կը պահէին իւրեանց քաջառողջութիւնն : Ոմանք ալ հովուական ցուպ եւ սրինգ ի ձեռին իւրեանց խայտաղղ հօտերով մշտադալար մարդերու եւ բլրակներու մէջ կը վարէին իւրեանց անմեղ կեանքն :

Բայց երբ դարեր իւրեանց շրջանն ըրին , մոլութիւններն ալ իւրեանց ապականարար սերմեր ձգեցին մարդկային կորովի կազմի մէջ եւ այդ պրծգալի սերմեր այսինք՝ ախտերն եւ հիւանդութիւններն յորդոց որդի յաջորդելով հետզհետէ խանդարեցին մարդկային ուժն եւ քաջառողջութիւն :

Մարդեր , դուք դիս աքսորեցիք ձեր մէջէ , բայց Բրեյտանիան դարձեալ բարեկամ է ձեզ եւ դիտել կը տայ ձեր առած սխալ քայլերն : Անհրաժեշտ պիտոյքներու հետ շապական պիտոյքներ մատակարարելու հողերն անդալի կերպով կը մաշեն ձեր կեանքն եւ բուռն բաղձանքներ կը նեղեն զձեզ : Ձեր կեանքն սրտամաշ գործերով , դրաղումներով եւ հողերով ծանրացուցեր էք : Սակաւատկտութիւն չունիք , միշտ դժգոհ էք ձեր գուած վիճակէ , երբ կը տեսնէք մին ունայն դարդերու եւ վաղանցուկ վայելքներու մէջ , իսկոյն ի նախանձ կը գրգռիք եւ հառաչանքներով կը հալիք՝ երբ դուք ալ չը կարողանաք վայելել դայնս :

Մարդկային ընկերութեան մէջէ հալածուելէս ի վեր շատ անգամ կը նկատեմ ձեր կենցաղական մոլութիւններ , որով դաւաջան կը լինիք ձեր կենաց : Քանի մեծ տարբերութիւն կայ ձեր կենաց եւ նահապետականի մէջ , որ իրաւի այնքան երկար կը տեսէր : Այս օդի է , այս քի , այս ծխախոտ , այս չիտեմ ինչ ասելով անձնիւր ոք մէկ մէկ բանի ստրուկ դարձեր է : Ես , Բրեյտանիան , որպէս առաջին բարեկամ մարդոց , որքան կը զայրանամ մանաւանդ այն պատանիներու վրա , որոց մի սիրելի պարծանք կը թուի այս արուեստական վասակար պիտոյքներու վարժին , եւ թէպէտ բնութիւնն



ալ կազդարարէ նոցա ի սկզբան թէ այս բաներ վնաս են մարդկային կազմին . սակայն տարօրինակ յամառութեամբ եւ մեծ տանջանքներով վերջապէս կը սովորին եւ ենթակայ կը լինին , որպէս թէ մայրենի կաթն լինէր :

Երբեմն ուրախութեամբ կը դիտեմ այն երիտասարդներ , որ արուեստական պիտոյքներու բուրովին դերի չեն լինիր . բարեխառնութիւնն եւ ճշմարիտ պիտոյքներն միայն կը սիրեն . բայց քանի մեծ կը լինի ցաւս երբ կը տեսնեմ այն զուարթածաղիկ պատանեաց եւ օրիորդաց խումբերն զորս կ'ապականեն նմանասիրութիւնս եւ չար օրինակի ազդեցութիւնս , եւ որք բնական պիտոյքներով դո՛ն չ'եղած՝ աւելի կը սիրեն անբնական եւ անկարեւոր պէտքերն , դեղխութեանց եւ հեշտական անկանոն վայելից մէջ կը թաղւին , բնութեան ձայնին դէմ կը փակեն իւրեանց սկանջներն , կը հակառակին նմա որով եւ կը տկարացունեն իւրեանց կազմն եւ կը կորցունեն իւրեանց քաջաւողջութիւնս , քանզի բնութիւնս պատրաստ է միշտ պատժել այն ամենն որ չեն պահեր իւր օրէնքներն :

Երիտասարդութիւնս երիտասարդութիւնս , առոյգ եւ կայտան բնութիւնս . դու որ կը սիրես աշխուժալի հասակդ անցունել անեղբ ուրախութիւններու , հաճոյքներու եւ վայելքներու մէջ , ինձ եկու որ համառօտիւ ցոյց տամ քեզ այն մշտաբուխ աղբիւրն ճշմարիտ եւ երջանկաբոյր զուարճութեանց : Երանութիւնս եւ վայելք կը փնտռէք , ահա ես , Բրեթանիան , ասեմ ձեզ , ամենեւին , ոչ երբէք կարելի է դանել զայնս հեշտութեանց եւ չափազանցական ընթացի մէջ : Գուք կը սխալիք չարա-

չար երբ Վերսփարատելու պատրուակով զձեզ օղի , գինի , ծխախոտի եւ ուրիշ այսպիսի վնասակար բաներու կ'ենթարկէք : Տխրութիւնս փարատել կուզէք , զուարճանալ կը խնդրէք , ձեր վշտաց օրերն քաղցրացունելու տեղ կը փնտռէք . ո՛հ , ինչ անուշ եւ հոգեզմայլ դբօսանքներ , վայելքներ կան բնութեան մէջ , երբ լուրջ մտածութիւնս ունենաք , երբ զձեզ չըջապատող բնական առարկայից եւ տեսարանաց վրա մի ուշադիր նայած ուղղէք :

Երբ յերկին կը դարձունէք ձեր աչեր , միթէ չէ յուզուիր ձեր սիրան : Երբ կը դիտէք , այն ընդարձակ կամար ուր կապուտ կարմիր ամպեր անդուլ կը ձեմնն , ուր այնքան լուսաւոր գունդեր նշուլադեղ կը փալիլան , ուր սակեճածանչ արեւ իւր գահն հաստատած՝ ճառագայթի նետեր կ'արձակէ յերկիր , դիտելով այս բաներն , ձեր ողիներու մէջ մի բերկրութիւնս , մի հաճոյք չէք իմանար :

Բայց եթէ երկինքի տեսին չը կարողանայ փարատել ձեր սիրտերու ձանձրոյթնս եւ արծարծել մի քաղցր զգացում , կարող էք դարձունել ձեր աչեր դէպ բնութեան տեսարաններն եւ առանց տաղտուկի հիացումով դիտել կանաչադեղ խոտերն , քրնքուշ ծաղիկներ եւ ռոտախիա ուռնիկներ , եւ սոցա երերուն ծիւերու տակ պատասպարեւած բիւրաւոր միջասներ եւ որդեր :

Կարող էք հաճութեամբ ուսումնասիրել մեզուի ժրութիւնն , նորա իմաստուն եւ նախատես գործօնութիւնն որով ծաղիկներու հիւթն եւ անուշն զողելով կը գործէ իւր պաշարն :

Կարող էք օրինակ առնել մըջուներէ , տեսէք , երբ դաշտերն իւրեանց ձմրային ձերմակ գոր-



գէ մերկած կանաչագեղ դաշարներով կը պճնին , բիւրաւորներ կեղնեն երկրի ներքեւէ , փոքրիկ աշխատաւորներ , ժրաջան մշակներ , որ հազիւ աչքի կերեւին եւ կարծես մարդկային ոտերու կոխան պիտի լինին , բայց ժիր ժիր կը քայլեն , անխոնջ կաշխատին , մէյ մ'ատլին , մէյ մ'անդին կը չըջին ոլորապտոյտ , մինչեւ որ գունեն մի ցորենի հատիկ կամ մի շիւղիկ , խածատեն եւ դառնան հողի մէջ մտնեն :

Ո՛ր մարդեր , այս փոքրիկ աշխատաւորներ , որ ձեզ նման ունին կենդանական գործարաններ , ի՛նչ վսեմ օրինակ կ'ընծայեն ձեզ . բայց ձեր Եստեթիւն եւ Հպարտութիւն չէ թողեր զի ուշ դարձունէք նոցա վրա եւ ունիք թէ որպէս պէտք է աշխատիլ եւ ապրիլ :

Մի կողմէ երբ արեւն կը ծագի , երբ անուշիկ հովեր կը փչեն , եւ գարնային դեղ երեւոյթներ կը պարզին եւ երբ մարդերդ ի տես դալով ընտելեան կ'ողջունէք զայն եւ նորա բարիքներով զմայլած կ'երգէք զուարթ կամ կը խորհիք խնդազին , միւս կողմէ այդ փոքր մրջնակներ , անյողողդ աշխատաւորներ , գուցէ նոյն եւ աւելի ուրախութեամբ կը համակւին , երբ մի հատիկ , մի շիւղիկ , մի փշրանք գտնեն , զոր շտապով կը տանին մթերել խրեանց ստորերկրայ ամբարներու մէջ : Ի՛նչ վսեմ հեռատեսութիւն , տեղէք , ի՛նչպէս զխոնն զի ամբային առատութենէ յետոյ պիտի տիրէ մի ձմրային սով . այս մշտատեւ երեւցող զեղեցիկ գարունն պիտի անցնի եւ այս առատաբուխ մայր բնութիւն պիտի թաղւի պահ մի ձերմակ պատանքով եւ անա դա իմաստուն աշխատաւորներ այժմէն կը պատրաստուին կուրծ տալ ապագայի :

Եզակիսն օրինակ ձեր անցաւոր զեղեցիկ երկտասարդութեան եւ մտալուտ տխուր ծերութեան համար :

Բայց գուցէ մրջնակներու կեանքին նկատողութիւն ընել տալտուկ բերէ եւ չը հաճեցունէ զձեզ՝ կարող էք դիմել սիրադալայլ թուջնոց , որք անշուշտ տխրութեան քօղն մէկդի պիտի քաշեն ձեր դէմքերէ եւ պիտի տան ձեզ վայելել ձանձրոյթէ ազատ վայրկեաններ : Տեսէք , այն անհանդարտ էակներն ծառէ ծառ , տեղէ տեղ կը թռին , կ'ոտտուտին ծառիւն արձակելով . . . :

Եթէ իսկ սոցա ոչ մին ուրախութեան ճաշակ չը տայ ձեզ եւ չը կարողանաք զգալ մի հաճոյք , ունիք նաև ծոյն , կապուտագեղ ջուրերով ընդարձակեալ ծոյն , ոյր ալիքներ ետեւէ ետեւ կըգան եզերաց կ'ընդհարին եւ զուարթացոցիչ շտապիւններ կ'արձակեն : Մերթ հեղիկ հեղիկ կը ծփան նման հանգարտանոս դետակաց եւ մերթ կը փրփրին կը զրկուին , նման շղթայադերձ տաղանաց , Երբ կարծէք թէ ետեւէ ետեւ գալով պիտի ողողեն ցամաքն եւ ամօթահար ետ ետ կը քաշուին , որպէս թէ չը համարձակին եխել մարդաբնակ երկրին վրա : Այ՛ս , չեն իսկ համարձակիր , քանզի Անեղի սահրաման կը սանձէ նորա ջուրեր . «Մինչեւ հոյ գաս եւ նորէն քեզ դառնան քօ ալիքներ » :

Ա՛հ , բնութեան այս հոգեզմայլ տեսարաններն զխոնելով , զխոնելով նորա մէն մի հիւսաքանչ իրեր եւ էակներ՝ կարող էք չըզգալ զուարթութիւն եւ հաճոյք . . . . :

Ս՛ն ուրեմն , ո՛ր երկտասարդութիւն , միտնգամ այց ելէք բնութեան մեծ տեսարանին , երբ ձեր հո-



գիներ ձանձրոյթ կըզգայ , կը նեղանայ եւ զուար-  
թութիւն կը փնտռէ , մի որոնէք դայն արուեստա-  
կան եւ անընական պիտոյքներու եւ հաճոյքներու  
մէջ :

Երջանիկ եւ ցանկալի զրօսանք բնութեան  
մէջ , բնական կերպով ապրելու մէջ է , ասկէ դուրս՝  
ամենն ալ մեղապարտ եւ կործանիչ : Ես , բարե-  
խառնութիւնս , կը խրատեմ զձեզ , որ մերժէք այն  
ամեն անբնական պիտոյքներ , ոյց կարօտութիւն  
չունիք . հրաժարեցէք անկանոն գործերէ եւ զգա-  
ցումներէ , սիրեցէք բնութիւնն եւ ձեր երանութեան  
համար խօսող բարեխառնութիւնն մի հալածէք ձեր  
մէջէ որպէս զի մի օր հանդիստ ծերութիւն վայելե-  
լու կարող լինիք :

Ահա՛ ս սիրելի Հայորդի , բարեխառնութիւնն  
այս անգին յորդորներն կը տայ միշտ երիտասարդ  
սիրտերու . նա կը պահանջէ զի , հաճոյքի համար  
մեր կազմին , խելքին եւ վարքին վառակար եղող  
արուեստական պիտոյքներու դերի չը լինիմք եւ չա-  
փաւորութեան կշիռն ի ձեռին զգուշացունենմք զմեզ  
կիրքոտ եւ անբարեխառն զգացումներէ եւ գործերէ :

Արդարեւ նոքա որ իւրեանց երխասարգու-  
թիւնն բարեխառնութեամբ անցուցին հեռի դեղ-  
խութենէ եւ հեշտակեցութենէ՝ հանդիստ ծերու-  
թիւն վայելեցին եւ կը վայելեն . իսկ նոքա որ ան-  
բարեխառնութեամբ անձնատուր եղան արեցու-  
թեան , հեշտութեան եւ այլ մոլութեանց՝ սվ , քա-  
նի խոտիկալ վիճակ եւ դժնդակ վախճան ունեցաւ  
նոցա ծերութիւնն :

Բարեխառն լինիմք ուրեմն , ս Հայ դուակներ ,  
իմ անուշիկ ազգակիցներ : Եւ կը կարծէք թէ այն-

քան խիստ են բարեխառնութեան պահանջներն . կը  
կարծէք թէ նորա դրած օրէնքն հակառակ է մեր  
բնութեան կամ խառնուածին , ոչ , ոչ , ինչպէս մի  
փոքր յառաջ խօսել տրւի , նոյն իսկ բնական օրի-  
նաց շաւիղն է , յուսէ՛ք բարեխառնութիւնն կ'առաջ-  
նորդէ զմեզ :

Բուռն կիրքերն թոյն են մեր էութեան . դա-  
ւածան՝ մեր առողջութեան , իսկ մի սահմանաւոր  
եւ կանոնաւոր կենցաղ՝ առաջնորդ է երջանկութեան :

Գովելի եւ կատարեալ չէ այն մարդ՝ որ միայն  
իւր կիրք՝ բու անձնատուր եղած է : Բոլորովին կիր-  
քերու տեղի տրուող սիրտն ալ անզգայ եւ ցուրտ է :

Բարեխառնութիւնն այս երկու ծայրերու մի-  
ջին ընթացն է , եւ այս իսկ է ամենէն գովելի եւ  
բանաւոր ընթացն :

Ա՛ւր էր թէ մի օր , այս մարմնաւոր աչերով  
տեսնէի բարեխառնութիւնն , տարրացած իմ Հայ  
ազգի երխասարգներու վրա :

Ա՛ւր էր թէ շքեղ անունով բացւած աղ-  
գային ընկերութեանց կեդրոններէ ներս մտած ա-  
տենս , չը տեսնէի Բազոսեան երկրպագուներ . որ  
անյազաբար ոչեղից ըմպելիներու մէջ կը լողան կար-  
ծես , զուրկ ազգային զգացումներէ , պիղծ խօսե-  
րով եւ հայհոյութիւններով կ'ազտեղեն իւրեանց Հայ  
չուրթերն :

Ա՛ւր էր թէ չը տեսնէի այն խումբ խումբ Հա-  
յերն , որ իւրեանց անդին ժամանակն վայրապար  
զրօսանքներով եւ փուճ խաղերով կը մտնեն , որ  
աշխոյժով կը գործածեն Բաճլուէ փուլերն եւ շարեր .  
բայց կը թուրնան հսութեամբ , երբ ազգային պար-  
տաւորութիւն ի գործ կը կոչէ գնոսա :



Ո՛ւր էր թէ անբարեխառնութեան կեդրոն եւ զող արդի դրօսարաններն Աթերցարաններու եւ Լսարաններու փոխւէին եւ արդի խաղամօլ եւ արբեցող երիտասարդներ՝ ընթերցող եւ գրասէր նաեւ գործասէր լինէին . փոխան պիղծ խօսերու եւ հայհոյութիւններու՝ ազգօրուտ բանակցութիւններ լըսւէին եւ փոխան լիտի եւ թուրացուցիչ շփոխներու եւ ճակներու՝ ազգային վառվառն եւ քաղցրիկ երգեր թոթաւային Հայ բերաններու մէջ :

Ո՛ւր էր թէ Միաշաքաթի եւ սօն օրերու ժամավաճառութիւններն եւ մեղապարտ պրօսանքներն սիրտ եւ միտ կրթող պարապումներու փոխւէին Միաշաքաթեայ դասարաններու մէջ , որոց հաստատութեան անքան կարօտ է մեր անուս Հայութիւն :

Ո՛հ , երբ արդեօք պիտի տեսնեմ այս իրձերու լրացում . երբ արդեօք ազգային փրկութեան արեւն պիտի ծագի Մասիսի դազաթին վրա . . . . .  
 ս Տէր , ի քէն է օգնութիւն մեր ցիր եւ ցան եղած ազգի համար : Գու այցելէ այս ժողովուրդ՝ որ անքան երկար դարեր նեղեցաւ եւ հալածեցաւ դատիդ համար : Գու արմատախիլ ըրէ ետութիւնն Հայ սիրտերէ եւ կ'աղաչեմք , հաստատէ ի նոսա բարեխառնութիւնն , աղբիւր մարդկային երջանկութեան :

Սրդարեւ երբ մի ազգի մէջ բարեխառնութիւնն հաստատուի , ետութեան պատճառներէ շատերն կը չքանան ինքնին , քանզի անձիւր անհատ չափաւոր պիտոյից կարօտ , պէտք չունենար շահու կամ հարբտութեան համար կուիլ իւր ազգակիցներու հետ ամենազնչին պատճառներով . պէտք չունենար կ'անսեմ , սին փառաց հասնելու տենչով կամ իւր քսակին պարարելու յոյսով մատնութիւն կամ դաւաճանու-

թիւն մտաբերել իւր անմեղ եւ հաւատարիմ ազգի դէմ . վերջապէս կը վերնան պառակտումներն , կը դիւրանայ սիրտերու միութիւնն եւ աշխարհ զմայլելով այս նախանձելի վիճակի վրա կը դռչէ .

ՕՐՀՆԵԱՄԼ ԼԻՆԻՆ ՆՈՒՔԱ՝ ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՕԳՏԻՆ ԿԸ ԶՈՂՅԵՆ ԻՒՐԵԱՆՑ ԵՍՈՒԹԻՒՆ :

### ԼԸ.

Հնչ , քո առաջդիմութեան մի ուրիշ խոչնդոտն օտարամոլութիւնդ է :

Զարմանալի հակասութիւն , մի ազգ՝ որոյ սիրտի մէջ ետութիւնն անքան խոր արմատներ արծակած լինի եւ դարձեալ երթայ օտարին ծնրադրէ :

Յիրաւի պէտք չէ որ քամահրեմք եւ անարգեմք օտարն . քանզի որպէս ազգի սէրն մի պարտանհրաժեշտ է , նոյնպէս մեր ցաւերուն , մեր դէպքերուն , մեր սովորութիւններուն օտար եղող ազգերն յարգել մարդկային պարտաւորութիւն է . դի նոքա իսկ մարդկային ազգի ուրոյն ուրոյն մասերն են :

Չէ որ անձիւր ոք եղբայր եմք իրարու . չէ որ մի եւ նոյն նախահօր եւ նախամօր շտառախոյներ եմք , եւ միեւնոյն նախնական արեան սերունդներ :  
 Չէ որ անձիւր ոք նոյն զգայարաններն եւ նոյն կազմուածի յատուկ տեսիլքն կը կրէ :

Ո՛ր մարդն է այն ի մէնջ որ ընդհանուր նմանութեան հակառակ երեսի միջեւն ի բնէ մի աչ բուսած ունենայ փոխան երկուքի . կամ երկու բերան եւ չորս ականջ կրէ իւր վրա փոխան մի բերանի եւ երկու ականջի :



25 որ անձիւր ոք մի յատկութիւն միայն ունիմք, որ կը պատկանի մարդկային սեռի. այս է բանականութիւնն կամ խօսուունութիւնն կենդանական խումբը մէջ որոշելու համար: միթէ ամենս այս երկնային առաւելութիւնն չունիմք, միթէ ամենս ալ խորհելու, յիշելու, դատելու, վճռելու եւ երեւակայելու կարողութիւններն չունիմք:

Թէեւ այս տեսակէտով ամեն մեկերնիս իրարու համապէս եւ հաւասար եղբայրներ եմք, թէեւ ամենս ալ իբր մի գերդաստանի որդիներ հայր, մայր, եղբայր եւ քոյր տարածւած եմք երկրի վրա, առանց բնաւ իրարու ըսել կարողանալու թէ՛ ես մեծ, իշխան եւ տէր, դու ծառայ, ստրուկ եւ փոքր. թէեւ արեւն ամենս ալ հաւասարապէս կը լուսաւորէ եւ անձրեւն հարուստի ազարակին հետ կը թանայ միանդամայն աղքատի արտիկն. թէեւ ամեն մարդ մինչեւ իսկ թագաւորներն, իւրեանց հպատակներու պէս մեռնելով կ'իջնեն եւ կը թաղուին, նոյն հողին մէջ. թէեւ այս ամեն պարագայներ անխուսելի պարտ կը դնեն մեր վրա սիրել ըլոր մարդերն եւ ըլոր օտար աղքերն. սակայն սիրելի ազգակիցներս, մեք ալ չափն անցուցինք օտարսիրութեան եւ եղանք օտարամոլ սարուկներ. մարդկութիւնն այսպիսի պարտ չը դներ մի ազգի վրա:

Օտարի խոտածաղիկներն աւելի քաղցրաբոյր կը թըլին մեզ քան մեր սիրաբոյր վարդերն:

Օտարի կեռիկոճայն աշուաններն որ հակամէտ են մեր աչերն փորելու, աւելի յարդի կը բռնեմք քան թէ մեր սիրապլպուլ սոխակներն:

Թէպէտ չեմ ուրանար զի մեք օտարի խոտա-

ծաղիկներէն աւելի անպէտ կճաններ՝ այսինք ներքին թշնամիներ եւ մատնիչներ, եւ նորա ազուաներէ աւելի դիշատիչ թռչնիկներ ալ ունիմք:

Բայց միթէ մեր օտարամոլութիւն կ'արդարանայ սովաւ:

Ո՞րպէս չը խղճացինք օտարի վատ եւ տղեղ սովորութներու հետ փոխել մեր այնքան պարզ, գոզաք եւ սիրուն սովորութներ՝ որ առաքինութիւն կը բուրեխին. տեսնելով մի գեղեցիկ բան ս եւ է օտար ազգի վրա, կը փութամք զմեզ բոլորովին նըմա համակերպել. բարիին հետ վասն ալ կ'ընդունիմք, բայց աւաղ որ մեզրածոր մեղուն խայթող պիծակէն որոշելու աջողակ չեմք դեռ:

Այնքան յառաջ տարինք մեր օտարամոլութիւն, որ մինչ իսկ մեր դաւակներու սէրն փոխանակեցինք անասուններու սիրոյն. վասն զի տեսնելով օտարի վրա որ իւր որդիներու խնամքն դայեակներու ձեռք յանձնած՝ ինք իւր թեւերու մէջ կը գզէ մի անբան անասնիկ, չնիկ կամ սկուռգ ( Յի՞ճ ) թերեւս այնքան չը հողալով իւր որդին որքան իւր շնիչն, մեք ալ, իբր նորութիւն, հետեւեցանք այս օտարոտի շնական սովորութին, որպէս թէ մեր կիներն չը տային մեզ դաւակներ, ամեն սիրոյ եւ գորովի արժանի, ամեն բարձր խնամքի կարօտ եւ երկար ու անընդհատ կրթութեան առարկայ:

Ո՞հ, մի ծնող այնքան անխուսելի խնամք եւ գորով կը պարտի իւր որդիներուն՝ որ անբան կենդանիներու վրա դառնալ եւ միանգամ նայելու իսկ ժամանակ չունի:

Բայց այս պարտաւորութեան զգացումէն զուրկ



չատ Հայ ընտանիքներ կան այսօր՝ որ իւրեանց տու-  
ներու մէջ շնիկներ կը պահեն, կը սնուցնեն, կը  
զգուեն, կը մեծարեն, կը զբօսնուն, եւ իւրեանց որ-  
դիներն, ճշմարիտ եւ անհամեմատ զուարճութիւն-  
ներ, կը լքեն յաճախ՝ Յոյն ծիծամայրներու ձեռք, եւ  
Հայկական նոր սերունդի այդ անդամներ կը մեծ-  
նան *עלמא*՝ *עלמא* :

Այս բան փոքր բացատուումով Հայ մեծատուն-  
ներու մոլութիւնն է դարձեր այսօր :

Բայց երանի թէ մեր օտարամոլութիւն հոս  
կանգ առնէր. աւանդ, լեզուի օտարամոլութիւնն  
իսկ իբր մահաբեր քաղցկեղ (չիրիփէնչէ) վակած  
է մեր ազգութեան մարմնոյն վրա :

Ունիմք մի լեզու, որոյ քաղցրութեան վկա-  
յած իսկ են օտարներէ ոմանք, բայց չեմք ուղեր  
ի գործ ածել եւ մշակել զայն :

Երբ երկու Հայ քով քովի կը գան եւ կը տես-  
ւին, մի հաճութիւն կը զգան օտար լեզու խօսելով.  
նախանձաւորութեան մի փոքրիկ կայծ իսկ չը կայ  
մեր սիրտերու մէջ. թողումք այն անսովոր ճիգերն  
զոր Հայ մայրեր կը թափեն նորատի մանուկին վրա,  
որպէս զի արտասանել տան նմա *Քուսի*, *Բուրձն*,  
*Խոփէ*, եւ այլ այսպիսի օտար բառեր, որոց Հայե-  
րէններն մեզ համար աւելի նուիրական եւ քաղցր  
պէտք է թըլին եւ պարտ իսկ է որ մեր նորատի  
մանուկներուն *Քուսի* ըսելու տեղ՝ *ԵնՈՐՀ*, *Բուրձն*  
ըսելու տեղ՝ *ՆերՈՐՄ* եւ *Խոփէ* ըսելու տեղ՝ *Ա.Ո. Էն*  
ըսել ուսուցնեմք նախ :

Եւ մեր վարժարաններու մէջ ազգային լեզուի  
ուսումէն յետոյ պէտք է աւանդեմք օտար լեզու-  
ներն :

Ապա թէ ոչ՝ այս ընթացք ազգութեան քայ-  
քայնում է :

Յետ քան կրօնն, ինչ բան որ ազատելով ըզ-  
մեզ ժամանակի ամենածախ ժանիքէ բերաւ հասուց  
այս կէս-քաղաքակիրթ դարուս կէս-ազատ նաւա-  
հանդիսան :

— Ո՞չ ապաքէն մեր ազգային լեզուն :

Եթէ մեր լեզուն իսկ ազգային զգացումներու  
պէս մոռացման ենթարկուէր իսպառ, յիրաւի այն  
ատեն փոսին յատակն ժամանած էինք :

Արդարեւ մի ազգի անկորչելի նշանն եւ ա-  
ռաջդիմութեան յոյժ կարեւոր պիտոյքն՝ լեզուի մը-  
չակումն՝ գործածութիւնն եւ կանոնաւոր դպրու-  
թիւնն է :

Բայց մեք զուրկ եմք նաեւ այս փափաքելի  
պայմանէ :

Բազդն կարծես զմեզ կրկնակի հարուածելու  
համար սիրտի պառակտումին հետ լեզուի կամ բար-  
բառի պառակտում ալ տըւած է մեզ, տարբեր եր-  
կիրներ ցրելովն իս ջնջուած է մեր լեզուի ըստ կա-  
րելոյն ունեցած միակերպութիւնն ալ :

Ռուսաբնակ Հայն մէկ կերպ կը խօսի, Վրաս-  
տանի Հայերն ալ մի տարբեր կերպով կը խօսին,  
այնպէս որ շատ դիւրին չէ մի Պօլսեցի Հայուն հաս-  
կանալ մի Թիֆլիսցիի խօսածն. նոյնպէս Թուրքա-  
բնակ Հայերու գոեհիկ բարբառն բաւական անհաս-  
կանալի է Ռուսի եւ Վրաստանի Հայերուն :

Ժողովրդային գաւառալեզուի այս տարբերու-  
թիւններէ զատ՝ մեր արդի դրական լեզուն ալ խառ-  
նակած է եւ այնպիսի գրիչներ կան՝ որ թէեւ ու-  
նին մի պարզ եւ իմանալի ոճ, բայց մերթ ընդ մերթ



անյայտի մութ ձեւեր կը գործածեն եւ անյայտի գրաբարեան դարձուածներ մէջ կը նեւոնն , որով մի անկի ապուր կը գառնայ նոցա գրուածն :

Արդարեւ Հայ լեզուն եւ դպրութիւնը կանոնաւորելու խնդիրն ժամանակ ժամանակ յուզուած է ազգիս մէջ եւ Հայ բանասէրներ զանազան առաջարկներ ըրած են նորա վրայ . բայց դեռ վերջնական որոշ եւ ընդհանուր դրութիւն կարելի չէրաւ հաստատուիլ : Քանզի այլ եւ այլ կարծիքներ իրարու դէմ բաղխիլով եւ վերջապէս անձնականութեանց յոռի շրջանին մէջ անկնիւրով լուծ են :

1873 Յունիսի մէջ էր : Ժողով կազմեր էին Պօլիսի վարժապետներն (\*). աղբայրն դաստիարակութեան վերաբերեալ խնդիրներ լուծելու համար . լեզուի խնդիրն վերջի անգամ յուզուեցաւ այս ժողովի մէջ ամենասաստիկ կերպով . անցեալի սերտեանչ եւ ներկայն արհամարհող հնապաշտ գլուխներ կը վիճէին քրքուրի համար , մինչդեռ իւրեանց ժողովանոցէ դուրս՝ անթիւ Հայեր , փողոցի մէջ , սրճարանի մէջ , նաւակի մէջ , կառքի մէջ , շողեւնաւու մէջ վերջապէս ամեն տեղ քրքուրի հայեր Հայերէնն իսկ խօսելէ հեռու էին . . . :

Նախ պէտք է այս տխուր վերքի դարձանն հոգալ . ս Հայ բանասէրներ , ինչ հարկ վէճերով

(\*) Վարժապետական ժողովի վրա աւելի ընդարձակ տեղեկութիւն առնել ուղղով մեր ընթերցողներն կ'ուզարկեմք Պ. Մ. Չերազի ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ անուն գիրքին , որ կը պարունակէ նաեւ հեղինակին այդ ժողովի մէջ խօսած ճառերն :

ժամաւաճառ լինիլ . ինչ սղուտ կ'ելնէ ապացուցանելէ թէ՛ գրաբարն մեռած է կամ ոչ . գործածական պիտի լինի կամ ոչ եւ այլն :

Աշխատիք , ս սիրելիներ , աշխատիք կայծ եւ բորբոք ծաւալել անդգայ Հայ սիրտերու մէջ , որպէսզի պատուեն եւ սիրեն իւրեանց ազգային լեզուն , որպէս անգին մնացորդ նախնի հարստութեանց . զգացունեմք այնպիսեաց թէ՛ թաղի կուրուստն անյաւան աղիտաբեր չէ մի ազգի համար , որքան լեզուի անկումն եւ մոռացումն :

Եւ մի ազգային լեզու ուրիշ կերպով չը կըրնար դերժ մնալ անկումէ եւ մոռացումէ բայց եթէ նորա գործածումն նուիրական պարտ եւ պարծանք համարելով ազգի անհասաներուն կողմէ :

Իսկ դու ս Հայ , դու՝ որ օտարի բարքին , սովորյթներուն եւ լեզուին սիրահար՝ դըոյսդ կ'արհամարհես , դու՝ որ օտարի հագուստին հետ կը հագնես նաեւ նորա սիրտն ու վարքն եւ մի լոկ ստուեր կը համարիս ազգայնութիւնն , դու՝ որ զինքդ աշխարհի քաղաքացի անուանելով կը ծաղրես եւ կը հեզնես ինչ որ տոհմային է եւ կուղես միայն քո ետութիւն յապեցունել . . . աւանդ կը ցաւիմ զի չը պիտի կրնաս եւ դու վայելել ներկայ եւ ապագայ սերունդներու սն ցանկալի օրհնեմքն .

ՕՐՀՆԵԱՂ ԼԻՆԻՆ ՆՈՒՔԱՆՆ ԸՄՅՈՒՆԵՆԵԱՅ ՀԱՄԱՐ ԱՊՐԵՅԱՆ ԵՒ ՄԵՌԱՆ :



ձեզ համար կը կազմէք ժողովներ, կը խմբադրէք կանոնադիրներ, կը կանգնէք պատրիարքարան, ազգապետարան:

Կան գործեր Հայութեան շրջանին մէջ ուր կրօնն մատ չունի, դուք հոգ ալ ձեռք երկնցուցած չէք:

Ազգութեամբ Հայ լինելէ վերջ, ունիք միթէ ուրիշ լեզու, ուրիշ գրականութիւն, պատմութիւն եւ անցեալ:

Ո՛հ, ինչ ցաւալի բան, տեսնել մի եւ նոյն ծառի վրա երկու շառաւիղներ յառաջ եկած, կուզեն իւրեանց կենսատու եւ հիւթեղ արմատէ՝ Հայութենէ անջատիլ, երթալ առանց ի յուշ ածելու թէ զովաւ կը կորուսնին իւրեանց սկիզբն եւ ծագում:

Այս ազգ բաժանումներու երեսէն ի կործանում մօտեցաւ. ճշմարիտ ազգասիրութիւն կը պահանջէ զի կրօնի պատրուակով մեր հայրենի եւ ազգային շահերն չը զատեմք:

Նոյն արտի մէջ սերմանեմք, քրտնիմք եւ նոյն արտի մէջ հնձեմք:

Այն ամեն ոք որ Հայ արիւն կը կրէ, կը պարտի ի շէն Հայ անուան աշխատիլ՝ օգնել՝ դրամ եւ խելք վատնել, եւ կրօնի խտրութիւններէ ազատ համազգային մէկ վարչութիւն ճանաչել, քուէ տալ եւ քուէ ընդունիլ:

Ահա լուսաւորութիւն, ահա առաջդիմութիւն:

Բայց մի այսպիսի համազգային եղբայրական միութիւն կազմելու համար կը պարտիմք բաց ի կրօնականէ ի մի ձուլել մեր ազգային, կրթական, քաղաքական շահերն, վերջապէս մի սիրտ մի ոգի մի նպատակի համար աշխատիլ:

### LԹ.

Հապա ուր թողումք կրօնի օտարամոլութիւնն ալ, որ իբր անաւոր թումբ երկար տարիներէ ի վեր կանգնած է ազգային առաջդիմութեան ընթացին առջեւ:

Ո՛վ դուք, որոց անքան սիրելի է Հայ բառն եւ Հայութիւն, դուք ո՞վ բոլոր Հայեր, մի Հայրենիք ունիմք որ թշուառ է, մի Ազգութիւն ունիմք որ բաժանումներու երեսէն տկարացած եւ ի կործանում մօտեցած է, ինչո՞ւ համար կրօնի պատրուակով մեր հայրենի եւ ազգային շահերն կը զատեմք:

Ո՛չ միթէ ամենա Հայ եմք իբր քաղաքական մարդ, միայն կրօնի պաշտամունքով տարբեր, էր ուրեմն մեր միտերու տարբեր համոզումներն կարող լինին բաժնել եւ տկարացունել Հայութեան քաղաքական ուժն, երբ Լուսաւորչական Հայերն կը ճշգրտին ո՞ր եւ է միջոցներով հայրենիքն չէնցունել եւ ազգն յառաջացունել, ինչո՞ւ հեռի կը փախին նոքա՝ որ արիւնով եւ անունով Հայ են:

Ի՞նչ փոյթ երբ կրօնի պաշտամունքով տարբեր լինիմք, Հոռոմէական դրութիւն սիրելի է ձեզ, եւ դուք Լուսաւորականին յառեալ էք, է՛հ, թող այնպէս լինի, բայց, ո՞վ իմ բաժանեալ Հայ եղբայրներ, մարդկային անհաստատ եւ սխալական համոզման համար էր կը մերժէք ձեր ծագում, էր ազգային գործերէ եւս ձեռք կը քարչէք, եւ առանձին



Եւ որովհետեւ տակաւին հետի եմք ազգութիւն եւ կրօն իրարէ զատ բաներ նկատելէ եւ քանի որ կրօնապէս տարբեր համոզումներ տաճող մեր ազգակիցներու դէմ դեռ մարած չեն մեր սիրտերու ռիւերն, ուստի Հայկական միութեան գործն ալ դեռ անկատար կը մնայ :

Վերջացունենք ուրեմն կրօնի համար մեր մէջ ատելութիւն մտուցնելն, մանաւանդ օտարի կրօնին մօլի կամ սիրատենչ չը լինիմք :

Ո՛ր անկեղծ, ջերմեռանդ եւ կրօնասէր Հայեր, ներեցէք զի այս դլուխ կնքելէ յառաջ մի հարց ուղղեմ ձեզ : —

Երբ մենք ամենս վերջի օր Քրիստոսի ատեանին առջեւ կանգնիմք դատելու համար՝ արդեօք պիտի հարցընի մեզ թէ որ եկեղեցւոյ կը վերաբերէինք, Քողոքական էիք թէ Լուսաւորչական եւ կամ Հռոմէական :

Տարօրինակ է անշուշտ մտածել թէ եկեղեցւոյ քննութիւն պիտի լինի :

Գիտէ՞ք ի՞նչ պիտի խնդրուի ի մէնջ .

— Քրիստոնէական կատարելութիւններ, Սրբիչի պատուէրներուն հնազանդութիւն եւ կատարողութիւն, կարճ խօսքով բարի եւ անմեղ կեանք :

Երանի մեզ երբ ունենամք այս կատարելութիւններն, եւ այդ դատաստանի օր աջակողմեան խումբի մէջ կոչուիմք՝ յաւիտենականի՝ շուրթերէ լսեմք սոս ցանկալի հրաւեր . « Եկէ՛ք իմ հօր օրհնածներ, ժառանգեցէ՛ք յաւիտեան ժամանակներէ ձեզ համար պատրաստուած տեղն . . . » :

Եւ իցէ՛ թէ յաւիտենականի այս ցանկալի հրաւերին հետ Քրիստոսի անուան համար ղրերնք նը-

ւիրող այնքան անթիւ նահատակներ ձայնէին մեզ համար սոս անուելի օրհնութիւնն .

ՕՐՀՆԵԱՎ ԼԻՆԻՆ ԵՌԻԱ՝ ՈՐ ՔՐԻՍՏՈՍԻ ՍԻՐՈՎՆ ԱՊՐԵՑՍԱՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ ՓՐԿԵՑԻՆ :

խ.

Միապետական ոգիի մնացորդն ալ ոչ նուազ խոչնդոտ է ազգային առաջդիմութեան :

Եւ եթէ այս վատ ոգիի մնացորդն չը լինէր Հայութեան մարմնոյն մէջ՝ շատոնց արդարեւ իրադրժբւած էր առաջդիմութիւնն :

Մի օր, տաս ութ տարիներ յառաջ մեր ազգութեան ասպարէղի մէջ մի պատերազմ սկսած եւ մի դերագոյն յաղթանակ ձեռք բերւած է . սակայն այս ճակատամարտի մէջ ոչ նիղակ, ոչ սուր շողացած էր, ոչ հրացան եւ ոչ թնդանօթ արձակւած էր . արիւններ թափւած չէին, քանդի այս պատերազմ բարոյական էր, քանդի Հայութեան պատուոյն եւ շահուն սպառնացող եւ զայն սպառող քարոյշական ճիւղներու դէմ էր : Սյդ պատերազմ ազգային անիշխանութեան եւ նորա սանձարձակ վարչական ընթացի դէմ էր : Միապետական ոգիներու, բռնաւորութեան եւ անարդ ու անկարգ վարչութեանց դէմ էր, որ այդ օր մի խրոխտ ամբարտապէս կանգնուած եղաւ, այսինք 1860, Մայիս 24ի օրհնեալ թուականին . երբ Հայութեան ամպոտ հորիզոնի վրա երեւեցաւ մի աւետաւոր հրեշտակ, Սահմանադրութիւնն էր այդ սիրելի աւետաւոր որ եւ կաւ միտթարիչի պէս՝ աւերակի եւ մոխիրի վրա



ողբացող ազգիս վհատ սիրտին քաջալեր եւ յոյս ընծայելու համար :

Եկան նա . . . ազատութեան այն զեփիւռ փշած ատեն այնպէս հովաներեց Արամեան սիրտերն, այնպէս բոցավառեց եւ այնպիսի շարժումի մէջ դրաւ զմեզ որով բաւական այլափոխ վիճակ զգեցանք :

Չարթեցանք մտապէս եւ խելամուտ եղանք թէ անկում եւ մեռելութիւն է այն ազգի ճակատագիր որ կը խորդայ անշարժութեան քունին մէջ . քիչ քիչ սկսեցինք ճանաչել թէ մի ազգի փրկութիւն եւ առաջդիմութիւն մտաւոր լոյսէ յառաջ կը գայ եւ սմա համար հարկ է որ նոյն ազգ կազմող ամեն անհատ հոգ եւ խնամ տանին սորա ծաւալման :

Սահմանադրական փարեւի սկիզբներ այսպէս խելամուտ ըրին զմեզ շատ կարեւոր ճշմարտութեանց , ճանչեցուցին մեզ միութեան զօրութիւնն , սիրոյ չքնազ արդիւնքներն եւ հասու ըրին թէ երբ պակսին այս հոգի տարրներ՝ քանի մեծ տուգանքներ եւ քիսաներ կը կրէ մի ո՛ր եւ է ժողովուրդ :

Ո՛հ , սահմանադրական դրութեան հաստատումն դեռ ինչ մեծ նորոգումներ յառաջ բերաւ Հայ սիրտերու մէջ , ինչպէս զգացումներն թօթափելով իւրեանց հին կեղեւներն՝ ստացան նոր առոյգութիւն . նուաւ ճանչեցինք մեր սխալ քայլերն եւ կամեցանք փոխել դայիս , ժամանակի մարդն լինիլ . լոյսի եւ ազատութեան սկիզբներով գործել ուղեցինք : Մաքրուեցանք անուսութեան եւ անտարբերութեան դէմ . զգացինք մեր ազգակիցներու ցաւերն եւ փափաքեցանք նոցա խաղաղութիւն եւ

ապահովութիւն : Յիշեցինք հեռաւոր Հայաստանն՝ այն հին դարերու արիւնստոզ գրախտավայր՝ ուրկէ անգութ բաղդն տարագրած է զմեզ . նորա աւերակներ ճմլեցին մեր սիրտն . տեսանք թէ անմահ քաջերու այդ օթեւաններ՝ աւազակ Ֆիւրտերու խոռոչներ դարձեր էին . կեանքի եւ պատիւի բռնաբարում , գոյքի յափշտակութիւն , ամեն կերպ խրժղրժական նեղութիւններ Հայաստանի բնիկին բաժին եղած էին :

Արդար նախանձու բորբոքեալ ուղեցինք ջընջել այդ կեղեքումներ , հալածել աւազակներն , շէնցունել աւերակներն եւ Հայութիւնն մօտալուտ կործանումէ փրկելու համար մի անհնարին փափաք մտաւ ամեն ճշմարիտ ազգասէր Հայ սիրտի մէջ :

Սակայն միթէ կը բաւէր այսչափն . ԿԱՄԲ ԶԳՍՅՈՒՄ եւ ԽՕՍԲ ամեն տեղ կը վխտային . սակայն գործի դալով ամեն ոք կը դիմէր այն Հայկական վաղեմի գէնքին որ մեր սուն քանդող բարոյական գլխաւոր թշնամին եղած է , այսինք Է՛ւրդէն :

Գեղեցիկ եւ վսեմ դադափարներով սողորւած՝ բայց գործի համար ճամբայ ելնող չը կար :

Ստոյգ է թէ սահմանադրութիւնն իւր տասութեամեայ ընթացի մէջ չուենցաւ մի յոյժ նշանաւոր արդիւնք , բայց երբ մի ո՛ր եւ է ազգ դարերով կը նիրհէ անհոգութեան բաստերանին վրա , երբ հողադուռի այս լայնատարր ընդարձակութեան մէջ ցիր ու ցան կը տարտղնի , երբ օտարներու հագուստին հետ կանգնի նաեւ նոցա սիրտ եւ վարք եւ մի լոկ ստուեր կը համարի ազգայնութիւնն , երբ օտարի ճակատագրին , բարքին , լեզուին եւ սովորոյթներուն սի-



րահար կարճամարձէ գիւրսն, երբ հայրենիքէ տարագիր Հայորդիներ օտար աստղներու փայլին ներքեւ աշխարհի քաղաքացի անուանելով զինքեանս՝ կը ծաղրեն եւ կը հեքնեն ինչ որ տոհմային է, երբ ետեւեւան թունալից եւ ազգաւէր օգն կը ծծեն եւ կը մոռնան ամեն բան, երբ յաճախ խնայելով սնձնական շահերն՝ կ'ոսնհարեմք ազգի շահերն. երբ չնչին եւ անհիմն պատճառներով եղբայր եղբօր դէմ հրացան կը սլարպեմք, երբ մեր անձի փառքն ազգային փառքէ նախամեծար կը համարիմք, երբ ծուլութեան շղթայներով կալ ու կապ եղած ազգին յայտնի թըշնամիներն իսկ ի պատուի կը սլահեմք. երբ վատապէս կը հեռանամք մեր այն եղբայրէ որ նեղութեան եւ տառապի մէջ է, երբ մի աղբակիցի փառք տեսնելով կը հակակրիմք նմա զի մի գուցէ նորա աստղի առջեւ մեր արեւ մարի, երբ ուրիշ մի համարիւն եղբայրիս փառք եւ զարդացում իմինիս պէս չեմ նկատեր, երբ ազգային խնդիրներու մէջ հանուրի կարծին հակառակ վարելով սնձնական շահերու կը փոխանակեմք ազգի իրաւունք եւ օգուտ . . . երբ կը սիրեմք միութիւնն. բայց մի կատարեալ միութեան պատկեր ընծայած չեմք, երբ հասկանալով պառակտումներու պատճառած անբուժելի վէրքերն՝ կ'ատեմք անհամաձայնութիւնն. սակայն բուն ազգախորական ողիով չեմք հեռանար կեղծաւորութենէ, երբ «անձնականութիւններ» հաճելու համար շատերու սրտին մէջ տխուր զգացումներ կը մխեմք մեր շողքորդ վարմունքով. երբ «կրթութիւն, լոյս» կը պօռամք եւ շարունակ աղիտութեան դէմ կը մաքառիմք եւ ոյր անուն լսած ատեն իսկ կը քարչիմք. սակայն ազգին մէջէ դայն իսպառ

ջնջելու համար հիմնաւոր միջոցներ եւ անյողողդ արիւթիւն չեմք ցուցներ, երբ շարունակ կը շարժիմք, բայց մեր քայլեր դայթ ի գայթ կը սահին ապարդիւն, երբ, կ'ասեմ, ամեն բանի մէջ ունիմք այս անկատարութիւններ, այս թերութիւններ, այս ազգաքանդ խլրտումներ . . . . միթէ այսպիսի հակասական ընթացով հնար է կը հարցունեմ, մի ազգի արդիւնաւոր զարդացում, մանաւանդ տաս ութ տարիի միջոցին, մինչ դարերու ձեռքով կամ ժամանակի անողոք մանգաղով ջարդուած եւ քայքայուած ամեն բան վերնորոգել կը կամիմք, երբ մեր բազմազարեայ քուն դեռ ի գլուխ, մեր ծանրացած աչերն չիել ու չիել կը դադարիմք . . . . :

Ուրեմն կարճ եմք միթէ մեղադրել Սահմանադրութիւնն իբր անօգուտ դրութիւն Հայ Ազգի համար. երբ նորա անյաջողութեան զլլաւոր պատճառ նոյն իսկ մեր հակազգային զգացումներն են :

Վատ է այն Հայորդին որ մի այսպիսի ապագայ բերքերով յղի արդանդն այսինք Սահմանադրութիւնն կը քամահրէ :

Հաղար անգամ, բլբր անգամ անիծեալ է այն Հայ որ իւր սիրտն անձնասիրութենէ, ետեւեւանէ, վատութենէ, մատնութենէ, օտարամոլութենէ եւ այսպիսի անարգ ու աղբակործան զգացումներէ չը մաքրած՝ ազգի այս փրկաւէտ արչալոյսն անարգել կը ժպրհի :

Հաղար անգամ անիծեալ է այն Հայն որ անչեւի աղեաւոր փորձերէ խրատել չը կամիր եւ չը մերկիր այն ամեն վատ զգացումներ եւ կիրքեր՝ որ քանդ ու աւեր դարձուցին մեր հայրենի տունն :

Արդարեւ մինչ ցարդ Սահմանադրութիւնն ու-



նեցաւ բաղում թշնամիներ եւ հակակիրներ , որք ողի ի բռնն ջլատել կամեցան նորա հուժիւնն . միապետական ողիներու մնացորդներ՝ որք իւրեանց հակակրութիւններով անհնարին խոչնդոտներ եղան ազգային առաջդիմութեան :

Նոքա վաղեմի անարդ դրութեան սիրատենչ եւ ժողովուրդի չէզոք դիրքէն ախորժելով կ'ատէին Սահմանադրութիւնն, անցեալ գաղափարներու մոխրակոյտէ փիւսիկի պէս ծնունդ կ'առնէին եւ կը սրպղդէին ախորժի եւ ժողովներու մէջ , որպէս զի տապալեն զայնս :

Սակայն ժողովուրդի ողին ալ Սահմանադրութեան անշէջ չուրով բարբոքեալ՝ միշտ կը ձգվէր այն Հիդրայական գլուխներ՝ որ բռնաւոր դարերու վերանորոգման համար կը տքնէին , նոքա կը նկըրտէին զի ազգային շահերն եւ իրաւունքներն դործածեն ըստ քմաց :

Բայց ժողովուրդն իւր սիրելի Սահմանադրութեան փարեալ՝ միշտ կը պահէր եւ կը պաշտպանէր զայն , քանզի նորա հակառակորդներու ջանքին հակառակ նա համոզւած էր թէ այս դրութեամբ միայն կարելի էր ստանալ իւր դործերու օրինաւոր կարգադրում :

Սահմանադրութիւն . . . ո՛հ , այս դգուելի աւուն , երբ առջի անգամ տարփողեց Հայ ականջներու , անխիստանութեան ապաւինեալներն սարսափով լեցեցան , քանզի գահի եւ բարձի տապալումն եւ հաւասարութեան սկիզբին յաղթանակն կ'աւետէր :

Հաւասարութիւն . արդարեւ պաշտելի բառ , զոր Յիսուս իսկ աշխարհիս քարոզեց անդուլ 33 տարի շրջելով . . . :

Սակայն արդեօք դարմանալի չէր այնպիսի անձերու վարմունքն որ մի ազգաւեր ճիգով խեղդել կըսպառնային այդ օրրանի մանուկն . հաւասարութեան հարազատ ծնունդ ցանկալի Սահմանադրութիւնն , զոր մինչ իսկ Վասակներու , Մերութեաններու , չնիրակոտներու եւ Վեստ-Սարգիսներու բընածին մատնութեամբ յաջողեցան առժամա խափանել տալ սոսկալի զրպարտութիւններ նիւթելով եւ Հայ Ազգի առ Օսմանեան պետութիւն ունեցած դարաւոր հաւատարմութեան վրա յանիրաւի կասկած հրաւիրել տալով :

Ո՛հ , նոցա իրարանցում այն էր թէ՛ ժողովուրդն տակաւ կը դարթէր իւր մեռելատիպ թմրութենէ եւ իւր հանրական շահերու եւ իրաւունքներու արդարապէս մատակարարումն խնդրել կըսկէր :

Ազգային պաշտօնատարներու ազգապլաս աբարքներն քննադատելի սկսած էր , եւ հասարակաց կարծեաց դատաստանէն կը ձաղկըւէր , ուստի եւ այս պատճառով « Ատի մեծ աօրսամբութիւն է , ատի յեղափոխութիւն , տէրութեան մէջ տէրութիւն կանդնել է » ըսելով երկու անգամ պետական հարուածներ փութացուցին նորածին Սահմանադրութեան վրա :

Սակայն ճշմարիտ սահմանադրականներ բնաւ չը վհատեցան , զիւցադնական ողիներ՝ Հայկի եւ Աբամի , Տիգրանի եւ Վարդանի ողիով վառւած՝ թէպէտ սուր ի ձեռին չը յարձակեցան Սահմանադրութեան հակառակողներու դէմ , սակայն նոցա ոյժն խորտակելու համար անվատ կուրծ տալով անկործան պանեցին այդ օրինազիր ցարդ փորձառական վերաքննութիւններով կատարելադործել աշխատելով :



Աւանդ, ինչ ազմուկներ, ինչ վէճեր եւ հակառակ կարծեաց սրբան վայնասուններ տեղի ունեցած է ազդային Սահմանադրութեան տասութամեայ շրջանի մէջ, զոր մի առ մի թըւել երկար կը լինի :

Բայց դիտելի կէտն սա է թէ Պօլիսի Հայ երիտասարդութիւնն սահմանադրական անչէջ եռանդով բորոքեալ՝ նորա արկածայի միջոցներու մէջ իսկ 1860 ի այն օրհնեալ թուականի Ամադարձն կը տօնէր Վոսիօրի աիերուն վրա Հիւնքեար-Նսքէլէսի մարդին մէջ :

Հայ երիտասարդութիւնն կը սիրէր, կը հռչաչակէր սահմանադրական սկիզբն եւ գո՞հ էր ի նմանէ սրբան եւ իւր ներքին աներու թշնամիներ միշտ կը ջանային ի թակարդ ձգել դայն . . . . :

Սակայն եւ այնպէս միապետական դրութեան վրա սահմանադրական սկիզբն յաղթանակեց եւ Ազգին համար անցան այլ եւս այն դառն օրեր :

Սահմանադրութիւնն տաս ութ տարի միակերպ քարկոծւելէ եւ անձնականութիւններու յոռի շրջանին մէջ անկնիլ ու դեղերիլէ յետոյ այսօր բաւական ժպտագէմ կ'ողջունէ Հայ Ազգն :

Օ՛հ ուրեմն, Հայ դաւակներ, Հայ օրիորդներ, իմ անուշ հայրենեաց անուշաբոյր բայց ոստաքանց ծաղիկներ, աշխոյժ մանկութիւն, առողջութիւն, զուարթութիւն, ուրախութիւն, յոյս գեղածիժաղ, դուք ալ ցնձացէք եւ երգեցէք, օրհնութիւններով եւ փառքերով թնդացուցէք Հայկական աշխարհն : Երգեցէք եւ դրուատեցէք այն ամեն անձի անունն որ ազգին շնորհել սըւլին մի փրկուէտ Սահմանադրութիւն :

Իսկ դուք Հայ երիտասարդներ, ո՞ իմ եղբայրներ, իմ հայրենակիցներ, հանապաղ յիշեցէք զի Սահմանադրութիւնն չսա նուիրական պարտեր կը դնէ մեր վրա :

Ձեր մէջէ մի ոք չը կարծէ բնաւ թէ Սահմանադրութիւն բառն՝ տարին մի անգամ ժողովիլ, մի քանի ժամ հրճուիլ, երգել եւ դարձեալ ցրել կը նշանակէ, ո՞չ, այս չէ Սահմանադրութիւնն :

Սահմանադրութիւնն մի այնպիսի ճշմարտութիւն է զոր առջի անգամ Արարիչն դրաւ Առաջին մարդուն վրա . . . . : Ուրեմն Սահմանադրութիւն նոյն իսկ մի աստուածաշնորհ օրէն է, աշխարհի սկիզբէն ի վեր հաստատւած :

Սահմանադրութիւնն մի ուղեցոյց է ժողովուրդներու ձեռքին մէջ, որ մասնանիչ կ'անէ նոցա պարսն եւ իրաւունք, որ արդարութեան սահմաններով կը գծէ ամեն պաշտօնատարի իշխանութիւն եւ իրաւասութիւն . մի բան՝ Սահմանադրութիւնն բնական եւ բնկերական իրաւունքներու վրա հիմնուած մի քաղաքական օրէնի արդար անօրէնութիւնն է, ոյր ողին եւ սկիզբն մեր ազգ ունեցած է անցեալ դարերէ ի վեր գէթ կրօնական մասին :

Ո՛վ Հայ երիտասարդներ, իմ յարդի հայրենակիցներ, ի՞նչու վերջացունելէ յառաջ դարձեալ կ'ըսեմ թէ՛ մեր տարիէ տարի կատարած սահմանադրական տարեդարձներն լոկ մի քանի ուրախ ժամեր անցունելու նպատակով չէ, այլ զգալ եւ ըզդացունելու համար թէ Հայ Ազգն որ առաջդիմել կը կամի, յաճախ այդպիսի միաբանական հանդէսներու մէջ ուսնիլ կը կարօտի իւր բարոյական թըշնամիներն : անդ կը պարտի տեսնել իւր առաջդի-



մութեան խոչնդոտներն եւ արմատախիլ ընել զայնս :

Ուստի Հայ երիտասարդներ, իմ յարդի եւ սիրելի հայրենակիցներ, զորս այնքան կը սիրեմ, ամեն անգամ որ պիտի ցրւիմք սահմանադրական տարեգարծի մէկ հանդէս կատարելէ յետոյ՝ մեր ուղեղի մէջ տողորւած պահեմք Ազգ սիրելու, Գպրոց սիրելու, Կրօն սիրելու մեծ ու վսեմ եւ ազգաշէն գաղափարներն :

Մտածուկ կամ յայտնի հակառակութիւններն թօթափեմք մեր վրաէ եւ ամենքս մի սիրտ, մի ոգի եղած հանապաղ ազգային օգտի առջեւ զոհեմք մեր եսութիւնն, մեր անձնական կիրքեր եւ ատելութիւններ, եթէ կան :

Եւ յայնժամ մեր շուրթեր թող գոչեն ցնծաւիւր .

ՅԱՒԵ՛Ժ ԱՊՐԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ :

Եւ ամեն ճշմարիտ ու անկեղծ սահմանադրականներ թող ազազակեն անլուրի ձայնով .

Օրհնեալ լինին նոքա՝ որ կը մերկանան իւրեանց եսութիւնն :

Օրհնեալ լինին նոքա՝ որ կը ճղմեն առաջգիւմութեան խոչնդոտներն :

Օրհնեալ լինին նոքա՝ որ կ'ապրին ու կը մեռնին հայրենիքն սպրեցունելու համար :

Վ Ե Ր Զ

Սիրելի Հայ Ազգ

Մնաս բարով

Հոս կ'աւարտեմ անա իմ խօսակցութիւն, եւ կ'ընծայեմ այս Գիրքս հանուր Հայ ազգի անհատներուն, կղերին եւ աշխարհականին, հարուստին եւ աղքատին, վաճառականին եւ արհեստաւորին, զըրազէտին եւ տգէտին :

Մասնաւորապէս Հայ վարժապետին եւ աշակերտին կ'ընծայեմ դայս, ուր վարժապետն պէտք է կարգայ եւ զգայ Հայութեան պարտերն եւ պէտքեր, եւ յետոյ ուսուցնէ եւ զգացունէ իւր մատաղատի աշակերտներուն :

Երբ Ազգիս դաստիարակներն առանց եսութեան եւ հպարտութեան ընդունիլ յօժարին իմ այս ջնջին նուէր եւ զայն իւր նպատակին ուղղել նկըրտին, ս՛հ, իմ բոլոր քիրտեր այժմէն անա կը փոխարինւին :





Վ Ր Ի Պ Ա Կ Ք

	ՍԻՍԼ	ՈՒՂԻՂ	
ԵՂ	Տ՝Ղ		
Ե	41	յեայոյ	յեախն
41	6	վտանգիլ	վտանգել
—	12	սրաի	որդի
46	41	ւորիլ	վառաւորիլ
47	10	վերջ	վերջապէս
20	5	կունելով	կուելով
26	2	հայրենեաց	հայրենատեաց
—	5	ջայնով	ձայնով
—	14	ձոխութիոնն	ձոխութիւնն
—	23	ոխնակոխ	ոսնակոխ
—	26	ունկցածն	ունկցածն
29	25	ուշադրէք	ուշ դրէք
31	6	չուղէք	կուղէք
37	22	չորթեր	չուրթեր
38	4	ի թագաղ	ի դագաղ
—	41	խրատելու	խրատելու
—	23	կը կաշկանդին	կը կաշկանդեն
—	—	կը մարին	կը մարեն
39	49	խաղաղութիւն	խաղաղութիւն
—	23	թչնամիներդ	թչնամիներդ
40	30	ի ձերին	ի ձեռին
46	22	բարձրացունողն	նուաստացունողն
55	31	բերող իսկ	բերող
56	21	ազգականուոյ	ազգականուհուոյ




## ՍԻՍԼ


## ՈՒՂԵՂ

Էջ	Տ-չ		
62	29	խօքեր	խօսքեր
70	16	եթէ	եթէ ոչ
—	27	բոցաթիւ	բոցաթիւ
76	31	կը մեկնի	կը մեկնին
77	3	ծառաւով	ծարաւով
78	18	մէջ	մէջ ծնած
82	21	ուրիշ	ուրիշին
84	13	մի աճապարեցէք	մի աճապարէք
86	16	կը դուին	կը դուին
88	27	կը դրդեմք	կը դրդիմք
89	12	բարի	բարքի ,
106	11	վերցան	վերջացան
—	18	սիրով	սիրտով
110	2	ի շոսյլութիւն	ի շոսյլութիւն կը տանի
119	9	պիտի միացունես	պիտի մեռցունես
122	12	մի	մի
139	14	կը կորուսնին	կը կորուսնեն
143	29	կանգնի	կը հաղնի











1696

1696

0025784

« Ազգային գրադարան



NL0025784



